ԷՋՄԻԱԾԻՆ

ՌՆԸ

ԺԵ ՏԱՐԻ

Դեկտեմբեր

ԷՋՄԻԱԾԻՆ

691

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

ԺԲ

1958



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Սահմանադրության նախագիծը 3

Հայաստանում սովետական կարգերի հաստատման 38-րդ տարեդարձի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հղած շնորհավորական հեռագրերը և ստացված պատասխանները . . . 7

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և Անթիոքի ու Համայն Արևելքի նորընտիր Պատրիարք Թեոդոսիոսի միջև փոխանակված հեռագրերը 9

ՎԱՂԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ— Կոչ Լիբանանի հայ ժողովուրդին 10

ՀՈՒՍԻԿ ԱՐԵՂԱ ՍԱՆԹՈՒՐՅԱՆ— Գավիթ մարգարե 12

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Սահմանադրության նախագիծ 15

Քաղվածքներ Գեղարդյան Հոգևոր Խորհրդի նիստերի արձանագրություններից 29

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ 31

Հայրապետական բարձր գնահատություն 33

ՀԱԿՈԲ ՍԱՐԿԱՎԱԳ ՊՈՂԱՊԱՅԱՆ— Բասարգեչարի Սուրբ Աստվածածին եկեղեցու վերաբացումը 34

ՊՍԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԹՈՒՄԱՅԱՆ— Լամբեթի ժողովը . . . 36

Միլանոյի հայոց Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցու օծումը . . 40

Աշոտ Պատմագրյանի երաժշտական-կրթական գործունեության քառասնամյա ճորեկյանը Փարիզում 43

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼԱՄԴԱՐՅԱՆ— Էջեր Սուրբ Էջմիածնի տպարանի պատմությունից 45

ՊՐՈՖ.-ԳՈՆՏ. Ե. ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ— Դարձյալ Հառիճա վանքի արձանագրությունները և Միհաս քահանա Հարությունի Վահանյանը . 52

Հ. ԵՂԻԶԱՐՅԱՆ— Սահանինի վանքը 58

Ս. Ս.— Համառոտ լուրեր Մայր Հայրենիքից 63

Հանգիստ արժանապատիվ Տ. Շմավոն ավագ քահանա Կարամբեյանի . 66

Հանգիստ արժանապատիվ Տ. Հուսիկ քահանա Միրզոյանի . . 66

Հանգիստ արժանապատիվ Տ. Վահան ավագ քահանա Մկրտչյանի . 67

Հանգիստ արժանապատիվ Տ. Գարեգին քահանա Խաչատրյանի . . 67

Ցանկ «Էջմիածին» ամսագրում 1958 թվականի ընթացքում տպագրված նյութերի 68

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ. ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magazine „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1958 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱՉԳԵՆԱՑ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ

Տորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ հոկտեմբեր ամսի 16—23 օրերին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գումարված Եպիսկոպոսական ժողովում քննված կարևոր հարցերից մեկն էր նաև Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու Սահմանադրության նախագծի քննարկումը:

Եպիսկոպոսական ժողովը իր Գ, Դ, և Ե հաջորդական նիստերի ընթացքում հանգամանորեն և հոդված առ հոդված քննարկեց ներկայացված նախագիծը:

Եպիսկոպոսական ժողովը մի շարք փոփոխություններից և լրացումներից հետո, քննված և վերաստրագրված նախագիծը ներկայացրեց Վեհափառ Հայրապետին:

Սահմանադրության վերանայված այդ նախագիծը Գերագույն Հոգևոր Խորհրդի 1958 թվականի նոյեմբերի 13-ի նիստում քննության առնվելուց հետո Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ տպված, արդեն իսկ հղված է մեր նվիրապետական բոլոր Աթոռներին ու թեմերին, ի գիտություն և ի քննարկում, որից հետո, Գերագույն Հոգևոր Խորհուրդը նկատի առնելով ժողովրդական քննարկման առիթով եղած նոր առաջարկություններն ու դիտողությունները, կկազմի Սահմանադրության վերջնական նախագիծը, այն ներկայացնելու համար ի հաստատումն 1960 թվականին գումարվելիք Ազգային-եկեղեցական արտագումար ժողովին:

Եկեղեցական Սահմանադրության նախագծի կազմության հարցը հին է և ունի իր պատմությունը:

Եկեղեցական Սահմանադրության մի նախագիծ առաջին անգամ ներկայացվեց 1945 թվականին Ս. Էջմիածնում գումարված Ազգային-եկեղեցական պատգամավորական ժողովին: Համազգային արտագումար ժողովը իր երրորդ նիստում, հոկտեմբերի 19-ին, քննության առավ այն և Սահմանադրության նախագիծը գտնելով թերի, որոշեց պարտավորություն դնել Գերագույն Հոգևոր Խորհրդի վրա՝ վերամշակել այն և թեմերի բելադրություններն ու դիտողությունները լսելուց հետո, արտագրված, ներկայացնել Ազգային-եկեղեցական ժողովին:

1955 թվականին, Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Նորընտիր Հայրապետի նախագահության տակ գումարված Ազգային-եկեղեցական ժողովը, հոկտեմբերի 5-ի իր երրորդ նիստում քննության առավ Սահմանադրության հարցը: Ժողովի գումարումից առաջ Մայր Աթոռում կազմվել էր հինգ եպիսկոպոսներից բաղկացած մի հանձնաժողով, Սահմանադրության հարցով զբաղվելու և ժողովում զեկուցելու համար: Հանձնախումբը ուսումնասիրեց Սահմանադրության նախագիծը, ունեցավ գաղափարների փոխանակություն և եկավ հետևյալ եզրակացության. «Սահմանադրության ծրագիրը թեև լուրջ կերպով ուսումնասիրված է, սակայն այն չի գոհացնում արտասահմանյան թեմերի պահանջներն ու պայմանները. դրա համար առաջարկվում է, որ այն հանձնվի նոր կազմվելիք Գերագույն Հոգևոր Խորհրդին, որպեսզի վերջինս ավելի լայն կերպով ուսումնասիրելուց հետո, թեմի Ազգային եկեղեցական ժողովին ի վավերացումն»:

Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա ճորընտիր Հայրապետը իր բնարությունից հետո անձամբ զբաղվեց եկեղեցական Սահմանադրության նախագծի վերամշակման հարցով և այդ մասին անդրադարձավ Կաճիրեի Եպիսկոպոսական ժողովում:

Կաճիրեի Եպիսկոպոսական ժողովը, որ մարդանական և օրինավոր գտնելով Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի բեղադրությունը, միաձայնությամբ որոշեց կազմել եկեղեցական Սահմանադրությամբ զբաղվող բարձրաստիճան հոգևորականների մի հատուկ մարմին, որն իր եզրակացությունը պետք է ներկայացներ Գերագույն Հոգևոր Խորհրդին, որպեսզի վերջինս էլ այն «վերանկատառության ենթարկելե հետո հղե թեմերը, անոնցմե ալ նկատողություններ ստանալե ետք՝ տա մեր Սահմանադրության նախագծին իր վերջնական ձևը»:

Կազմված հանձնախմբի մեջ մտնում էին, Երուսաղեմի Պատրիարքական տեղապահի նախագահությամբ, Տ. Տիրան արքեպիսկոպոսը, Տ. Նորայր և Տ. Դերենիկ եպիսկոպոսները: Երուսաղեմի դեպքերի պատճառով այդ հանձնախումբը իրեն հանձնարարված աշխատանքը չկարողացավ կատարել: Տ. Նորայր և Տ. Դերենիկ արքեպիսկոպոսները, սակայն, կազմել էին մի նախագիծ և այն ուղարկել Մայր Աթոռ 1957 թվականին:

Կազմվող եկեղեցական Սահմանադրության կապակցությամբ Կաճիրեի Եպիսկոպոսական ժողովում որոշվեց.

1) Նոր կազմվող եկեղեցական Սահմանադրության մեջ ի նկատի առնել Եպիսկոպոսական ժողովի գոյությունը, համաձայն 1955 թվականի Ազգային-եկեղեցական ժողովի որոշման:

2) Եկեղեցական Սահմանադրությունը պետք է ունենա հատուկ կարգավորություն, որտեղ որոշ կերպով հստակորոշված լինեն Գերագույն Հոգևոր Խորհրդի, Եպիսկոպոսական ժողովի, Ազգային-եկեղեցական ժողովի իրավասությունները և սահմանները, առարկայական պայմաններ, առաջքն առնելու համար այնպիսի անպատեհությունների, որոնք հաճախ սպառնում են եղծել, խաթարել Հայաստանյայց Առաքելական եկեղեցու իսկական դիմագիծը և ազգային-եկեղեցական միասնությունը:

3) Եկեղեցական Սահմանադրության մեջ ընդգրկվի իր ամբողջության մեջ Հայաստանյայց Առաքելական եկեղեցին, իր բոլոր նվիրապետական Աթոռներով, և հստակորոշվեն նվիրապետական Աթոռների իրավասության և փոխհարաբերության սահմանները:

Հայաստանյայց եկեղեցին բազմադարյան գոյություն ունի, բայց մինչև այժմ նա չունի իր հաստատված, գրավոր, որոշ ձև ստացած եկեղեցական Սահմանադրությունը:

Անցյալ դարի 30-ական թվականներից սկսած, փորձեր կատարվեցին կազմելու եկեղեցական սահմանադրություններ Հայ եկեղեցու ընդհանուր ղեկավարության համար:

Այդպիսի սահմանադրություններից մեկը հաստատվեց «ՊՈԼՈԺԵՆԻԱ»-ն (1836 թ.), իսկ մյուսը՝ «ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ»-ը (1863 թ.):

Ցարական Ռուսաստանի պայմաններում Հայ եկեղեցու և պետության հարաբերությունները սահմանվեցին և ճշտվեցին «ՊՈԼՈԺԵՆԻԱ»-յով կամ «ԽԱՐԶՐԱԳՈՒՅՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ» կոչված կանոնադրությամբ, «յաղագս կառավարութեան Լուսաւորչական հայոց ի Ռուսաստան»:

Պոլոժենիան ցարական Ռուսաստանի կառավարության կողմից մշակված օրենք էր, կազմված Հայ եկեղեցու ղեկավարության համար: Պոլոժենիայի հիմնական սկզբունքներով Հայ եկեղեցին պետության մեջ ճանաչվում էր որպես իրավական անձ, իսկ հայ ժողովուրդը՝ որպես կրոնական-մշակութային համայնք:

Թուրքիայում, Օսմանյան պետության հետ Հայաստանյայց Առաքելական եկեղեցու հարաբերությունները սահմանված ու ճշտորոշված են եղել «ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ» անունը կրող կանոնադրությամբ, որն իր վերջնական ձևը առավ ու սուլթանի կողմից վավերացվեց 1863 թվականի մարտի 17-ին:

«Պոլոժենիա»-ն և «Ազգային Սահմանադրություն»-ը մեր ազգային-եկեղեցական ավանդություններին և հայ հոգուն անհարազատ, վերևից պարտադրված պետական կանոնադրություններ էին, որոնք ոչ մի չափով վտանգի ժամին չէին կարող և արդարև չկարողացան էլ ապահովել ո՛չ Հայ եկեղեցու ինքնուրույնությունն ու անկախությունը և ո՛չ էլ հայ ժողովրդի ինչքը և կյանքը:

Այսօր այդ բոլորը անցյալի խոսուր և դառն հուշեր են միայն: «Պոլոժենիա»-ն անցել է պատմության արխիվը: Իսկ ինչ վերաբերում է «Ազգային Սահմանադրության», նա այսօր գործադրելի է մասամբ միայն Թուրքիայում հայ եկեղեցական կյանքի նկատմամբ և շատ անորոշ ու տարտամ կերպով Սիրիայում և Լիբանանում, առանց իրավական ճանաչման տվյալ պետությանց: Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը մինչև այսօր էլ չունի պետականորեն հաս-

նաչված և եկեղեցականորեն վավերացված իր տատուն:

Իսկ Սփյուռքում ցրված հայ համայնքները, մեր առաջնորդական թեմերը դեկավարվում են Ազգային Սահմանադրությունից վերցված կամ ներշնչված որոշ սկզբունքների, կանոնների հիման վրա՝ տեղական պետական օրենքներին և կյանքի պայմաններին պատշաճեցված ներքին կանոնադրություններով: Այդ կանոնները ընդհանուր բնույթ կրող ժողովրդավարական սկզբունքներ են եկեղեցական, ազգային մարմինների ընտրության և գործունեության վերաբերյալ, և որոնք նվիրագործված սկզբունքներ են մեր եկեղեցու, ինչպես նաև այլ ժողովրդավարական եկեղեցիների համար:

Հայաստանյայց Առաքելական եկեղեցին, այսօր ավելի քան երբևէ, կանգնել է իր նոգևոր, կազմակերպչական-վարչական կյանքն ու գործունեությունը պատկերացնող, կանոնավորող, եկեղեցական մի ընդհանուր ու միասնական Սահմանադրություն ունենալու անհրաժեշտության առաջ, մի Սահմանադրություն, որն իր ընդհանուր գծերի մեջ ընդգրկի մեր Ս. Եկեղեցու ամբողջականությունը, իր պատմական կենտրոն Ս. Էջմիածինն ունենալով որպես գլուխ, իր նվիրապետական բոլոր Աթոռներով, թեմերով և բովանդակ հավատացյալ ժողովրդով:

Մեր եկեղեցու վարչական-կազմակերպչական կյանքի համար կենսական նշանակություն են ունեցել 64 կանոնադրությունները՝ Առաքելոց և Ս. Հարց, տիեզերական և տեղական ժողովները, մեր եկեղեցական կանոնագրքերը, հայրապետական կոնդակները ու հրահանգները և եկեղեցական-պետական փոխհարաբերությունների վերաբերող գրությունները:

Հիմք ունենալով այս աղբյուրները և միաժամանակ նկատի առնելով 1945, 1955 թվականների և Տ. Նորայր ու Տ. Դերենիկ եպիսկոպոսների նախագծերը, ինչպես և ժամանակի ոգին ու պահանջները, Գերագույն Հոգևոր խորհուրդը կազմել է Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու Սահմանադրության նախագիծը, որ վերաքննվելով 1958 թվականի եպիսկոպոսական ժողովի կողմից, ստացավ իր այժմյան ձևը:

Սահմանադրության նախագիծը բաղկանում է 11 գլուխներից և 135 հոդվածներից:

Մշակված Սահմանադրության նախագծի մեջ մտնում են հետևյալ գլուխները.

1. Հիմնական սկզբունքներ.
2. Հայաստանյայց Առաքելական եկեղեկու նվիրապետությունը.
3. Ազգային-եկեղեցական ժողով.
4. Ամենայն Հայոց Կաթողիկոսը.
5. Գերագույն Հոգևոր խորհուրդ.
6. Եպիսկոպոսական ժողով.
7. Մայր Աթոռի միաբանություն.
8. Հայաստանյայց Առաքելական եկեղեցու նվիրապետության մասնավոր Աթոռներ:
   ա) Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսություն.
   բ) Սուրբ Երուսաղեմի Հայոց Պատրիարքություն.
   գ) Թուրքիայի Հայոց Պատրիարքություն.
   դ) Թեմական առաջնորդություններ, եպիսկոպոսական Աթոռներ.
   ե) Հոգևոր ճեմարաններ.
   զ) Վանքերայք.
9. Եկեղեցիների եկամուտներ.
10. Ընտրական իրավունք և ընդհանուր տրամադրություններ.
11. Սահմանադրության վերանայում:

Սահմանադրության «Հիմնական սկզբունքներ»-ի բաժնում կամ Ա գլխում հրատակորեն ասվել և բանաձևվել է, որ «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՊԱՏԿԱՆՈՒՄ է ԱՐԵՎԵԼՔԻ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԽՄԲԻՆ. ՆԱ ՊԱՏՄԱԿԱՆՈՐԵՆ ԾՆՈՒՆԴ է ԱՌԵԼ, ՁԱՐԳԱՑԵԼ ՈՒ ԿԱՋՄԱԿԵՐՊՎԵԼ ՈՐՈՒՅՑՆ ԵՎ ԻՆՔՆԱՎԱՐ ԿԵՐՊՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ», որ՝ «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԻ է ԵՎ ԱՆԲԱԺԱՆ», որովհետև «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԲՈԼՈՐ ԱԹՈՌՆԵՐԸ ԿԱՋՄՈՒՄ ԵՆ ՄԻ ԱՆԲԱԺԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ, ՈՐԻ ԳԼՈՒԽՆ է ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆԸ» (հոդված 16), իսկ «Ս. ԷՋՄԻԱԾԻՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՄԱՁԳԱՅԻՆ ՍՐԲԱՎԱՅՐՆ է ԵՎ ՄԱՅՐԱՎԱՆՔԸ, ԿԵՆՏՐՈՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ (հոդված 7):

Ամենայն Հայոց Կաթողիկոսը իրավատեր ներկայացուցիչն է, որպես Գլուխ և Գերագույն Պետ Հայաստանյայց Առաքելական եկեղեցու և հավատացյալ հայ ժողովրդի, Հայ եկեղեցին ներկայացնում է ի կոչմանե և ի պաշտոնե, իրավունքների լիությամբ՝ հավատացյալ ժողովրդի, պետությունների, միջազգային օրենքների, միջազգային ժողովների, պետությունների և այլ կրոնական պետերի, եկեղեցիների և միջեկեղեցական ժողովների առաջ, անձամբ կամ իր լիազոր ներկայացուցիչների միջոցով» (հոդված 53):

Ըստ Սահմանադրության նախագծի, Հայաստանյայց Առաքելական եկեղեցու վարչությունը կազմակերպվում է ժողովր-

դավարական սկզբունքներով և ղեկավարվում՝ ժողովրդական ընտրական սկզբունքներով (հոդված 12—14), և որի ընդհանրական և բարձրագույն վերատեսուչն է Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Հայաստանյայց Առաքելական եկեղեցու կանոնադիր, կարգադիր և համարտու «Գերագույն Իշխանությունը մարմնավորվում է ի դեմս Ազգային-եկեղեցական սրբազումար ժողովի և անձնավորվում՝ հանձին Ամենայն Հայոց կաթողիկոսի» (հոդված 18—19):

Հայաստանյայց Առաքելական եկեղեցու նվիրապետությունը կազմում են.

ա) Ամենայն Հայոց կաթողիկոսությունն ի Ս. Էջմիածին.
բ) Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը.
գ) Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունը.
դ) Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքությունը (Թուրքիա).
ե) Թեմական առաջնորդությունները, եպիսկոպոսական Աթոռները.
զ) Հոգևոր հովվությունները.
է) Վանորայք:

«Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսական Աթոռը անբաժանելի մասն է Հայաստանյայց Առաքելական եկեղեցու նվիրապետության, և ի հոգևորս ենթակա է Ամենայն Հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, սիրո և միության ոգով» (հոդված 76):

«Երուսաղեմի Պատրիարքական Ս. Աթոռը անբաժան մասն է Հայաստանյայց Առաքելական եկեղեցու նվիրապետության և ենթակա Ամենայն Հայոց կաթողիկոսության, պահելով Հայաստանյայց Առաքելական եկեղեցու ծոցում իր ուրույն տեղը, որպես ատամանորեն հիմնված և զարգացած Առաքելական Աթոռ» (հոդված 88):

«Թուրքիայի Հայոց Կոստանդնուպոլսի Պատրիարքական Աթոռը, իբրև անբաժան մասը Հայաստանյայց Առաքելական եկեղեցու նվիրապետության, ենթակա է Հայաստանյայց Առաքելական եկեղեցու Գլուխ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսության» (հոդված 97):

Թեմական առաջնորդները կամ եպիսկոպոսական Աթոռները ներկայացնում են Հայաստանյայց Առաքելական եկեղեցու տեղական իշխանությունը:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ, իր ընդհանուր գծերի մեջ, եկեղեցական Սահմանադրության օրենքները գծող մի կանոնագրություն է, որն ԸՆԴԳՐԿՈՒՄ է ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՄԲՈՂՋ ՄԱՐՄԻՆԸ և որտեղ ժողովրդավարական սկզբունքների վրա, և միաժամանակ մեր դարավոր եկեղեցու հոգևոր ավանդների, կանոնների լույսի տակ և ազգային ոգու պահպանմամբ, նշմարոշված են Հայաստանյայց Առաքելական եկեղեցու ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ, ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻ ՈՐՈՇ ՏԵՂԸ, ԴԻՐՔԸ, ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ:

Սահմանադրության նախագիծը, Ազգային-եկեղեցական ժողովի հաստատումից և վավերացումից հետո, Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակով պաշտոնապես կնրապարակվի և կմտնի Հայ եկեղեցու կյանքի մեջ:

Եկեղեցական Սահմանադրության կիրառումը մի նոր ու պայծառ ուղի բաց կանի մեր Ս. Եկեղեցու առաջ կազմակերպչական, վարչական տեսակետից, Ազգային-եկեղեցական միասնության լույսի տակ, և կլինի Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի գահակալության հիշատակության արժանի ձեռնարկումներից մեկը:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ 38-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՂԱՎ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐԸ ԵՎ ՍՏԱՑՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՔՈՉԻՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Երջանիկ եմք ողջունելու մեր Մայր Հայրենիքի մեծ տոնը, Նոյեմբերի 29-ի 38-րդ տարեդարձը և Ձեզ ներկայացնելու Հայ Եկեղեցու և Ս. Էջմիածնի անունից ջերմագին շնորհավորանք և սրտագին մաղթանքներ՝ մեր երկրի ու ժողովրդի խաղաղ ու շինարար կյանքի առաջընթացի համար, սովետական եղբայրական ժողովուրդների մեծ ընտանիքում:

Օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՀԱՐԳ ՊԱՐՈՆ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Մեր Հայրենի երկրի ազգային տոնի՝ նոյեմբերի 29-ի 38-րդ տարեդարձի առթիվ ճանեցեք ընդունել Մեր ամենաջերմ շնորհավորություններն ու բարեմաղթությունները՝ Սովետական Հայաստանի շինարար վերելքի և ծաղկման ու նայ ժողովրդի բարեկեցության համար:

Օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱՋԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Սովետական Հայաստանի կառավարության կողմից և իմ անունից խորին շնորհակալություն ենք հայտնում Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու 38-րդ տարեդարձի առթիվ Ձեր կողմից եղված շնորհավորանքների և բարեմաղթությունների համար:

Ա. ՔՈՉԻՆՑԱՆ

ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ

ԵՐԵՎԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱՋԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հայկական ՍՍՌ Միհիսարների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի և իմ անունից ջերմագին շնորհակալություն ենք հայտնում Ձեզ, Սովետական Հայաստանի 38-րդ տարեդարձի առթիվ Ձեր կողմից մեզ եղված շնորհավորանքների և բարեմաղթությունների համար:

Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ԵՐԵՎԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ԱՆՏԻՈՔԻ ՈՒ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔ ԹԵՈԴՈՍԻՈՍԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Այսօր Ս. Սինոդը Մեր խոնարհությանը ընտրեց Պատրիարք Անտիոքի և Համայն Արևելքի:

Համբուրում ենք Ձեզ եղբայրաբար՝

ԹԵՈԴՈՍԻՈՍ ԱՆՏԻՈՔԻ

ԴԱՄԱՍԿՈՍ
14 նոյեմբերի 1958 թ.

ԱՆՏԻՈՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԵՈԴՈՍԻՈՍԻՆ

ԴԱՄԱՍԿՈՍ

Մեծ հաճույքով Մենք տեղեկացանք Անտիոքի և Համայն Արևելքի Պատրիարքի բարձր պաշտոնին Ձեր ընտրության մասին: Ձեզ շնորհավորում ենք ջերմագին կերպով և Ձեզ բարեմաղթում բեղմնավոր պատրիարքություն, հաջողություն և երկար կյանք:

Եղբայրական համբույրներով՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ
15 նոյեմբերի 1958 թ.:



ԿՈՉ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

Ուրբ էշմիածինը, հայության սիրտը, խոցված է վշտով ի լուր այն խժդժություններուն, որոնք վերջին ամիսներուն տեղի ունեցան Լիբանանի մայրաքաղաք Բեյրութի հայ գաղութի ծոցին մեջ, խլելով տասնյակ զոհեր՝ մեռյալներ ու վիրավորներ:

Հայ մարդիկ, հարազատ զաւակները նույն ժողովուրդին և նույն եկեղեցիին, ժառանգորդները Ս. Լուսավորչի և Ս. Մեսրոպի, իմաստ չունեցող կիրքերով կուրացած, զինված հրով ու սրով, խավարի անհույս ուղիներուն վրա, իրենց եղբայրներու կյանքի լույսը կմարեն:

Հայ մարդը երբեք այսքան անճպատակ կերպով արյուն չէր թափած:

Հայ մարդը երբեք այսպիսի «ոչ իմանալի մահ» չէր ունեցած:

Արդյոք Մեր զավակներեն ոմանք այսքան հեռո՞ւ են մեր Տիրոջ և Փրկչի սիրո Ավետարանեն, և այսքան չո՞ւտ մոռցան պատմությունը հայոց և մեր Դողգոթան:

Բոլորս անխտիր, Հայ եկեղեցի և հայ ժողովուրդ, Մայր Արարատի ափերեն մինչև ափերը հեռավոր երկիրներու, ուր կապրին պանդուխտ զավակները Մեր, այսօր սուգի մեջ ենք, տխուր, սրտաբեկ և ամոթահար:

Ամենուն վիշտը Մեր սրտին մեջ առած, Մենք կողքանք բոլոր զոհերը եղբայրասպան այս ողբերգության, ու Փրկչի Իշխան Ս. Սեղանի առաջ կաղոթենք անոնց հոգիներուն հանգստության և խաղաղության համար:

Կաղոթենք նաև, որ բարին Աստված Ս. Հոգիով մխիթարե ինկած զոհերուն հարազատները ու թեթևցնե անոնց ծանր սուգը:

Եվ զոհե մասամբ սփոփանք մը բերելու զգացումով, Մեր համեստ միջոցներով կուզանք 25 000 լիբանանյան ոսկի տրամադրել զոհերուն կարոտյալ ընտանիքներուն, որբերուն ու այրիներուն, իբրև հայրական օգնություն:

Մեր խոսքը ուղղելով նամայն Լիբանանի մեր Ս. Եկեղեցվո հավատացյալներուն. Մենք, իբրև Հայրապետ Ամենայն Հայոց, սրտագին կոչ կընենք Մեր բոլոր հոգևոր զավակներուն անխտիր, որ կանգ առնեն և ետ դառնան

կոստյան ճամբաներին և ընդմիջտ հուժարին հղթայատյաց արարքներ, որոնք ոչ միայն բարոյապես դատապարտելի են. այլև անպատվաբեր ու նվաստացուցիչ մեր Ազգի համար, հաչս օտար հյուրընկալ ժողովուրդներու և պետություններու:

«ԱՍՏՈՒԱԾ ՉՕՐՈՒԹԵԱՆՑ, ԴԱՐՁՈ՝ ՁՄԵՑ, ԵՐԵԻԵՑՈ՝ ՉԵՐԵՍՍ ՔՈ Ի ՄԵՋ ԵԻ ԿԵՑՑՈՒՔ» (Սաղմ. ՀԹ 8):

Կոչ կընենք բոլորին, որ իրեն օրինապահ ու կարգապահ քաղաքացիները Լիբանանյան հայրենիքին, առանց շտեղծեն ներքին խռովության ու անկարգության, այլ իրենց խոհական կեցվածքով ու իմաստուն գործերով առավել նպաստեն իրենց բնակած երկրի ներքին խաղաղության և հայրենասիրական միասնության:

Սփյուռքի հայ ժողովուրդը ուր որ ալ գտնվի, իրեն կյանքի կանոն և իր գոյության իրեն պայման, պետք է հետու մնա ամեն տեսակ քաղաքական փորձություններե և կուսակցական ծայրահեղություններե. և ապրի խաղաղ, համերաշխ՝ իրեն կրոնական համայնք, Հայաստանյայց Ս. Եկեղեցվո մի և անբաժանելի միության կենարար սկզբունքով զոտեպինդ:

Ավետարանական սիրո և ազգային-եկեղեցական միասնության ճանապարհը միայն կրնան Մեր պանդուխտ զավակները առաջնորդել դեպի փրկություն և խաղաղություն:

«ՔԱՋԱԼԵՐԵՑԱՐՈՒՔ ԵՒ ՁՕՐԱՍՑԻՆ ՍԻՐՏՔ ՁԵՐ, ԱՄԵՆԵՔԵԱՆ ՈՅՔ ՅՈՒՍԱՑԵԱԼ ԷՔ Ի ՏԷՐ» (Սաղմ. ԼԱ 25):

Սիրելի՛ք և հարազատնե՛ր Մեր, Ձեզ բոլորիդ անխտիր հայրական սիրո ողջույն և հայրապետական օրհնություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնե:

«ՇՆՈՐՀՔ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՂԻՑԻՆ ՈՒՆԴ ՁԵԶ. ԱՄԷՆ»:

Վ. ԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ
8 դեկտեմբեր 1958



ՀՈՒՍԻԿ ԱԲԵՂԱ ՍԱՆԹՈՒՐՅԱՆ

(Մայր Աթոռի բանգարանի վարիչ)

ԴԱՎԻԹ ՄԱՐԳԱՐԵ

Թեև Կտակարանի, ինչպես նաև հին աշխարհի կրոնական և քաղաքական մեծագործ դեմքերից մեկն է Դավիթը, որպես մարգարե և թագավոր, որպես մտածող ու բանաստեղծ, որպես անկեղծ ապաշխարող և մեծ սուրբ։

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, ամեն տարի, դեկտեմբեր ամսին, Քրիստոսի ծննդյան տոնը կանխող ավագ տոների շարքում, մեծ հանդիսությամբ նշում է Դավիթ մարգարեի հիշատակը, Հակոբ Արդար կոչված առաքյալի տոնի հետ, որն էր ազգուխ առաքելոց սրբոց և կոչեցաւ եղբայր Տեառն ի Տանէ Դաւթի»։

Դավիթ Աստուծո սիրելին էր։ Նա իր կյանքի բոլոր օրերում ապրել է Տիրոջ օրենքի մեջ և մխիթարվել է Տիրոջ խոսքերով։ Նա իր սմբակուտ հավատով՝ բոլոր տեսակի փորձություններով լի ճանապարհից անցել է և հասել է մի ճանապարհս արդարութեան վասն անուան Հոր իւրոյ»։

Դավթի կյանքի ու գործունեության մասին ընդարձակ կերպով պատմված է Հին Կտակարանում (Ա թագ. ԺԶ—Գ թագ. Բ)։

Դավիթ կրտսերագույն որդին էր Հեսսիի (Հուդայի սերնդից, ծնված Բեթղեհեմում 1085 թվականին Ք. Ա.)։

Պատանի Դավիթը արտաքնապես վայելչակազմ էր՝ մաներ ու քնքուշ դիմագծերով, ալեծածան մազերը բազմաթիվ խոպոպներով թափվում էին նրա ճակատի և այտերի վրա։ Մարմնական իր հափշտակիչ գեղեցկությունից բացի նա քաջահմուտ նվագող էր։ Նա «երջանիկ լուսովն զուարճանայր և հոգովն վերանայր ի կամարս լուսեղէնս»։

Անվեհեր խիզախության այս տիպարը, որ զօրացաւ ի վերայ այլազգւոյն և հաւատով պարտեաց զնա», շնորհիվ իր համարձակության, հավատարմության և հոգու արիության, հովվի վիճակից կանչվում է Սավուղի արքունիքը, որպես երգիչ-երաժիշտ։

Նա իր մարգարեի անուշիկ քնարով ժամանակ առ ժամանակ սփոփում և զվարճացնում է իր խղճի խայթից և հոգու մաղձությունից տառապող Սավուղին։ Նրա քնարի հրաշալի ձայնալիքները հնչում են պալատի սրահներում, մերթ սլանում են այնտեղից դուրս և հնչում են Բեթղեհեմի հովիտներում ու արձագանքում Սիոնի բարձունքներում։

Դավիթը ապրում է պալատում ու ստեղծագործում, սակայն իր սիրելի ժողովուրդը տագնապալի օրեր է անցնում, Քաղաքական հեղհեղուկ իրադարձությունների մեջ ահ ու սարսափի է մատնված բովանդակ ժողովուրդը, որովհետև փղշտացի ախոյան Գողիաթը, որի ամեն մի շարժվածք ու հայացք արտահայտում է դառնություն ու նենգություն, մարտահրավեր է ուղարկում Իսրայելի

զորքին, թե ձեզանից մի մարդ ուղարկեցեք, որի հետ ես մենամարտեմ և նախատեմ ձեր բոլոր աղքը։

Եվ ահա Դավիթը ապավինում է իր Տիրոջը և աղոթում. «Տէր ըլլս իմ և կենաց իմ, ես յումմէ՞ երկեայց. Տէր ապաւէն կենաց իմոց, ես յումմէ՞ դողացայց»։ Դավթի Աստվածը լսում է Իր ծառայի աղոթքը և շտապով առիթ է ընծայում նրան, որ իր մարմնական ուժը, բարոյական և հոգևոր զորությունը ի սպաս դնի իր երկրի և ժողովրդի փրկության։

Սակայն Սավուղ թերահավատություն է արտահայտում Դավթի՝ Գողիաթի դեմ մենամարտի դուրս գալու համարձակության նկատմամբ։ Դավիթ քաջավստահ պատասխանում է. «Արածէր ծառայ քո զխաշինս հօր իւրոյ և յորժամ գայր առնէ կամ արջ և առնոյր ոչխար ի հօտէ անտի, ելանէի զհետ նորա և հարկանէի զնա. և կորզէի ի բերանոյ նորա, և եթէ յառնէր ի վերայ իմ, ունէի զփողից նորա և հարկանէի և սպասանէի զնա։ Զառնած և զարջ սատակէր ծառայ քո։ Եւ արդ ո՞չ երթայց սատակեցից զնա և բարձից այսօր զնախատինս յԻսրայէլէն»։

Լայնաթիկունք գահի մեջ նստած Սավուղ իսկույն ըմբռնում է, որ Դավիթ իր խոսքերով արտահայտում է իր ուժի անպարտելիության գիտակցությունը։

Դավթի ամենահաղթ հավատն արտահայտվում է իր երկրորդ խոսքում, ուղղված Գողիաթին. «Դու գաս ի վերայ իմ սրով և գեղարդեամբ և ասպարաւ, և ես գամ ի վերայ քո անուամբ Տեառն զօրութեանց, ճակատու Իսրայէլի զոր նախատեցեր այսօր։ Ես առից զգլուխ քո ի քէն, և տացս զդէշ քո և զդիակունս երկնից և գազանաց երկրի, և ծանիցէ ամենայն ժողովուրդ այս թէ ոչ սրով և գեղարդեամբ փրկէ Տէր, զի Տեառն է պատերազմ»։

Դավթի և Գողիաթի կռիվն իր պատմական արժեքից բացի ունի հոգևոր-բարոյական իմաստ։

Ներտելով այս պատմությունը, մեր ուշադրությունն են գրավում զանազան կետեր, և տեսնում ենք, որ ամբողջ եղած պայքարը մարդկային հոգու և մեղքի դեմ մղված պայքարի մի պատկերալից ներկայացում է։

Դավիթ, Գողիաթին սպանելուց հետո հաղթական վերադառնում է արքունիք։ Սավուղը իբրև վարձատրություն նշանակում է Դավթին իր զորքի հրամանատար։ Նա որպես հրամանատար ծառայում է երկար տարիներ և իր բարի բնավորությամբ և առատաձեռնությամբ վայելում է սերն ու հարգանքը ոչ միայն զորքի, այլև համայն ժողովրդի։ Ահա թե ինչու Սավուղի հանգիստը խանգարվում է և հոգեկան խաղաղությունը կորչում։ Սավուղ, դրդվելով չար նախանձից և չարամիտ հոգուց, սատանայական միջոցների է դիմում, որպեսզի վերջ դնի Դավթի օրհնյալ կյանքին։ Սակայն Դավիթ որոշ ժամանակ գերծ մնալու համար Սավուղի հալածանքներից, հեռանում է պալատից և ապաստանում Հուդայի անապատները, որտեղ փոքր զորագնդեր հավաքելով իր շուրջը, պաշտպանվում է արտաքին հարձակումներից։

Սավուղ շարունակում է հալածել Դավթին իր անվերջ կռիվներով, որոնք, սակայն, միշտ ձախողվում են։ Նույնիսկ մի քանի անգամ գերի է ընկնում Սավուղ Դավթի ձեռքը, բայց Դավիթ նրա կյանքը չի ոչնչացնում, այլ ազատ է թողնում նրան։ Այսպիսով, Դավիթ իր ժողովրդի աչքին է՛լ ավելի է բարձրանում, է՛լ ավելի սիրելի է դառնում նրան։

Անցնում են տարիներ, որոնք տանում են նաև Դավթի հուսահատ շրջանը։

Մարտի դաշտում հերոսի մահով ընկնում են Սավուղն ու Հովնաթանը։

Դավիթը անկեղծ սրտով ողբում է Սավուղի և իր սիրելի բարեկամ և եղբայր քաջ Հովնաթանի մահը.

«Արձանացի՛ր Իսրայէլ, ի վերայ
մեռելոց,
Ի բարձունս քո վիրաւորաց...
Զիա՞րդ անկան զօրաւորք ի մէջ
պատերազմի...
Սաւուղ և Յովնաթան, սիրելիք և
գեղեցիկք և վայելուչք,
Ընթեւագոյնք քան զարծուիս, զօրացան
քան զառիւծունս.
Դստե՛րք Իսրայէլի, լացէ՛ք ի վերայ
Սաւուղայ.
Ցաւ է ինձ ի վերայ քո, եղբայր իմ
Յովնաթանս։

Դավիթ մեծաշուք հանդիսությամբ թագավոր է օծվում Սամվել մարգարեի ձեռքով և կոչվում է «Տիրոջ օծյալ» անունով։

Ստեղծված քաղաքական հաջող պայմաններում, իր գահակալության առաջին օրից Դավիթ ձեռնամուխ է լինում իր փայփայած երկրի վերաշինման սուրբ գործին։ Նա, առ Բարձրյալն ունեցած իր անդրդվելի հավատով, առաջին հերթին Երուսաղեմ քաղաքը դարձնում է իրը աթոռանիստ քաղաք։ Ապա մեծաշուք հանդիսությամբ և կրոնական փառավոր պատվով դեպի սուրբ քաղաքն է տանում Ուխտի Տապանակը ու կենդանի ոգևորությամբ կարգի դնում աստվածային պաշտամունքները։ («Հարցէք զողջունէ զԵրուսաղէմի, և զշինութենէ, ոյք սիրէք զնա»։— Սաղմ. ՃԻԵ)։

Դավիթ իր թագավորության ժամանակ վարում էր երկրի դատական գործերը։ Նա արդար էր և անաչառ։ «Ցիրաւանց քոց ես ո՛չ խոտորեցայ, զի Դու օրէնսդէտ արարեր զիս» (Սաղմ. ՃԺԸ)։

Դավթի թագավորության տարիները շանցան առանց փորձությունների։ Նա որպես մարդ ընկավ զանազան մեղքերի մեջ։ Թավական է հիշել Ուրիայի և Բերսաբեի պատմությունը։ Սակայն Դավիթ զգալով իր հանցանքի խորությունն ու տգեղությունը, զղջաց և խոնարհությամբ աղաչեց՝ «Ողորմեա՛ ինձ Աստուած, ըստ մեծի ողորմութեան քում, ըստ բազում գթութեան քում. քաւեա՛ զանօրենութիւնս իմ» (Սաղմ. Ե)։

Ահա այս զղջման մեջ է կայանում Դավթի հոգեկան մեծությունն ու սիրելությունը։ Նա իր ախտաժետ բնավորության շարաղետ հակումների պատճառով, իսկույն խոնարհվում է Տիրոջ կենդանի խոսքի առաջ և արտասվաթոր աչքերով խոստովանում է իր մեղքերն և ապաշխարում։

Նոր Կտակարանյան ապաշխարությունը բարձրակետն է կազմում Դավթի կենսագրության։ Սավուղ ընկավ իր մեղքերի և անօրենությունների թակարդի մեջ և կործանվեց առհավետ, մինչդեռ Դավիթ քաջությունն ունեցավ այդ նույն թակարդը իր զղջումով խորտակելու։

Ահեռուներեն Դավիթ ավելի մեծ եռանդով շարունակում է իր հոգևոր նվաճումներն աստվածպաշտության ճանապարհին և անցնում է փառքից փառք։ Նա իր նորոգված հոգու համար գոհություն է տալիս Աստուծուն. «Դարձոյց զսուգ իմ յուրախութիւն, զերծ ցինէն զքուրձ և ինձ զգեցոյց զուրախութիւնս» (Սաղմ. ԻԹ)։

Դավիթ թագավորում է 40 տարի և վախճանվում 71 տարեկան հասակում։

Նա իր թագավորության տարիներին վերջապես հաստատում է Իսրայելի խարխլած պետության հիմքը, ընդարձակում է նրա սահմանները շնորհիվ իր իմաստուն ղեկավարության։ Նա մեծ ոգևորությամբ ձեռնարկում է նաև Եհովայի պատվին կառուցվող մեծ Տաճարի շինությանը, որն ավարտում է իր որդին՝ Սողոմոնը։

Դավիթ հետևում է իր անմահ նախահայրերի օրինակին՝ միշտ անաղարտ և սուրբ պահելով նրանց պատգամները։ Նա անցնում է սրյունոտ ու փշալի ճանապարհներից, բարձրանում է փրկության գագաթը, որտեղից գալիք ապագայի համար մարգարեանում է։ «Պատմեսցի զՏեառնէ ազգի որ գալոցն է, պատմեսցեն զարդարութիւն նորա ժողովրդեան որ ծնանելոցն իցէ. զոր սարար Տէրն» (Սաղմ. ԻԱ)։

Դավթի անունը մտած է համաշխարհային գրականության գանձամատյանի մեջ մարգարտե տառերով՝ «Սաղմոսերգու»։

Երեք հազար տարի առաջ սաղմոսներն երգվում էին միայն Հուդայի անապատներում և Բեթղեհեմի հովիտներում։ Այսօր սաղմոսները երգվում են աշխարհի բոլոր լեզուներով։ Նրանց մեջ մարդ զգում է սեր, ուրախություն, մխիթարություն և Աստուծո դոյության հաստատությունը։

Դավիթը տեսնում է ու ապրում արդար ու բարի Աստուծուն. «Երկինք պատմեն զփառս Աստուծոյ, և զարարածս ձեռաց նորա պատմէ հաստատութիւն» (Սաղմ. ԺԸ)։

Սաղմոսները երկնաբաղ աղոթքներ են, մեղքի դեմ համայնաբուժ բալասաններ, և մխիթարություն զրկվածների, վշտացյալների և տառապյալների համար։

Դավթի սաղմոսները ունեն նաև դաստիարակչական մեծ նշանակություն։ Եվ իզուր չէ, որ դրանք մտել են քրիստոնեական պաշտամունքի մեջ, որպես հոգևոր կրթության և շինության կարևորագույն միջոց։

Դավիթը, որպես թագավոր, «հրաշազարդեալ գտաւ ի կարգս թագաւորաց»։ Նրա գերդաստանից՝ «ի Տանէ Դաւթի», Աստված հարություն մարդկության համար «եղջիւր փրկութեան»։ «Ամմարմնոց վերնոց թագաւոր» Քրիստոսը, «մարմնով երևեցաւ յերկրի ի զաւակէ Դաւթի», որով Դավիթ մարգարեն իրավամբ անվանվեց Աստվածահայր։

Աստված Դավթին խոստացել էր «ի պտղոյ որովայնի նորա նստուցանել յաթոռ նորա»։ Եվ Քրիստոս ժամանակակիցներից կոչվեց «Որդի Դաւթի»։

Մեր շարականագիրը հոյակապորեն նկարագրել է «Կանոն Դաւթի մարգարէին և Յակոբայ Առաքելոյն» շարականի մեջ այդ երկու հարազատների, երկու ընտրյալների գերը։ Քրիստոնեական Եկեղեցու հիմքը հաստատվել է Դավթի սերունդով, «առաքելաւն Յակոբաւ և մարգարէին Դաւթիւ»։

Արդարև, երանելի է այն մարդը, «որ ոչ գնաց ի խորհուրդս ամբարշտաց, ի ճանապարհի մեղաւորաց սա՝ ոչ եկաց, և յաթոռս ժանտից ոչ նստաւ։ Այլ յօրէնս Տեառն են կամք նորա, և յօրէնս նորա խորհեսցի նա ի տուէ և ի գիշերի» (Սաղմ. Ա 1—2)։

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ԳԼՈՒԽ Ա

ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

1. Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին ինքը հավատացյալ ժողովուրդն է, որն իր մեջ ընդգրկում է բոլոր հայ քրիստոնյա հավատացյալներին, որոնք հավատարիմ են նրա դավանանքին, կանոններին ու ավանդությանց և ենթարկվում են նրա հեղինակությանը և հրահանգներին։

2. Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին անբաժանելի մասն է կազմում Մի, Առաքելական, Ուղղափառ և Ընդհանրական Սուրբ Եկեղեցու և իր անունն է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցի, իսկ ստար լեզուներով՝ ռուսերեն՝ Արմյանսկայա Ապոստոլսկայա Ցերկով, ֆրանսերեն՝ Էկլիզ Ապոստոլիկ Արմենիեն, անգլերեն՝ Արմինիրն Ապոստոլիկ Չըրչ։

3. Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին պատկանում է Արևելքի քրիստոնեական առաքելական եկեղեցիների խմբին. նա պատմականորեն ծնունդ է առել, զարգացել ու կազմակերպվել է ուրույն և ինքնավար կերպով Հայաստանի մեջ։

4. Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու լուսավորիչներն են Ս. Թադեոս և Ս. Բարթողիմեոս առաքյալները։

5. Ս. Գրիգոր Լուսավորիչը Միածնի իջման տեսիլքով հանդիսանում է հիմնադիրը Ս. Էջմիածնի Մայր Տաճարին և կազմակերպիչը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Նվիրապետության և Ամենայն Հայոց Հայրապետության Մայր Աթոռի ի Վաղարշապատ։

6. Ամենայն Հայոց Կաթողիկոսը հաջորդն է Ս. Թադեոս և Ս. Բարթողիմեոս առաքյալների և առաքելաշավիղ Ս. Գրիգոր Լուսավորչի։ Նրա բնակության մշտական վայրն է Մայր Աթոռ Ս. Էջմիածինը։

7. Ս. Էջմիածինը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու համազգային սրբավայրն է և Մայրավանքը, կենտրոնը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Նվիրապետության և վարչության։

8. Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին պետական իշխանությանց նկատմամբ հետևում է և հավատարիմ է ավետարանական պատգամին՝ «Տուք զկայսերն կայսեր և զԱստուծոյն՝ Աստուծոյ»։

9. Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին ընդունում է տիեզերական առաջին երեք սուրբ ժողովները՝ Նիկիայի, Կոստանդնուպոլսի և Եփեսոսի, նրանց կանոնները, Նիկիայի Հավատո Հանգանակը և Ընդհանրական Եկեղեցու ավանդությունները։ Դավանաբանական, վարդապետական և ծիսական հարցերում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին առաջնորդվում է նաև հայ ազգային-եկեղեցական ժողովների հայրապետահաստատ որոշումներով և վճիռներով։

10. Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին դավանում է Քրիստոսի Ս. Եկեղեցու միությունը, մեկությունը և առաքելական բոլոր եկեղեցիներին հարում է կապված միմյանց ավետարանական սիրո միությամբ և հոգևոր եղբայրակցության սկզբունքներով։

11. Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն գլխավորում, հովվում և ղեկավարում է Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որպես կամոքն Աստուծո և ընտրությամբ Ազգիս ընտրված և օծյալ Քահանայապետ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գահակալ, եկեղեցական նվիրապետության և վարչության Գլուխ, օրբազան կանոնների մեկնաբանող և պահապան եկեղեցական ավանդների և ժառանգությանց։

12. Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին իրավական անձ է, որպես կազմակերպչական-վարչական, տնտեսական միասնական ամբողջություն, որի ընդհանրական և բարձրագույն Վերատեսուչը Ամենայն Հայոց Կաթողիկոսն է։

13. Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու վարչությունը կազմակերպվում է ժողովրդավարական սկզբունքներով։ Հավատացյալները ազատորեն ընտրում են իրենց հովիվներին՝ քահանա, եպիսկոպոս, կաթողիկոս։

14. Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին ղեկավարվում է ժողովրդական ընտրական սկզբունքով։ Ծուրաքանչյուր նվիրապետական Աթոռ և թեմ իր ներքին գործերը վարում է իր սեփական կանոնադրության համաձայն, որը կազմված պետք է լինի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Սահմանադրության և տեղական պետական օրենքների համապատասխան։ Ներքին այդ կանոնադրությունները վավերացվում են Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից։ Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը վավերացնում է միայն իրեն ենթակա երեք թեմերի կանոնադրությունները, այսինքն՝ Սիրիայի, Լիբանանի և Կիպրոսի թեմերի կանոնադրությունները։

ԳԼՈՒԽ Բ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

15. Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նվիրապետությունը կազմում են՝
   ա) Ամենայն Հայոց Կաթողիկոսությունն ի Ս. Էջմիածին.
   բ) Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը.
   գ) Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունը.
   դ) Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքությունը (Թուրքիա).
   ե) Թեմական առաջնորդությունները, եպիսկոպոսական Աթոռները.
   զ) Հոգևոր հովվությունները.
   է) Վանորայք։

16. Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նվիրապետական և առաջնորդական բոլոր Աթոռները կազմում են մի անբաժան միություն, որի գլուխն է Մայր Աթոռ Ս. Էջմիածինը։

17. Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռը Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսության ենթակա է ի հոգևորս, ճանաչելով այն իբրև նախամեծար և գերագահ Մայր Աթոռ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նվիրապետության։

ԳԼՈՒԽ Գ

ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ.

18. Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Գերագույն իշխանությունը մարմնավորվում է ի դեմս Ազգային-եկեղեցական սրբազան ժողովի և անձնավորվում հանձին Ամենայն Հայոց Կաթողիկոսի.

19. Ազգային-եկեղեցական ժողովը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կանոնադիր, կարգադիր և համարառու գերագույն մարմինն է.

20. Ազգային-եկեղեցական ժողովը գումարվում է Ս. Էջմիածնում հինգ տարին մի անգամ կամ ավելի շուտ, եթե հարկ լինի.

21. Ազգային-եկեղեցական ժողովի նախագահն է Ամենայն Հայոց Կաթողիկոսը.

22. Ազգային-եկեղեցական ժողովին մասնակցում են՝
   ա) ի կոչմանե և ի պաշտոնե լիազորվածներ և
   բ) հավատացյալ ժողովրդի ընտրյալ պատգամավորներ.

23. Ի կոչմանե և ի պաշտոնե Ազգային-եկեղեցական սրբազան ժողովին մասնակցում են՝

   ա) Ամենայն Հայոց Կաթողիկոսը որպես նախագահ.
   բ) Տանն Կիլիկիո Կաթողիկոսը.
   գ) Ս. Երուսաղեմի պատրիարքը.
   դ) Կոստանդնուպոլսի պատրիարքը.
   ե) Բոլոր թեմական առաջնորդները և Մայր Աթոռի միաբան բոլոր եպիսկոպոսները.
   զ) Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները.
   (Մահվան, հիվանդության և այլ պատճառներով բացակայելու պարագային, աթոռակալներին և թեմական առաջնորդներին փոխարինում են տեղակալները, տեղապահները կամ փոխանորդները).
   է) Երկու հոգևորական ներկայացուցիչներ Ս. Էջմիածնի միաբանությունից և երկուական ներկայացուցիչներ Տանն Կիլիկիո միաբանությունից, Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Պատրիարքությունների.
   ը) Թեմերի ներկայացուցիչներ, ընտրված թեմական պատգամավորական ժողովներից՝ յուրաքանչյուր 20 000-ից մեկ ներկայացուցիչ մինչև 100 000, իսկ 100 000-ից վեր՝ մեկական ներկայացուցիչ յուրաքանչյուր 100 000-ի համար.

24. Ազգային-եկեղեցական ժողովի իրավասություններն են՝

   ա) Ընտրություն Ամենայն Հայոց Կաթողիկոսի.
   բ) Ընտրություն Գերագույն Հոգևոր Խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի.
   գ) Քննարկում և վճռահատում ազգային-եկեղեցական ընդհանուր բնույթ կրող խնդիրների.
   դ) Քննարկում և վճռահատում դավանաբանական, կանոնական, ծիսական, վարչական, կազմակերպչական, տնտեսական, խնամատարական և եկեղեցական այլ խնդիրների.
   ե) Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և նրա օրգանների առաջիկա գործունեության ուղեգծի և ծրագրի ճշտում.
   զ) Աթոռների և թեմերի իրավասությանց սահմանների ճշտում.
   է) Եպիսկոպոսական ժողովի որոշումների քննարկում և վավերացում.
   ը) Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նվիրապետական Աթոռների միջև ծագած վեճերի քննարկում և լուծում.
   թ) Ազգային-եկեղեցական Սահմանադրության հաստատում, վերաքննություն և բարեփոխում.
   ժ) Մայր Աթոռի հոգևոր և նյութական գործունեության քննություն.
   ժա) Մայր Աթոռի բյուջեների հաստատում.

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ

ժբ) Մայր Աթոռի բյուջեի և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նյութական և այլ ընդհանուր կարիքներին թեմերի մասնակցության չափի նշանակում։

25. Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորների ընտրությունը կատարվում է թեմական պատգամավորական ժողովներում, իսկ ի դեպ մնալուն ժողովների բացակայության՝ հատուկ գումարված պատվիրակային ժողովներում՝ ընդհանուր, հավասար, գաղտնի և ուղղակի քվեարկությամբ։

26. Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավոր կարող են ընտրվել նաև թեմերից դուրս գտնվող անձնավորություններ։

27. Ազգային-եկեղեցական ժողովի յուրաքանչյուր պատգամավոր ունի մի ձայն և իրավասու չէ այդ ձայնը փոխանցելու ուրիշին։

28. Ազգային-եկեղեցական ժողովը հրավիրում է Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական հատուկ կոնդակով՝ նշելով ժողովի օրակարգը։

29. Ազգային-եկեղեցական ժողովը կարող է իր օրակարգի մեջ մտցնել նաև պատգամավորների կողմից առաջարկվող հարցեր, որոնց քննարկման օգտին քվեարկում է Ազգային-եկեղեցական ժողովին մասնակցող պատգամավորների պարզ մեծամասնությունը։

30. Դավանաբանական, կանոնական, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու բարեկարգության և Սահմանադրության փոփոխության վերաբերյալ հարցեր չեն կարող մտցվել ժողովի օրակարգի մեջ, եթե նրանք չեն նախատեսված Ազգային-եկեղեցական ժողովի գումարման հրավեր-կոնդակում։

31. Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարող է արտակարգ Ազգային-եկեղեցական ժողով հրավիրել ուացառիկ պարագաների մեջ, հատուկ կոնդակով, նշելով ժողովի օրակարգը։

32. Ազգային-եկեղեցական ժողովի հրավերը կատարվում է ժողովի գումարման թվականից առնվազն երեք ամիս առաջ։

33. Ամենայն Հայոց Կաթողիկոսի վախճանումից հետո նոր կաթողիկոս ընտրելու համար Ազգային-եկեղեցական ժողով հրավիրում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղակալը, Գերագույն Հոգևոր Խորհրդի հետ խորհրդակցաբար, իսկ տեղակալ չլինելու դեպքում՝ Գերագույն Հոգևոր Խորհուրդը։

34. Ամենայն Հայոց նոր Կաթողիկոսի ընտրությունը կատարվում է նախորդ կաթողիկոսի վախճանումից ոչ ուշ քան մեկ տարի հետո։

35. Ազգային-եկեղեցական ժողովը օրինավորապես կազմված է նկատվում, երբ հրավիրված անդամների կեսից ավելին ներկա է։

36. Ազգային-եկեղեցական ժողովը եթե անդամների օրինական մեծամասնություն չունենա, գումարումը կստանա խորհրդակցական բնույթ, պայմանով, որ ժողովը դեթ պատգամավորների մեկ երրորդի մեծամասնություն կազմի։

37. Ազգային-եկեղեցական այսպիսի խորհրդակցական ժողովը կարող է ընտրել Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղակալ, ժամանակավոր Գերագույն Հոգևոր Խորհուրդ՝ եթե կազմալուծված է այն, հաստատել ժամանակավոր բյուջե և նշանակել ստույգ թվական առաջիկա Ազգային-եկեղեցական ժողովի գումարման համար։

38. Ազգային-եկեղեցական ժողովը բաց է անում Ամենայն Հայոց Կաթողիկոսը։

39. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության համար գումարված Ազգային-եկեղեցական ժողովին նախագահում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղակալը՝ ընկերակցությամբ Տանն Կիլիկիո Կաթողիկոսի, Ս. Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի պատրիարքների։

40. Ազգային-եկեղեցական ժողովի բացումից հետո, ժողովն իր միջից ընտրում է Ազգային-եկեղեցական ժողովի չորս ատենապետներ և չորս քարտուղարներ։

41. Ազգային-եկեղեցական ժողովն ընտրում է մանդատային, հաշվեքննիչ, բանաձևիչ և ընտրական հանձնախմբեր՝ հնգական հոգուց բաղկացած։

42. Ազգային-եկեղեցական ժողովը, լսելով մանդատային ստուգիչ հանձնախմբի ստուգման արդյունքը, կատարում է պատգամավորների մանդատների հաշվառումը և վավերացնում նրանց օրինականությունը։

43. Ազգային-եկեղեցական ժողովի որոշումները օրինական են համարվում ժողովի մասնակից պատգամավորների առնվազն երկու երրորդի մեծամասնության ձայներով։

44. Ազգային-եկեղեցական ժողովի որոշումները հրապարակվում են Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակով, որից հետո միայն նրանք մտնում են ուժի մեջ։

45. Ազգային-եկեղեցական ժողովի որոշումները ընթերցվում են Հայաստանյայց Առաքելական եկեղեցիներում՝ հայրապետական կոնդակի հետ միասին։

46. Ազգային-եկեղեցական ժողովի ավարտից մինչև նորի գումարումը Ազգային-եկեղեցական ժողովի իրավունքները փոխանցվում են Ամենայն Հայոց Կաթողիկոսին։ Նա իր այդ իրավունքը ի պահանջել հարկին գործադրում է հատուկ վճռով, ապա այն ներկայացնելով առաջիկա Ազգային-եկեղեցական ժողովի հավանությանը։

Գ Լ Ո Ւ Խ Դ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

47. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությունը կատարվում է Ս. Էջմիածնի Մայր Տաճարում։

48. Ամենայն Հայոց Կաթողիկոսը Իր ընտրությունից հետո կատարում է Իր կանոնական ուխտը Մայր Տաճարում, ապա օծվում է հանդիսավորապես, ըստ կարգաց և ավանդության Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու։

49. Մայր Տաճարում կաթողիկոսական օծմամբ նվիրագործվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությունը և սկզբնավորվում Նրա անվան հիշատակումը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցիներում։

50. Ամենայն Հայոց նորընտիր Կաթողիկոսը օծումից հետո Իր անդրանիկ սրբատառ կոնդակով ծանուցում է բոլոր նվիրապետական Աթոռներին, թեմերին և հավատացյալ հայ ժողովրդին՝ Իր ընտրության և սուրբ օծման մասին։

51. Ամենայն Հայոց Կաթողիկոսի սիտղոսն է՝ «ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՋԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ»։

52. Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալությունը ցկյանս է։

53. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որպես Գլուխ և Գերագույն Պետ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և հավատացյալ հայ ժողովրդի, Հայ Եկեղեցին ներկայացնում է ի կոչմանե և ի պաշտոնե, իրավունքների լիությամբ՝ հավատացյալ ժողովրդի, պետությունների, միջազգային օրենքների, միջազգային ժողովների, պետությունների և այլ կրոնական պետերի, եկեղեցիների և միջեկեղեցական ժողովների առաջ, անձամբ կամ Իր լիազոր ներկայացուցիչների միջոցավ։

54. Ամենայն Հայոց Կաթողիկոսի իրավասությունները են.

ա) Լիակատար իշխանություն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու վարչության վրա.

բ) Սրբարույս Մեռոնի օրհնություն.

գ) Եպիսկոպոսական ձեռնադրություն և արքության պատվի շնորհում.

դ) Ազգային-եկեղեցական ժողովի գումարում և այդ ժողովի նախագահում.
ե) Կանոնական, շրջաբերական, մասնավոր և անհատական կոնդակների ուղղում.
զ) Աթոռների և թեմերի սահմանների որոշում և փոփոխում.
է) Աթոռների և թեմերի տեղական կանոնադրությունների հաստատում.
ը) Նոր թեմերի ստեղծման որոշում և իրավական պայմաններից զրկված թեմերի առկախում.
թ) Պարգևատրում արժանավոր հոգևորականների և եկեղեցաշեն աշխարհականների.
ժ) Հորդոր, սաստ և պատժի տնօրինում օրինազանց հոգևորականների.
ժա) Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ազգային-եկեղեցական կյանքի վերին հսկողություն և տնօրինում և Հայ Եկեղեցու ուղղափառության, սուրբ կանոնների և ավանդությանց պահպանում.
ժբ) Նվիրակների և հայրապետական պատվիրակների առաքում Աթոռներ և թեմեր.
ժգ) Թեմական առաջնորդների և թեմական խորհուրդների ընտրություններ, հայրապետական պատճառաբանված վճռով, թեմական առաջնորդների կախակայում.
ժդ) Հայրապետական պատվիրակների նշանակում՝ առաջնորդական գործերը վարելու համար մինչև թեմի առաջնորդի ընտրությունը և վավերացումը.
ժե) Հովվապետական այցելություններ հոտին.
ժզ) Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշումների և վճիռների հաստատում.
ժէ) Առաջնորդի դեմ եղած բողոքների քննարկում և վճռահատում.
ժը) Առանձնաշնորհումների և բացառությունների կատարում, չխախտելով Հայ Եկեղեցու ոգին և կանոնական կարգերը.
ժթ) Սուրբ պսակի լուծում և այլ կանոնական, ծիսական և բարոյական վճիռների արձակում.
ի) Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին ներկայացնելու համար հատուկ պատվիրակների կամ պատվիրակությունների նշանակում միջեկեղեցական ժողովներում.
իա) Անխախտ և հաստատուն պահպանում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դավանության, կանոնների, ծեսերի և ավանդությունների։
իբ) Ազգային-եկեղեցական ժողովի որոշումների հռչակում և եպիսկոպոսական ժողովի որոշումների հաստատում.
իգ) Միջազգային ժողովների և ատյանների, պետությունների ղեկավարների և կրոնական-եկեղեցական պետերի դիմումների կատարում.
իդ) Վերահսկողության հաստատում համազգային, եկեղեցական, վանական կալվածների, կտակների, դրամագլուխների և այլ նվիրատվությունների վրա, և ըստ հարկին պարտ ու պատշաճի տնօրինում՝ համաձայն միջազգային և պետական օրենքների.
իե) Համազգային բնույթ և արժեք ներկայացնող հաստատությունների, կառուցումների հիմնարկում.
իզ) Համաձայն ազգային-եկեղեցական շահերի և ավանդների և Ազգային-եկեղեցական ժողովի որոշումների, տնտեսա-ֆինանսական միջոցների վերաբաշխում։

55. Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարող է նշանակել Իր փոխանորդին՝ ճշտելով նրա իրավասության և գործունեության սահմանն ու ժամանակաշրջանը։

ԳԼՈՒԽ Ե

ԴԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

56. Գերագույն Հոգևոր Խորհուրդը Ամենայն Հայոց Կաթողիկոսի խորհրդակից մարմինն է, ընտրված Ազգային-եկեղեցական ժողովի կողմից, հինգ տարվա համար։

57. Գերագույն Հոգևոր Խորհուրդը բաղկանում է 9—11 անդամներից, որոնցից չորսը միայն աշխարհական։

58. Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստերին նախագահում է Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Նրա փոխանորդը կամ տեղակալը։

59. Գերագույն Հոգևոր Խորհրդի իրավասությունն ու գործառնությունը սահմանվում են հատուկ կանոնադրությամբ, սույն Սահմանադրության հիմունքներով խմբագրված և Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից հաստատված։

60. Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամների թվի պակասելու դեպքում, Ամենայն Հայոց Կաթողիկոսը իրավասու է, Գերագույն Հոգևոր Խորհրդի հետ խորհրդակցարար, լրացնելու նրա կազմը։

61. Գերագույն Հոգևոր Խորհրդի պաշտոնն է.

ա) Օրինականության և նպատակահարմարության տեսակետից հսկել և վերստուգել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու բոլոր կենտրոնական և տեղական մարմինների, հիմնարկությունների և հաստատությունների գործունեությունը.

բ) Քննել և որոշում կայացնել բոլոր այն հարցերի մասին, որոնք Գերագույն Հոգևոր Խորհրդին կներկայացվեն Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից.

գ) Հսկել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դավանական, ծիսական, նվիրապետական ավանդական կարգերի և կանոնների անվթար պահպանման վրա.

դ) Վերաքննել իրեն ստորադաս ատյանների վճիռների դեմ եղած բողոքները կամ դիմումները և որոշում տալ՝ ըստ կարգաց և կանոնաց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու։

ե) Քննարկել և հաստատել թեմական-վանական կանոնադրություններ.

զ) Նախապատրաստել Ազգային-եկեղեցական ժողովին ներկայացվելիք զեկուցագրեր, շինարարական նախագծեր, հաշվեկշիռներ և բյուջեների նախահաշիվներ.

է) Քննարկել և հաստատել Մայր Աթոռի տարեկան ֆինանսական գործունեության կատարման հաշվետվությունը և բյուջեի նախահաշիվը.

ը) Նշանակել Մայր Աթոռի և նրան ենթակա հոգևոր, վարչական, տնտեսական մարմիններն ու պաշտոնյաները՝ հսկելով նրանց գործունեության վրա.

թ) Քննել Մայր Աթոռի սնտեսա-ֆինանսական, շինարարական պայմանագրերն ու վավերացնել նրանց կնքումը.

ժ) Հետևել Ազգային-եկեղեցական ժողովի որոշումների կենսագործմանը.

ժա) Մշակել Ազգային-եկեղեցական ժողովի օրակարգը և ներկայացնել Վեհափառ Հայրապետին ի հավանություն։

62. Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստերը վավերական են, երբ նիստին ներկա են անդամների կեսից մեկ ավելին։

63. Գերագույն Հոգևոր Խորհրդի որևէ որոշում օրինական է, երբ նրա օգտին տրվում է ընդհանուրի կեսից մեկ ավելի ձայն։

64. Գերագույն Հոգևոր Խորհրդին առընթեր գործում է Վերստուգիչ հանձնաժողովը, ընտրված Ազգային-եկեղեցական ժողովից հինգ տարվա համար և բաղկացած երեք անդամներից։

65. Վերստուգիչ հանձնաժողովը հսկում է Մայր Աթոռի և ներքին թեմերի տնտեսա-ֆինանսական գործունեության վրա և պարբերաբար քննարկում է Մայր Աթոռի հաշիվները և բոլոր ֆինանսական գործառնությունները և իր եզրակացություններն է ներկայացնում Ամենայն Հայոց Կաթողիկոսին և Գերագույն Հոգևոր Խորհրդին։

ԳԼՈՒԽ Զ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎ

66. Եպիսկոպոսական ժողովի անդամներն են հանդիսանում.
   ա) Ամենայն Հայոց Կաթողիկոսը.
   բ) Տանն Կիլիկիո Կաթողիկոսը.
   գ) Ս. Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի պատրիարքները.
   դ) Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու բոլոր եպիսկոպոսները։

67. Եպիսկոպոսական ժողովը խորհրդակցական բնույթ ունի, գումարվում է Ս. Էջմիածնում և ըստ հարկի այլ վայրերում, Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով և նախաձեռնությամբ, Ազգային-եկեղեցական ժողովի գումարման առնչությամբ կամ նրանից անկախ։

68. Եպիսկոպոսական ժողովը քննության է առնում Ամենայն Հայոց Կաթողիկոսի առաջարկությամբ առաջնահերթ կարևոր հարցեր, զբաղվում է Հայ Եկեղեցու բարեկարգության և կազմակերպության վերաբերյալ հարցերով։

69. Եպիսկոպոսական ժողովը քննարկում և եզրակացնում է նվիրապետական Աթոռների միջև ստեղծված հոգևոր իրավասությունների վերաբերյալ հարցերը, ինչպես նաև միջեկեղեցական և միջհարանվանական հարաբերությունների վերաբերյալ բացառիկ հարցեր։

70. Եպիսկոպոսական ժողովի որոշումները նվիրագործվում են Ամենայն Հայոց Կաթողիկոսի և կամ Ազգային-եկեղեցական ժողովի վճռով։

ԳԼՈՒԽ Է

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

71. Մայր Աթոռ Ս. Էջմիածինը Մայրավանքն է բոլոր հայ վանքերի և ունի իր միաբանությունը, որի գլուխն է Ամենայն Հայոց Կաթողիկոսը։

72. Մայր Աթոռի միաբանությունը կազմակերպվում և գործում է Ս. Էջմիածնում որպես վանական միաբանական համայնք և կուսակրոնների հոգևոր ուխտ։

73. Մայր Աթոռի միաբանությունը ղեկավարվում է Գերագույն Հոգևոր Խորհրդի կողմից սահմանված և Ամենայն Հայոց Կաթողիկոսից վավերացված Միաբանական ներքին կանոնադրությամբ։

74. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան են համարվում բոլոր այն հոգևորականները՝ սարկավագ, վարդապետ, եպիսկոպոս, որոնք իրենց ձեռնադրությունը ստացել են Մայր Աթոռում։

75. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բուն միաբանությունը, սակայն, կազմվում է այն հոգևորականներից, որոնք ապրում և ծառայում են Մայր Աթոռում։

ԳԼՈՒԽ Ը

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՎՈՐ ԱԹՈՌՆԵՐ

Ա) ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆ

76. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռը անբաժանելի մասն է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նվիրապետության և ի հոգևորս ենթակա է Ամենայն Հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, սիրո և միության ոգով։

77. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռը հանդիսանում է նվիրապետական մասնավոր Աթոռ իր իրավասության սահմաններով, որոնք տարածվում են իր թեմերի եկեղեցական, կազմակերպչական, վարչական և մատակարարման մարմինների վրա։

78. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռի թեմերն են Լիբանանը, Սիրիան և Կիպրոս կղզին։

79. Կիլիկյան Կաթողիկոսությունը ղեկավարվում է իրեն հատուկ կանոնադրությամբ, համաձայնեցված Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կանոններին, սույն Սահմանադրության, ազգային-սահմանադրական սկզբունքներին և տեղական պետական օրենքներին։

80. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը ընտրվում է Կիլիկիո Կաթողիկոսության պատգամավորական ժողովի կողմից և գահակալում է ցմահ։

81. Կիլիկիո Կաթողիկոսի ընտրության մասնակցում է Մայր Աթոռ Ս. Էջմիածինը իր երկու ներկայացուցիչներով։

82. Կիլիկիո Կաթողիկոսի ընտրությունը տեղի է ունենում Անթիլիասի Մայր Տաճարում, և հետո կանոնական ոտքի, կատարվում է Կաթողիկոսի օծումը՝ համաձայն Հայաստանյայց Եկեղեցու սուրբ կանոնների և ավանդության, մասնակցությամբ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու առնվազն երեք եպիսկոպոսների։

83. Կիլիկիո նորընտիր Կաթողիկոսի ընտրությունն ու օծումը անմիջապես և պաշտոնապես հաղորդվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ ի հավաստիացումն ընտրության օրինականության և օծման կանոնականության։ Ամենայն Հայոց Կաթողիկոսը կոնդակով շնորհավորում է նորընտիր Կաթողիկոսին։

84. Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դավանական, կանոնական, պաշտամունքի, եկեղեցական բարեկարգության և միջեկեղեցական հարաբերությանց վերաբերյալ հարցերի մասին մեկնություններ տալը և որոշումներ ընդունելը վերապահվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսին։

85. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը Հոգևոր Պետն է Իր ժողովրդի, նախագահը Կիլիկյան թեմերի պատգամավորական ժողովի և Իր թեմերի ազգային-եկեղեցական ժողովների և ղեկավարը գործադիր իշխանության։

86. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը իրավունք ունի Սրբալույս Մեռոնի օրհնության, եպիսկոպոսական ձեռնադրության, արքության պատվի և կոնդակի տվչության՝ միմիայն Կիլիկյան թեմերի մեջ։

87. Նվիրապետական մյուս Աթոռների կամ թեմերի և Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի միջև ծագած վեճերի դեպքում, մեկնության և վերջնական վճիռ տալու իրավունքը վերապահվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսին և Ազգային-եկեղեցական սրբազան ժողովին։

Բ) ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆ

88. Երուսաղեմի Պատրիարքական Ս. Աթոռը անբաժան մասն է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նվիրապետության և ենթակա Ամենայն Հայոց Կաթողիկոսության, պահելով Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ծոցում իր ուրույն տեղը, որպես պատմականորեն հիմնված և զարգացած Առաքելական Աթոռ։

89. Երուսաղեմի հայոց պատրիարքը Սրբոց Հակոբյանց Առաքելական Աթոռի գահակալն է ցկյանս, գլուխը համանուն միաբանության, նախագահը Միաբանական ընդհանուր և Տնօրեն ժողովների և պահը գործադիր իշխանության։

90. Երուսաղեմի հայոց պատրիարքի պաշտոնն է՝
ա) Հսկել Տերունական Ս. Տեղյաց և այլ ուխտատեղիների, ազգային սեփականությունների, արտոնությունների և մենաշնորհների անկորուստ պահպանման վրա.
բ) Հոգ տանել սաղմնական հայկական վանքերի, կալվածների պահպանության և բարգավաճման.
գ) Անկորուստ և անվթար պահել հրովարտակներով շնորհված և վավերագրերով հաստատված ազգային իրավունքներն ու առանձնաշնորհումները, արտոնություններն ու ավանդական հնավանդ սովորությունները.

91. Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունն ունի իրեն հատուկ կանոնագիր և կանոնագրություն, որոնցով նա ղեկավարվում է։

92. Երուսաղեմի հայոց պատրիարքի մահից հետո պատրիարքական փոխանորդը, Տնօրեն ժողովի հետ համախորհուրդ, հրավիրում է Միաբանական ընդհանուր ժողով, որն ընտրում է տեղապահին՝ համաձայն Սրբոց Հակոբյանց միաբանության ներքին կանոնագրության։

93. Պատրիարքական տեղապահի պաշտոնն է կատարել պատրիարքի ընտրություն և վարել Պատրիարքության գործերը՝ միաբանական կանոնագրի համաձայն։

94. Երուսաղեմի հայոց պատրիարքի ընտրությունը Միաբանական ընդհանուր ժողովի կողմից պաշտոնական գրությամբ ծանուցվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսին և նվիրապետական բոլոր Աթոռներին ու թեմերին։

95. Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական հատուկ կոնդակով նվիրագործում և վավերացնում է նորընտիր պատրիարքի ընտրությունը։

96. Երուսաղեմի Հայոց Պատրիարքության անմիջականորեն ենթակա են՝
ա) Պաղեստինի հայ թեմը.
բ) Հորդանանի հայ թեմը.
գ) Իսրայելի հայ թեմը։

Գ) ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆ

97. Թուրքիայի Հայոց Կոստանդնուպոլսի Պատրիարքական Աթոռը, իբրև անբաժան մասը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նվիրապետության, ենթակա է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Գլուխ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսության.

98. Թուրքիայի հայոց պատրիարքը հոգևոր պետն է բովանդակ Թուրքիայում ապրող հայ ժողովրդի, նախագահը Ազգային, Եկեղեցական և Կրոնական ժողովների և վարիչը գործադիր իշխանության։

99. Թուրքիայի Հայոց Պատրիարքությունն ունի հատուկ Սահմանադրություն, հիմնված 1863 թվականի Ազգային Սահմանադրության հիմնական սկզբունքների վրա։

100. Թուրքիայի սահմանների մեջ գտնվող բոլոր եկեղեցական թեմերն ու համայնքները ենթակա են Կոստանդնուպոլսի Պատրիարքության։

101. Թուրքիայի հայոց պատրիարքը ընտրվում է Ազգային Սահմանադրության համաձայն և հաստատվում Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից շնորհավորական կոնդակով։

102. Պատրիարքական տեղապահը ընտրվում է ըստ Սահմանադրության։

103. Պատրիարքական տեղապահի պաշտոնն է Պատրիարքության գործերը վարել մինչև նոր պատրիարքի ընտրությունը։ Նոր պատրիարքի ընտրությունը կատարվում է մահվան քառասունքից անմիջապես հետո։

Դ) ԹԵՄԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐ

104. Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու տեղական իշխանության մարմիններն են.

ա) Թեմը՝ թեմական առաջնորդի գլխավորությամբ.

բ) Փոխանորդությունը՝ առաջնորդական փոխանորդի գլխավորությամբ.

գ) Տուխը՝ ծխական քահանայի գլխավորությամբ.

105. Թեմը կամ եպիսկոպոսական Աթոռը հայ եկեղեցական համայնքների կազմակերպված միավորն է, որի գլուխն է գտնվում մի եպիսկոպոս, որպես հոգևոր առաջնորդ.

106. Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու թեմերն ունեն իրենց ներքին կանոնադրությունները, համաձայն այս Սահմանադրության նախատեսությունների և տեղական պետական օրենքների.

107. Թեմական կանոնադրությունները վավերացվում են Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից.

108. Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Սահմանադրության և հիմնական կանոնների հակասող որևէ տրամադրություն չպետք է տեղ գտնի թեմական կանոնադրությունների մեջ.

109. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թեմերն են.

1. Հայաստանում և Սովետական Միության մեջ՝

ա) Այրարատյան թեմ.

բ) Շիրակի թեմ.

գ) Վրաստանի և Իմերեթիայի թեմ.

դ) Ադրբեջանի և Թուրքեստանի թեմ.

ե) Նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի թեմ.

2. Արտասահմանում.

զ) Պատրիարքություն Հայոց Երուսաղեմի.

է) Պատրիարքություն Հայոց Թուրքիո (Կոստանդնուպոլիս).

ը) Թավրիզի թեմ.

թ) Թեհրանի թեմ.

ժ) Սպահանի թեմ.

ժա) Հնդկաստանի և Մայրագույն Արևելքի թեմ.

ժբ) Իրաքի թեմ.

ժգ) Եգիպտոսի թեմ (Եթովպիան ու Սուդանը ներառյալ).

ժդ) Հունաստանի թեմ.

ժե) Ռումինիայի թեմ.

ժզ) Բուլղարիայի թեմ.

ժէ) Արևմտյան Եվրոպայի թեմ.

ժը) Հայոց Ամերիկայի Միացյալ Նահանգների թեմ (ներառյալ Կանադան).

ժթ) Հայոց Միացյալ Նահանգների Կալիֆոռնիայի թեմ (ներառյալ Մեքսիկան).

ի) Հարավային Ամերիկայի թեմ.

110. Թեմերի ներկայացուցչական և ղեկավար մարմիններն են.

ա) Թեմական և պատգամավորական ժողով, կազմված եկեղեցական համայնքների ծխական ժողովներից ընտրված պատգամավորներից. Թեմական պատգամավորական ժողովը թեմի բարձրագույն ներկայացուցչական կանոնադիր և կարգադիր մարմինն է, որն ընտրվում է չորս տարին մի անգամ և նիստեր է գումարում առնվազն տարին գեթ մի անգամ.

բ) Թեմական խորհուրդը բաղկանում է 7—15 անդամներից, որոնք ընտրում է պատգամավորական ժողովը.

գ) Թեմական խորհուրդը կազմում է կրոնական խորհուրդ.

դ) Թեմի գործադիր իշխանությունը թեմական խորհուրդն է, առաջնորդի նախագահությամբ և ղեկավարությամբ.

ե) Թեմական խորհրդին առընթեր կազմվում են տնտեսական, դատական, կալվածոց, մշակութային, բարեսիրական և այլ մարմիններ, նշանակված թեմական խորհրդի կողմից, թեմական պատգամավորական ժողովի հանձնարարությամբ.

զ) Թեմական պատգամավորական և ծխական ժողովները թեմական և ծխական խորհուրդներին առընթեր ընտրում են վերստուգիչ հանձնաժողովներ՝ թեմերի և ծխերի տնտեսա-ֆինանսական գործառնություններն ու հաշիվները ստուգելու համար.

է) Եկեղեցական համայնքի անդամները կազմում են ծխական ժողովը, որը չորս տարին մի անգամ գումարվելով ընտրում է տվյալ եկեղեցական համայնքի թաղական խորհուրդը՝ բաղկացած 5—7 հոգուց, որը վարում է տեղական եկեղեցական վարչական-մատակարարական գործեր, թեմական խորհրդի և թեմական առաջնորդի վերին հսկողության տակ, թեմական կանոնադրության համաձայն։ Եկեղեցու հոգևոր հովիվը ընտրվում է ծխական ժողովից և հաստատվում թեմական առաջնորդից։

111. Թեմական առաջնորդը ընտրվում է թեմի պատգամավորական ժողովից ձայների երկու երրորդի մեծամասնությամբ և վավերացվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսից։

112. Թեմական առաջնորդը, համաձայն եկեղեցական սուրբ կանոնների և ավանդությանց, ընտրվում է առանց պաշտոնավարության շրջանի սահմանման։ Թեմական առաջնորդը թեմի գլուխն է, անմիջական գործադիր իշխանությունը, պատգամավորական ժողովի և թեմական խորհրդի նախագահը, և ի կոչմանե և ի պաշտոնե ներկայացուցիչը Ամենայն Հայոց Կաթողիկոսի։

113. Թեմական առաջնորդի դեմ ծանրակշիռ և լուրջ մեղադրանքներ լինելու դեպքում, թեմական պատգամավորական ժողովը կարող է անվստահություն հայտնել առաջնորդի նկատմամբ, ձայների երկու երրորդի մեծամասնությամբ, և այն ներկայացնել Մայր Աթոռին ի տեսչություն։ Թեմական պատգամավորական ժողովի որոշման հաստատման պարագային առաջնորդը հրաժարվում է և մեկնում Մայր Աթոռ կամ իր պատկանյալ միաբանության կենտրոնը։

114. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հատուկ և պատճառաբանված որոշմամբ, երկու հարևան թեմերի ընդհանուր թեմականությունը մի առաջնորդի գլխավորությամբ թույլատրելի է։

115. Թեմական առաջնորդ կարող է ընտրվել նաև վարդապետական աստիճան ունեցող հոգևորականը։

116. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մի միաբան կամ Տանն Կիլիկիո Աթոռի մի միաբան կարող են, առաջինը Կիլիկյան թեմերի, իսկ երկրորդը Էջմիածնական թեմերի մեջ պաշտոնավարել միմիայն այն դեպքում, երբ երկու Աթոռների միջև այդ մասին հատուկ համաձայնություն է կայացած։

117. Առաջնորդ վարդապետը կարող է եպիսկոպոս ձեռնադրվել պատգամավորական ժողովի կամ թեմական խորհրդի և կամ պատկանած միաբանության ընծայականի հիման վրա, իսկ Մայր Աթոռում պաշտոնավարող հոգևորականը՝ Գերագույն Հոգևոր Խորհրդի միջնորդությամբ։

118. Թեմի լուծարքը կատարվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի գիտությամբ և հավանությամբ։ Ազգային-եկեղեցական ժողովի վճռահատությամբ, լուծարքի ենթարկված թեմի գույքը փոխանցվում է Մայր Աթոռին։

Ե) ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

119. Թեմական կազմակերպություններից դուրս մնացած եկեղեցական համայնքները, որոնց հավատացյալների թիվը բավարար չի նկատվում իրրև թեմ ճանաչվելու համար, կազմում են հոգևոր հովվություններ՝ ուղղակի ենթակա Մայր Աթոռ Ս. Էջմիածնին։

120. Հոգևոր հովվություններ են՝
ա) Մոսկվայի հայ համայնքը.
բ) Անդրիայի հայ համայնքը (Մանչեստր և Լոնդոն).
գ) Վիեննայի հայ համայնքը։

Զ) ՎԱՆՈՐԱՅՔ

121. Վանքը կրոնական մի հաստատություն է աղոթքի և աշխատանքի, որտեղ ի Քրիստոս սիրով միաբանած կուսակրոն հոգևորականներ մի ուխտ ապրում է և գործում վանահոր ղեկավարության ներքո, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն անձնվիրաբար ծառայելու ուխտով, ժուժկալության, աղքատության և անպարտականավոր հնազանդության հայրապետահաստատ կանոնների համաձայն։

122. Ս. Էջմիածնի վանքը Ամենայն Հայոց Հայրապետի Աթոռն է և Մայրավանքը բոլոր հայ վանքերի։ Միաբանությունը վարում է համայնական վանական կյանք։

123. Վանքերն ունենում են իրենց ներքին վանական կանոնադրությունները։

ԳԼՈՒԽ Թ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

124. Եկեղեցիների եկամուտներն են.
ա) Մխականների լման կամ տուրքը.
բ) Լուսագին (մկրտությունից գոյացած).
գ) Աթոռահաս (պսակներից գոյացած).
դ) Հոգեբաժին (հոգեհանգիստներից գոյացած).
ե) Մոմավաճառությունից գոյացած արդյունք.
զ) Եկեղեցապատկան կալվածներից գոյացած արդյունքներ.
է) Կամավոր նվերներ.
ը) Կտակներից առաջ եկած գումարներ.
թ) Մասնավոր հանդանակությունից գոյացած արդյունքներ.
ժ) «Լուսավորչի լումա».
ժա) Թողոններ միաբանների մահվան դեպքում։

125. Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու օրենքների և ավանդությունների համաձայն եկեղեցապատկան շարժական և անշարժ գույքը և դրամագլուխը Հայ Եկեղեցու սեփականությունն են։ Մայր Աթոռը ճանաչվում է որպես գերագույն սեփականատերը այդ հարստությանց։

126. Յուրաքանչյուր հայ եկեղեցի իր ընդհանուր եկամտի 10 տոկոսը հանձնում է առաջնորդարան, որն այդ գումարի 50 տոկոսն ուղարկում է Մայր Աթոռ որպես տարեկան թեմական տուրք, իսկ մնացած 50 տոկոսը ծախսում է առաջնորդարանի կարիքների վրա։

ԳԼՈՒԽ Ժ

ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

127. Հայաստանյայց Առաքելական Եկեղեցում քվեարկելու իրավունք ունեն բոլոր այն երկսեռ հավատացյալները, որոնք չափահաս են օրենքով։ Ընտրվելու իրավունք ունեն 25 տարիքը լրացրած հավատացյալները։

128. Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին հիմնված է ընտրական ժողովրդավարական սկզբունքների վրա։

129. Ընտրությունները կատարվում են ընդհանուր հավասար, ուղղակի և գաղտնի ձայնատվությամբ։

130. Մեծամասնություն ասելով հասկացվում է 50 տոկոս+1, բացի այն պարագայից, երբ Սահմանադրության և կամ կանոնադրությունների մեջ տարբեր տրամադրություն կա։

131. Թեկնածու ընտրող մարմինների հետ ընտրվում են նաև անձնափոխանորդներ, ընտրվողների թվի կեսի չափով։
Ընտրության իրավունքից զրկվում են՝
ա) Հոգեկան հիվանդները.
բ) Հանցագործ ճանաչվածները.
գ) Կարգալույծները.
դ) Հավատացյալների պարտականություններից շարակամ խուսափողները։

132. Եկեղեցական ազգային մարմինների մեջ կարող են ընտրվել հոգևորականներ և աշխարհականներ առանց որևէ սահմանափակման, բացի այն պարագաներից, որոնց նկատմամբ հատուկ տրամադրություն կա սույն Սահմանադրության մեջ։

133. Ամենայն Հայոց Կաթողիկոսը իրավունք ունի տեր կանգնելու որևէ հայ եկեղեցու կամ թեմի օգտին կտակված կալվածի կամ եկամտի իրրև իրավատեր, եթե տվյալ եկեղեցին կամ թեմը լուծված է։ Կտակը կենսագործվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայեցողությամբ, անկախ կտակում սահմանված ձևից։

ԳԼՈՒԽ ԺԱ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ

134. Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու սույն Սահմանադրության հիմնական վերաքննության կամ մասնակի փոփոխության և կամ լրացման իրավունքը պատկանում է Ազգային-եկեղեցական ժողովին, առնվազն երեք չորրորդի քվեների մեծամասնությամբ։

135. Ամենայն Հայոց Կաթողիկոսը սրբատառ կոնդակ է հրատարակում Սահմանադրության փոփոխությունների և լրացումների մասին։

ՔԱՂՎԱԾՔՆԵՐ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

1958 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ սույն նիստում կարդացվեց Վրաստանի հայոց թեմական խորհրդի նամակը՝ Թբիլիսիի հայոց Ս. Գևորգ եկեղեցու վերանորոգության մասին։

Ժողովը հավանություն տվեց թեմական խորհրդի դիմումին և որոշեց Թբիլիսիի Հայոց Ս. Գևորգ եկեղեցու վերանորոգության համար հատկացնել 46 000 ռուբլի՝ թեմի 1958 թվականի ծախսերի հաշվին։

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ իր սույն նիստում քննեց նաև «Էջմիածին» ամսագրի խմբագրության առաջարկը, Մայր Աթոռի կյանքը և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու գործունեությունը քրիստոնեական քույր եկեղեցիներին ծանոթացնելու նպատակով, առաջիկայում, Մայր Աթոռի տպարանի հաստատումից հետո, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով տարեկան 3—4 համար մի պարբերաթերթ հրատարակելու մասին, որպես հավելվածական հրատարակություն «Էջմիածին» ամսագրի։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը հավանություն տվեց խմբագրության առաջարկին։

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ իր սույն նիստում վավերացրեց Հոգևոր Ճեմարանի 1958—1959 թվականի ուսումնական նոր տարվա դասախոսական կազմը։

1958 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ սույն նիստում կարդացվեցին վրահայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս սրբազանի և Շիրակի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետի դիմումները իրենց թեմերի կարիքների համար, թեմական բյուջեի հաշվին, մարդատար ավտոմեքենաներ ունենալու մասին։ Գերագույն Հոգևոր Խորհուրդը որոշեց բավարարել այս դիմումները։

1958 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ՆԻՍՏԻՑ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ ՀԻՍՆԱՄՅԱԿԻ և գահակալության երրորդ տարեդարձի բարեբաստիկ առիթով, Գերագույն Հոգևոր Խորհուրդը որոշեց Վեհափառ Հայրապետին նվիրել հայրապետական ոսկեձույլ և ադամանդակուռ ԱՐՄԻՎ, հայկական ոճով և Երևանի հայ ոսկերիչների ձեռքով պատրաստված, և նվերը հանձնել հոկտեմբերի 12-ին, Մաղկյա դահլիճում, պաշտոնական շնորհավորությանց ժամանակ։

1958 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ նիստում կարդացվեց Երուսաղեմի Միաբանական ընդհանուր ժողովի միջնորդագիրը, Բաղդադի առաջնորդ Գրիգորիսի Տ. Զգոն ծայրագույն վարդապետ Տեր-Հակոբյանին եպիսկոպոս ձեռնադրելու մասին։ Գերագույն Հոգևոր Խորհուրդը որոշեց հարգել Երուսաղեմի միաբանության միջնորդագիրը և խնդրել Վեհափառ Հայրապետին՝ հոկտեմբերի 19-ին, կիրակի օրը, եպիսկոպոս ձեռնադրել Տ. Զգոն ծայրագույն վարդապետին։

1958 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 4-Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ այսօրվա նիստում լսվեց Վեհափառ Հայրապետի զեկուցումը հոբելյանական հանդիսությունների անցկացման և Մայր Աթոռում հոկտեմբերի 16—23 օրերին գումարված եպիսկոպոսական ժողովի մասին։ Գերագույն Հոգևոր Խորհուրդը խորունկ գոհունակություն արձանագրեց Վեհափառ Հայրապետի զեկուցման առթիվ։

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ սույն նիստում կարդացվեց հունահայ թեմի Ազգային կենտրոնական վարչության 11 հոկտեմբեր թվակիր նամակը, հունահայ թեմը Ս. Էջմիածնից բաժանելու և Աթինայիսին ենթարկելու փորձի մասին։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը քննության առնելով հունահայ թեմը Մայր Աթոռ Ս. Էջմիածնից բաժանելու փորձի մասին վերոհիշյալ նամակը, Ազգային կենտրոնական վարչության որոշումը գտավ հակականոնական և այն համարեց չեղյալ։

1958 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ սույն նիստում լսվեց Վեհափառ Հայրապետի ծննդյան հինգամյակի և Գահակալության երրորդ տարեդարձի հոբելյանական հանդիսությունները անցկացնող Կենտրոնական հոբելյանական հանձնաժողովի նախագահ պրոֆ.-դոկտ. Ա. Ղարիբյանի զեկուցումը՝ հանդիսությունների կազմակերպման և անցկացման արդյունքների մասին։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը գոհունակությամբ արձանագրեց, որ հոբելյանական հանդիսությունները անցան պատշաճ վայելչությամբ և հաջողությամբ։

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ սույն նիստում քննության առնվեց Մայր Աթոռում գումարված եպիսկոպոսական ժողովի կատարած դիտողությունների և ճշտումների վրա սրբագրված Սահմանադրության նախագիծը։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը հետ քննության որոշեց հավանություն տալ Սահմանադրության նախագծին, այն ուղարկել բոլոր նվիրապետական Աթոռներին և թեմերին, հրատարակել մամուլում և ենթարկել համաժողովրդական քննարկման։ Սահմանադրության նախագծի շուրջ արված վերջին դիտողությունների և սրբագրությունների հիման վրա, խմբագրել վերջնական նախագիծ և այն ներկայացնել 1960 թվականի Ազգային-Եկեղեցական ժողովի քննությանն ու հաստատմանը։

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, ժամը 4-ին, Հոգևոր Ճեմարանում բանախոսեց ուխտավորաբար Ս. Էջմիածին եկած ծանոթ բանաստեղծ Վահե-Վահյանը՝ «Սփյուռքահայ գրականությունը» թեմայի շուրջ, որը լսվեց մեծ հետաքրքրությամբ։

Բանախոսության վերջում վերատեսուչ սրբազանը շնորհակալություն հայտնեց պր. Վահե-Վահյանին՝ նրա շահեկան բանախոսության համար։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց և հավուր պատշաճի քարոզեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթաբյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 6-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Հոգևոր Ճեմարանում, հերթական դասախոսության ժամին, բանախոսեց գրագիտուհի տիկին Սիրան-Սեզա Քյուսիեյանը, «Կրոնը իբրև կոչում և իբրև ասպարեզ» թեմայի շուրջ։ Բանախոսությունը լսվեց մեծ հետաքրքրությամբ։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում Վեհափառ Հայրապետը, գերապատիվ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանի խարտավիլակությամբ, եպիսկոպոս ձեռնադրեց հոգեշնորհ Տ. Գնել ծայրագույն վարդապետ Ճերեճյանին, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Տեղապահ ամենապատիվ Տ. Խաչ արքեպիսկոպոսի գրավոր միջնորդագրի հիման վրա։

Նոյեմբերի 19-ին նորապսակ Տ. Գնել եպիսկոպոսը Մայր Տաճարում մատուցեց իր սենդրանիկ պատարագը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Ավագ Սեղանի վրա պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ քահանա Մկրտչյանը և քարոզեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետը՝ «Հա եմ ճանապարհ, ճշմարտություն և կեանք» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետին այցելեց չեխ հայտնի գիտնական և հայագետ պրոֆ. Ցարոմիր Եղլիչկան։

Վեհափառ Հայրապետը սրտագին զրույց ունեցավ չեխ հայագետի հետ՝ հայ մշակույթի վերաբերյալ հարցերի շուրջ։

Հարգելի հյուրը ապա այցելեց Մայր Տաճարը, եղավ հնագիտական թանգարանում, Հոգևոր Ճեմարանում։ Վերջում պրոֆ. Ցարոմիր Եղլիչկան Մայր Աթոռի ոսկեմատյանում հայերեն գրեց հետևյալը. «Խոր զգայմունքով և խոր հարգանքով կանգնած եմ Ս. Աթոռի Տաճարում, որ աշխարհի բոլոր հայերի հոգևոր կենտրոնն է։ Շատ շնորհակալ եմ, որ հնարավորությունը ունեցա էջմիածինը և Վեհափառ Հայրապետին տեսնելու և անձամբ զրուցելու։ Վեհափառին բաջառողջություն եմ դանկանում»։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, ժամը 1-ին, Հոգևոր Ճեմարանի հայոց լեզվի և գրականության դասախոս պր. Պարգև Ճահրազյանը բանախոսեց «Շիրվանզադեն» թեմայի շուրջ, մեծ վիպասանի ծննդյան 100-ամյա հոբելյանի առիթով։ Հարգելի բանախոսը գեղեցկորեն նկարագրեց մեծ գրողի գրական վաստակը, հանգամանորեն

կանգ առնելով Շիրվանզադեի բազմակողմանի և հարուստ գրական ժառանգության վրա։ Վերջում վերատեսուչը խորին շնորհակալություն հայտնեց հարգելի բանախոսին՝ այդ գեղեցիկ ու շահեկան դասախոսության համար։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, «Ընծայումն Ս. Աստուածածնի ի Տաճարն»։

Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Քելամյանը և օրվա տոնի մասին քարոզեց լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը։

Նույն օրը, ժամը 2-ին, Վեհարանում կայացավ մանկավարժական խորհուրդ, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ, մասնակցությամբ Հոգևոր Ճեմարանի տեսչական և դասախոսական ամբողջ կազմի։

Քննության առնվեցին Հոգևոր Ճեմարանի ուսումնական պլանի, ներքին կարգապահության, ուսանողության, աշխատասիրության, կազմակերպված սերտողության վերաբերյալ հարցեր և ընդունվեցին համապատասխան գործնական որոշումներ։

Մանկավարժական խորհրդակցությունից հետո, ժամը 3.30-ին, Վեհափառ Հայրապետը բարեհաճեց Իրեն սեղանակից դարձնել Հոգևոր Ճեմարանի տեսչական և դասախոսական ամբողջ կազմին։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց Տ. Հակոբ քահանա Հակոբյանը և քարոզեց հոգեշնորհ Տ. Հուսիկ աբեղա Սանթուրյանը՝ «Հայր մեր» ընթերցանով։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-ԻՆ, ՇԱԲԱԹ, «Տօն Սրբոց Առաքելոց և առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի և Բարթողիմէոսի»։

Մայր Տաճարում, օրվա եկեղեցական մեծ տոնի առիթով, պատարագեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-ԻՆ, ՇԱԲԱԹ, հետ միջօրեի ժամը 1.30-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց սրահում տեղի ունեցավ հանդիսավոր նիստ՝ նվիրված Հայաստանում Սովետական կարգերի հաստատման 38-րդ տարեդարձին։

Հանդիսավոր նիստին ներկա էին Մայր Աթոռի ամբողջ մրցանությունը, Հոգևոր Ճեմարանի տեսչական և դասախոսական կազմը, ուսանողությունը, Մայր Աթոռի ողջ պաշտոնեությունը։

Հայաստանում Սովետական կարգերի հաստատման 38-րդ տարեդարձի ազգային մեծ տոնի պատմական նշանակության մասին բովանդակալից և գեղեցիկ զեկուցումով հանդես եկավ Հոգևոր Ճեմարանի դասախոս պր. Գրիգոր Գյուլյանը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-ԻՆ, ՇԱԲԱԹ, երեկոյան ժամը 7-ին, Վեհափառ Հայրապետը Հոգևոր Ճեմարանի ուսանողության դասախոսեց «Մաքրություն» թեմայի շուրջ, որը լսվեց մեծ հետաքրքրությամբ և երախտագիտությամբ։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ կատարվեց Կառավարական մաղթանք, հավատացյալների խումբ բազմության ներկայությամբ, Հայաստանում սովետական կարգերի հաստատման 38-րդ տարեդարձի առթիվ։

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՇՔԱՆՇԱՆԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

1958 թվականի սեպտեմբեր 13, 16, հոկտեմբեր 15 և դեկտեմբեր 1 թվակիր հայրապետական սրբատառ կոնդակներով, Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի ականակուռ ոսկյա շքանշանով պարգևատրվել են Մայր Աթոռի հետևյալ հարազատ զավակները, իրենց բարի, աստվածահաճո և եկեղեցաշեն գործերի համար.

Մեծահարգ տիար ՍԱՐԳԻՍ ՏԻԱՐՊԵՔԻՐՃԱՆ, Նյու-Յորք.

Մեծահարգ տիար ԵՐՎԱՆԴ ԱՂԱՃԱՆՑԱՆ, Նյու-Յորք.

Մեծահարգ տիար ԳԵՎՈՐԳ ԼՈՐԻՍ ԵՍԱՅԱՆ, Փարիզ.

Մեծահարգ տիար ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԿԻՆՑԱՆ, Սիդնեյ.

Մեծահարգ տիար ՍԻՄՈՆ ՂԱՐԻԹՅԱՆ, Բաղդադ.

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿ

1958 թվականի հոկտեմբերի 1-ին և 10-ին, իրենց եկեղեցական և բարեսիրական գործերի համար, հայրապետական օրհնության կոնդակի են արժանացել հետևյալ հավատացյալները.

Ազնվափայլ տիկին ԱԶՆԻՎ ԳԱՆԹԱՐՃՅԱՆ, Հալեպ.

Մեծահարգ տիար ԵԴՎԱՐԴ ՈՒԹՈՒՃՅԱՆ, Փարիզ.

Մեծահարգ տիար ՍԱՀԱԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ, Փարիզ.

Մեծահարգ տիար ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ, Փարիզ.

Մեծահարգ տիար ԱՇՈՏ ՊԱՏՄԱԳՐՅԱՆ, Փարիզ.

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԼԱՆՋԱԽԱՉԻ ԵՎ ԾԱՂԿՅԱ ՓԻԼՈՆԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրապետի 1958 թվականի նոյեմբերի 19 թվակիր սրբատառ կոնդակով, գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանի և գերաշնորհ Տ. Զգոն եպիսկոպոս Տեր-Հակոբյանի միջնորդությամբ, երկարատև և անբասիր ուսաստավորության համար, քահանայական լանջախաչ կրելու իրավունք է շնորհվել՝

Արժանապատիվ Տ. ԳԵՂԱՄ ՔԱՀԱՆԱ ՓԱՇԱՅԱՆԻՆ, Բոստոն.

Արժանապատիվ Տ. ՊՈՂՈՍ ՔԱՀԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ, Կալկաթա.

Արժանապատիվ Տ. ՍԱՀԱԿ ՔԱՀԱՆԱ ԱՑՎԱՋՅԱՆԻՆ, Բոմբեյ.

Վեհափառ Հայրապետի 1958 թվականի դեկտեմբերի 6 թվակիր կոնդակով և Բաքվի առաջնորդական փոխանորդ եպիսկոպոս Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանի միջնորդությամբ՝

Արժանապատիվ Տ. ԵՂԻԱԶԱՐ ՔԱՀԱՆԱ ՔԵՇԻՇՅԱՆԻՆ, Իդոնեզիա (Ծաղկյա փիլոն).

Արժանապատիվ Տ. ՆՇԱՆ ՔԱՀԱՆԱ ԲԵՑԼԵՐՅԱՆԻՆ, Կիրովաբադ.

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը իր սրտագին շնորհավորություններն է հայտնում հայրապետական բարձր գնահատության արժանացողներին և ցանկանում է նրանց հետագա հաջողություններ.



ՀԱՅՐԵՆԻ ԹԵՄԵՐՈՒՄ

ԲԱՍԱՐԳԵՋԱՐԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐՍԲԱՑՈՒՄԸ

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, Մայր Աթոռի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, ընկերակցությամբ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Գալամդարյանի և բարեշնորհ Հակոբ սարկավագ Պոզապալյանի, սեպտեմբերի 20-ի շաբաթ օրը կեսօրե վերջ ճանապարհվեցին դեպի Բասարգեչար՝ ներկա գտնվելու եկեղեցու վերաբացման հանդիսության և կատարելու եկեղեցու սրբման կարգը։

Բասարգեչարի պատմական անունն է եղած Սոդք։ Նա Սևանա լճի հարավ-արևելքում բացված մի շրջկենտրոն է, լճի ափից հազիվ 15 կմ. հեռավորությամբ։ Նա սահմանակից է Ղարաբաղին ու Շամխորին։ Ժողովրդի զգալի մասը Ալաշկերտից ու Բայազետից եկվորներ են։

Երբ Սևանա ծովի կապույտից ակամա մեր աչքերը բաժանվեցին, փարթամ կանաչի մեջ երևաց երկնի կապույտին սլացող մի գմբեթ, երկնայինը երկրայինին կապող մի օղակ։ Մայրամուտի այս խորհրդավոր ու հմայիչ պահին, ամայության ու լռության մեջ, մարդկային հոգին ինքնաբերաբար տենչում է աղոթքի։ Այսպիսի հոգեկան սլացքի մեջ էինք, երբ հասանք Բասարգեչար։

Մեզ դիմավորեցին արժանապատիվ Տ. Զավեն, Տ. Մեսրոպ, Տ. Հակոբ քանահա հայրերը, շրջապատված հավատացյալ ժողովրդի հոծ բազմությամբ։

Սրբազան հայրը «Հրաշափառ»-ով առաջնորդվեց եկեղեցի, որ իսկապես ճարտարապետական մի շքեղ կոթող է։

Բասարգեչարի եկեղեցին կառուցվել է 1905—1912 տարիների ընթացքում, նախկին Ս. Աստվածածին եկեղեցու վայրում, նույն անունով, Խորեն Կաթողիկոս Մուրադբեկյանի Արարատյան թեմի առաջնորդության շրջանում։

Վերստին դողանքում էին Ս. Աստվածածին եկեղեցու դանգերը։ Երեկոյան ժամերգության պահն է. «Ես առ Աստուած կարդացի և նա լուաւ ինձ յերեկոյս...»։ Պայծառ և վեհ եկեղեցում տարածվում է «Լոյս զուարթ»-ի մեղեդին, խնկի թավիշ մշուշով։ Արարողությունը շատ քաղցր է ու առինքնող, աղոթքի և խնկի ծարավ հոգիները տրախության և գոհունակության արցունք են թափում։ Կիրակամտի ժամերգության ավարտին Սահակ սրբազանը հոգեշունչ քարոզ է ասում. նա ժողովրդին շնորհավորում է և խրատում՝ ապրել իրենց պապերի ոգով ու հավատով, շեն պահելով Աստուծո Տունը։

Սեպտեմբերի 21-ի կիրակի օրը, առավոտյան ժամերգությունից հետո, կատարվեց եկեղեցու սրբման կարգը. «Օրհնեսցի և սրբեսցի եկեղեցիս...»։ Մաքրված ու սրբված եկեղեցում պատարագ է մատուցում սրբազան հայրը։ «Հայր մեր»-ից առաջ սրբազան հայրը քարոզեց։ Սրբազանը հաղորդեց Վեհափառ Հայրապետի օրհնություններն ու ողջույնը, ապա խոսեց Հայ Եկեղեցու և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կատարած պատմական դերի մասին, հայ հավատացյալ ժողովրդի կյանքում։ Վերջում սրբազանը սրտաբուխ բարեմաղթություններ է անում Ս. Էջմիածնի անսասանության, Վեհափառ Հայրապետի կյանքի արեշատության և հայ ժողովրդի և Մայր Հայրենիքի հետագա է՛լ ավե-

ի զարգացման և վառ ապագայի համար։ Հավարտ սուրբ պատարագի, հավատացյալներից շատերը երկյուղով և հավատով մոտենում են սուրբ հաղորդության։

Եկեղեցու բացման ուրախ առիթով հավատացյալները բազմաթիվ նվերներ էին ուրախությունն ու գոհունակությունը։ Մենք խորապես վայելեցինք մեր հավատացյալ ժողովրդի ազնիվ հյուրասիրությունը և մեծ գոհունակությամբ բաժանեցինք նրա զայն ու հացը եկեղեցու վերաբացման ուրախ առիթով։



ԲԱՍԱՐԳԵՉԱՐԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

բերել։ Սրբազան հայրը օծեց և օրհնեց նաև նվեր բերված սրբապատկերները։ Հավարտ սուրբ պատարագի եկեղեցու բակում տրվեց մատաղասեղան։ Սրբազանը օրհնեց և ապա նախագահեց սեղանին։

Դժվար է նկարագրել ժողովրդի խանդավառությունը, սրտաբաց ընդունելությունը,

Սեպտեմբերի 22-ին, երկուշաբթի օր, մենք հրաժեշտ առինք Բասարգեչարի ազնիվ և հավատացյալ ժողովրդից և լավագույն տպավորություններով վերադարձանք Մայր աթոռ։

ՀԱԿՈԲ ՍԱՐԿԱՎԱԳ ՊՈՂԱՊԱՆՅԱՆ

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ՊՍԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԹՈՒՄԱՅԱՆ

ԼԱՄԲԵԹԻ ԺՈՂՈՎԸ

Լամբեթի ժողովը մեկն է Անգլիական Եկեղեցվո մեծագույն դեպքերեն, որ տասը տարին անգամ մը տեղի կունենա և ուր կփութան անգլիկան եպիսկոպոսներ աշխարհի չորս կողմերեն՝ խորհրդակցություններ ունենալու համար։ Ան իր անունը կառնե Լամբեթի պալատեն, ուր կգումարվի ժողովը և որ միևնույն ատեն պաշտոնատունն է Քենտրբերիի Արքեպիսկոպոսին— նախագահը և հրավիրողը այս հավաքույթին։ Այս ժողովներեն առաջինը տեղի ունեցավ 1896-ին, Լոնդրի արքեպիսկոպոսին ատեն, երբ շուրջ 76 եպիսկոպոսներ ժողովի եկան։ Բայց հետզհետե, ժամանակի ընթացքին, ան եղավ կարևոր և ազդեցիկ ժողով մը, որուն իր մասնակցությունը բերավ եպիսկոպոսներու մեծ թիվ մը։ Զոր օրինակ, վերջին անգամ, 1948-ին, 326 եպիսկոպոսներ ներկա էին, իսկ այս տարի՝ 317։

Լամբեթի ժողովը ավելի խորհրդակցական մարմին մըն է, քան թե օրենսդրական, և իր նիստերը դռնփակ են՝ անգլիկան թեմական եպիսկոպոսներու միայն վերապահված։

Սովորություն եղած է այս առթիվ հրավիրել նաև օտար եկեղեցիներու ներկայացուցիչներ, որպեսզի անոնք մասնակցին Քենտրբերիի Մայր Եկեղեցին տեղի ունեցող ժողովի բացման հանդիսավոր պաշտամունքին, ներկա ըլլան ժողովի կապակցությամբ կազմակերպված ընկերային հավաքույթներու (ճաշկերույթ, թեյասեղան և այլն) և ապա պաշտոնապես ընդունվին ժողովեն, ուր իրենց ևս կառաջարկվի խոսք առնել։ Այս տարվան ժողովին ներկայացուցիչներ եկած էին Կոստանդնուպոլսո Հույն Օրթոդոքս Պատրիարքութենեն և Ռումանիո, Բուլղարիո և Հին Կաթոլիկ Եկեղեցիներեն։ Անգլիո Հայրապետական պատվիրակ գերապատիվ Տ. Պսակ եպիսկոպոս Թումայան ևս պաշտոնապես հրավիրված էր։

Օտար եկեղեցիներու ներկայացուցիչներու պաշտոնական ընդունելություն տեղի ունեցավ շաբաթ օր, հուլիս 5-ին։ Բոլոր արքեպիսկոպոսներն ու եպիսկոպոսները հավաքված էին Լամբեթի պալատի մատենադարանի մեծ սրահին մեջ, նախագահությամբ Քենտրբերիի արքեպիսկոպոսին, ընդունելու համար այլ եկեղեցիներու ներկայացուցիչները։

Ընդհանրապես անգլիկան եպիսկոպոս մը ժողովին կներկայացնե պատվիրակությունները յուրաքանչյուրը։ Արևմտյան ՆյուՅորքի եպիսկոպոս Լ. Լ. Սքեյֆ ներկայացուց Ութրեխտի հին կաթոլիկ արքեպիսկոպոսը։ Օքսֆորտի եպիսկոպոս Հ. Ճ. Կարպինտր ներկայացուց օրթոդոքս եկեղեցիները։ Դոկտ. Ա. Ֆ. Մաք Ինեես, Երուսալեմի անգլիկան արքեպիսկոպոսը, ժողովին ներկայացուց գերաշնորհ Տ. Պսակ եպիսկոպոս Թումայանը։ Բուրաքանչյուր պատվիրակություն ներկայացվելեն հետո՝ խոսք տրվեցավ պատվիրակներուն։

Մաք. Իննես արքեպիսկոպոսը հետևյալ օրտագին ճառով ներկայացուց Հայաստանյայց Եկեղեցին և Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի ներկայացուցիչ Տ. Պսակ սրբազանը.

«Մեծագոյն առանձնաշնորհ մը կնկատեմ, որ այս կնոջոր ետք կարողացած եմ հոս գալ և ողջունել Տ. Պսակ եպիսկոպոս Թումայանը՝ որպես մասնավոր ներկայացուցիչը Լոնդոնի մեջ Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետին։ Ոչ միայն հաճույք մըն է այսպիսի մեծ անձնավորության մը ներկայացուցիչը ողջունել, այլ նաև ուրախություն՝ ողջունելով մեկը, որ երկար տարիներե ի վեր կճանչնամ։

Որքան հիշողությունս կներե, իրեն հանդիպած եմ երեսուն տարի առաջ Երուսաղեմի մեջ, ուր ան աստվածաբանության ուսանող էր Երուսաղեմի Հայոց Ժառանգավորաց վարժարանը, և որքան մեծ եղավ ուրախությունս, երբ քանի մի տարի առաջ Լոնդոն գալով տեղեկացա, որ ան հաստատված էր այս երկիրը։

Եթե կխոսիմ Երուսաղեմի Եկեղեցվույն և անոր հետ ունեցած մեր հարաբերությանց մասին, պարզապես անոր համար է, որ հոն՝ անգլիական համայնքին մեջ հատկապես շատ սերտ հարաբերություն ունեցած ենք Հայ Եկեղեցվույն հետ։ Պսակ սրբազանի ուսանողության շրջանին Երուսաղեմի պատրիարքն էր շատ մեծ մարդ մը և մեծ պատմաբան մը— Դուրյան պատրիարք։ Վարժարանին տեսուչն էր մեկը, որ Երուսաղեմ այցելողներու ծանոթ էր Հայր Կյուրեղ (Ֆաթըր Սիրըլ) անունով, որ հետո եղավ պատրիարք Երուսաղեմի, և մենք արդարև կսգանք իր վաղաժամ մահը 1949-ին։ Հայր Կյուրեղ իրև պատրիարք, ինչպես նաև իր տեսչության օրերուն՝ մեծ ջանքեր ըրավ ավելի սերտ հարաբերություն առաջ բերելու համար իր Եկեղեցվույն և մերինին միջև. և զայս իրագործեց հաճախ աչքիպի փոքրիկ միջոցներով, որոնք կրնան մոռցվիլ։

Ժառանգավորաց Վարժարանի իր տեսչության օրերուն մեր համայնքեն մեկը իր մասնակցությունը կբերեր կրթական այդ գործին։ Հայր Բրիջմեն, Ամերիկայի Բողոքական Եպիսկոպոսական Եկեղեցիեն քահանա մը, երկար տարիներ ուսուցիչ եղավ այնտեղ և ուրիշներ իրեն հաջորդեցին։ Ավելի վերջերս ուսուցիչ տված էինք նաև Անթիլիասի (Լիբանան) Ժառանգավորաց վարժարանին։ Ստիպվեցանք զայն առժամապես դադրեցնել քաղաքական կացության պատճառով։

Այսպես, մենք մասնավորաբար սերտ կապ կհաստատեինք մեր մասնակցությունը բերելով դաստիարակության գործին անոնց, որոնք Հայ Եկեղեցվո պաշտոնյաները պիտի ըլլային։

Ուրիշ ապացույց մը Երուսաղեմի մեջ գոյություն ունեցող այս մոտիկ հարաբերության՝ այն իրողությունն է, որ Ավագ հինգշաբթի օրը, Ոտնալվայի արարողությունեն հետո, ժողովուրդին մեջեն հրավիրվեցաք, զգեստավորված շուրջառով և թագով, անգլիերեն կարդալու Ոտնալվայի Ավետարանը վերջին օրհնությունեն առաջ։ Ասիկա սովորություն մըն է, և կարծեմ առաջին անգամ տեղի ունեցած է Ա պատերազմին հաջորդող տարին, երբ հայրս Երուսաղեմի եպիսկոպոս էր և անակնկալորեն հրավիրվեցավ զգեստավորվիլ, Ավետարանը կարդալ և ապա իր օրհնությունը տալ։

Ահա այն սովորական և ընտանի կերպերը, որոնց միջոցով սերտ հարաբերություն մշակած ենք Հայ Եկեղեցիին և եկեղեցականներուն հետ և հետզհետե իրազեկ եղած իրենց կորովին, քաջությանց և բազմապիսի բացառիկ հիրքերուն, որոնցմով օժտված են անոնք։

Մեծապես կհուսայինք, որ այս տարի կարելի պիտի ըլլար բանակցությանց ձեռնարկել Երուսաղեմի մեջ,— նախնական խոսակցություններ,— որոնց հիման վրա թերևս կարելի ըլլար ապագա բանակցությանց որակարգը պատրաստել։

Ամենքդ ալ տեղյակ եք այն դժվարությանց, որոնք վրդոված են Միջին Արևելքը։ Պիտի չփորձեմ լայնորեն խոսիլ Ձեզի ներկա ժամանակներու քաղաքական հարցերու և ոչ ալ այն դժվարությանց մասին, որոնց մեջեն կանցնի Հայ Եկեղեցին։

Պատրիարք Տիրան Ներսոյան, որ Պսակ եպիսկոպոս Թումայանի նախորդներեն մեկն էր Լոնդոնի մեջ, պատրիարք ընտրվեցավ, բայց իր ընտրությունը չէ վավերացված կառավարության կողմե, հետևաբար իր դիրքը կմնա բարդ և դժվարին։ Ու երբ կողջունենք իրենց ներկայացուցիչը այստեղ, կաղոթենք, որ շուտով խաղաղություն հաստատվի այդ Եկեղեցիեն ներս և մենք կարողանանք շուտով ավելի մանրամասն բանակցությանց ձեռնարկել ի մասին մեր հարաբերությանց, որոնք այնքան երջանիկ եղած են երկար տարիներե ի վեր։

Երկու տարի առաջ պատիվը ունեցա Պսակ եպիսկոպոս Թումայանի հետ Լոնդոնի օդանավակայանը երթալու և որպես Ձերդ Գերապատվություն Քենտրբերիի Արքեպիսկոպոսին ներկայացուցիչը, բարիգալուստ մաղթելու Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ Անգլիա կայցելեր։ Վստահաբար առաջին անգամն էր, որ Կաթողիկոս՝մը Անգ-

լիա կայցելեր։ Ասկէ առաջ, կարծեմ հարյուրաւոր տարիներէ ի վեր, ոչ մէկ կաթողիկոս հեռացած էր Ս. Էջմիածնէն։ Պատմական այցելութիւն մըն էր և կխորհիմ ամենքս ալ մեծապես տպաւորվեցանք այն մարդէն, որ այդ բաները պաշտոնը կվարե, և երբ հիմա այստեղ կողջունենք սրբազանը, պիտի խնդրենք, որ մեր ողջույնները հաղորդեր Կաթողիկոսին, որուն ներկայացուցիչն է, և նաև ըսե, թե որքան կփափագինք արտահայտել մեր ի Քրիստոս միությունը այս մեծ Եկեղեցիին հետ և այն հիացումը, զոր կզգանք անոր հանդեպ այն կեցվածքին համար, որով ան դարերէ ի վեր տոկացած է հալածանքներու, օրինակ հանդիսացած է Եկեղեցիներու աշխարհի ամեն կողմ. և թե հակարելի է խաղաղությունը պահպանել, հակառակ որ ընդհանրապես կապրին որոշ սպառնալիքի տակ ապրող փոքրամասնություն մը, ժողովուրդներու մեջ, որոնց մեծամասնությունը կպատկանի այլ կրոնքներու։

Հետևաբար, Պսակ սրբազան, կողջունենք զՁեզ, և ուրախ ենք տեսնելու, որ այդ Եկեղեցին կներկայացնեք այս ժողովին մեջ։

Ապա ժողովին մեջ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատվիրակ Պսակ եպիսկոպոս Թումայան խոսք առավ և ըսավ.

«Ձերդ Գերապատվություն և սրբազան եպիսկոպոսունք.

Պարտք կզգամ Ձերդ Գերապատվության և այստեղ ներկա եղող արքեպիսկոպոսներուդ և եպիսկոպոսներուդ հաղորդելու Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Ս. Կաթողիկոսին եղբայրական ողջույնը և Լամբեթի ժողովիդ մաղթել լիակատար հաջողություն՝ իր բոլոր կարևոր հանձնառությանց մեջ։

Ձերդ Գերապատվություն.

Առաջին անգամն է, որ հայ եպիսկոպոս մը առանձնաշնորհումը կունենա Լամբեթի ժողովիդ հրավիրվելու. և այս ազնիվ ժեստը կարելի չէ ավելի նշանակալից կերպով բացատրել քան այն իրողությամբ, թե զարուս սկիզբեն ի վեր սիրալիր հարաբերություններ կմշակվին Անգլիական և Հայ Եկեղեցիներու միջև։

Ոչ մէկ տեղ այս բարեկամությունը այնքան ակներև է, որքան Երուսաղեմի մեջ, Անգլիկաններու և Հայոց Պատրիարքարանին միջև. հոն անգլիական եպիսկոպոսը կհրավիրվի մասնակցիլ Ռոնալվայի հանդիսավոր արարողության, Ս. Հակոբյանց Մայր Տաճարին մեջ, Ավագ հինգշաբթի օրը։

Բայց այս սերտ բարեկամությունը իր բարձրակետին հասավ այն օրը, երբ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Սրբազան Կաթողիկոսը այս երկիրը այցելեց որպես հյուրը Քենտրբերիի Արքեպիսկոպոսին և երկուքը միասին ներկա եղան սուրբ պատարագին և հայտարարեցին իրենց ամենեղջ բարեկամությունը։

Ավելին. իրև հետևանք երկու Եկեղեցիներու միջև տեղի ունեցող ուրախառիթ և բարեկամական այս դեպքերուն, երկուստեք առաջարկվեցավ ավելի առաջ երթալ և Անգլիկան և Հայ Եկեղեցիներու միջև ժողով մը գումարել՝ ծանոթանալու համար երկու եկեղեցիներու վարդապետական զանազան տեսակետներուն, և ադով զիրար լավագույն կերպով հասկնալու։ Այս բանակցությունները, որոնք պիտի սկսին անցյալ մայիսին, առժամապես հետաձգվեցան այն հույսով, որ կարելի պիտի ըլլա զանոնք շուտով սկսիլ։

Ձերդ Գերապատվություն.

Կապրինք այնպիսի ժամանակի մը մեջ, երբ Քրիստոսի հոգևոր մարմնույն միությունը գերազանցորեն անհրաժեշտ է, արժանապես կատարելու համար պարտականությունները, զորս Աստված դրած է յուրաքանչյուր Եկեղեցվո ուսերուն վրա, նյութապաշտ և հակակրոն աշխարհի մը մեջ։ Կապրինք այնպիսի դարաշրջանի մը մեջ, ուր ավելի զորավոր Եկեղեցվո մը կարիքը կա ասպարեզ կարդալու խավարի ուժերուն, որոնք կսպառնան մեր կրոնքի հիմնական սկզբունքներուն։ Միութենե զուրկ և բաժանյալ Եկեղեցի մը չի կրնար ախոյանը հանդիսանալ մեր հավատքին։

Եկեղեցվո միությունը ոչ մէկ ատեն այնքան հրամայական եղած է, որքան է մեր օրերուն։ Դարուս սկիզբեն ի վեր, եկեղեցիներու միջև միության փափագը եղած է քրիստոնեական ճշմարիտ կյանքի դլխավոր հրևույթներեն մին։

Հայոց Եկեղեցին միշտ իր սրտին մոտ նկատած է քրիստոնեական միության կարևորությունը և չէ դադրած երբեք աղոթելե համայն քրիստոնեից միության համար։ Մեր ամենօրյա աղոթքներուն մեջ կաղերսենք՝ «զի միաբանեսցէ զեկեղեցի իւր սուրբ, շինեալ ի վերայ հիման առաքելոց և մարգարէից»։

Քրիստոսաբանական վեճերեն ի վեր,—երբ մարդկային փառասիրությունները և եկեղեցիներեն ոմանց տիրապետական ձգտումները իրենց դերը կատարեցին և պատճառ եղան քրիստոնեության բաժանման,—Հայոց Եկեղեցին թեև նախընտրեց բացարձակ մեկուսացման կյանք մը, այնուամենայնիվ, բարեկամությամբ ողջունեց եկեղեցիներու միության ամեն ջանք՝ առանց սակայն շեղելու իր անկախության դիրքերեն։

Սակայն հիմա, որ ժամանակները փոխված են և հաղորդակցության արդի միջոցներով ժողովուրդները ավելի մոտեցած են իրարու և այս իսկ պատճառով անարդարանալի կըլլա եկեղեցական մեկուսացումը, ատենն է, որ քրիստոնեական եկեղեցիները մեծագույն ճիգ մը ընեն դեպի միություն և տեսնեն անոր իրագործումը այս աշխարհի վրա։

Ուրախ ենք տեսնելու, որ սկիզբեն ի վեր անգլիկանք բարձր կրոնեն եկեղեցվո միության դրոշը։ Հայոց Եկեղեցին կրնա զՁեզ և ուրիշ որևէ եկեղեցի վստահեցնել, թե ինք սիրով պիտի ողջունե ամեն նման շարժում և անկեղծորեն պիտի գործակցի, ինչպես եղած է միշտ իր դարավոր ավանդությունը, պայմանով որ այդ շարժումը տեղի ունենա փոխադարձ հարգանքի և քրիստոնեական սիրո մթնոլորտի մը մեջ։

Ձերդ Գերապատվություն.

Իմ խոսքս վերջացնելն առաջ, կփափագիմ այս առիթով շնորհակալություն հայտնել այն ամեն օժանդակության համար, զոր ընծայած էիք մեզի մեր դժվարությանց մեջ։ ՁՁեզ կրնամ վստահեցնել, որ Հայ Եկեղեցին Ձեր սիրելի անձնավորության մեջ միշտ պիտի ողջունե իր մեծ և անկեղծ բարեկամը։

Վերջացնելով խոսքս, կկրկնեմ այն ադոթքը, զոր կմատուցանենք հայ եկեղեցիներու մեջ Քրիստոսի Եկեղեցվույն միության համար. «Զխաղաղութիւն շնորհեա Եկեղեցւոյ քում սրբոյ, զխաղաղութիւն և զանշարժութիւն ի թշնամեաց պատերազմէ, և հաստատեա ի մի հաւատս զԿաթողիկէ Եկեղեցի. զՔեզ խոստովանիմք Տէր և Աստուած, կեցո զմեզ։»

Լամբեթի ժողովին մեջ 131 որոշումներ որդեգրվեցան։

Այս որոշումներեն 42-րդը կվերաբերի Հայոց Եկեղեցվույն.

«Ժողովը սիրով կողջունե բանակցությանց կարելիությունը Հայ Եկեղեցվո ներկայացուցիչներուն հետ, Անգլիկան և Հայ Եկեղեցիներուն միջև ավելի սերտ բարեկամություն հառաջացնելու նպատակով։ Ան ցավով կդիտե այժմու այն դժվարությունները, որոնցմե կանցնին այս հին Եկեղեցվույն անդամները, և կաղոթե, որ անոնք շուտով հաղթահարվին։ Ժողովը կխնդրե Քենտրբերիի Արքեպիսկոպոսեն քայլեր առնել կարգադրելու համար այս բանակցությունները Հայ Եկեղեցվո ներկայացուցիչներուն հետ՝ երբ ժամանակը նպաստավոր թվիս։

Մեր եկեղեցվո մասին ուրիշ ակնարկություն մը կա հանձնախումբերու տեղեկագրին մեջ (էջ 2/50), «Ուրիշ Արևելյան Եկեղեցիներ» գլուխին տակ.

«Ի սկզբանե աշխարհի իր համայնքներուն տված այցելության ընթացքին, Հայոց Ընդհանրական Կաթողիկոսը Անգլիա եկավ էջմիածնեն 1956-ին և ընդունվեցավ Քենտրբերիի Արքեպիսկոպոսեն։ Որոգրվեցավ նախապատրաստական բանակցությանց ձեռնարկել Անգլիկան և Հայ Եկեղեցիներու միջև 1958-ի Զատկին, Երուսաղեմի մեջ։ Կարգ մը վայրերու մեջ Հայ Եկեղեցվո դրժրախտորեն ունեցած դժվարությունները պատճառ եղան այս խոսակցությանց հետաձգման։ Այսուամենայնիվ, աշխարհի այլ մասերեն վկայություններ կան անգլիկան և հայ քրիստոնյաներու միջև շարունակվող բարեկամական հարաբերությանց»։

ՄԻԼԱՆՈՅԻ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՑ ՔԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՈՒՄԸ

1958 թվականի սեպտեմբերի 7-ին, կիրակի օրը, մեծահանդես շքով կատարվել է Միլանոյի հայոց նորակերտ Ս. Քառասնից Մանկանց եկեղեցու օծման սրտառուչ արարողությունը։

Նորակերտ եկեղեցու օծման հանդիսություններին նախագահել է Կոստանդնուպոլսի ամենապատիվ պատրիարք Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյանը, մասնակցությամբ Փարիզի առաջնորդ և Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Սերովբե եպիսկոպոս Մանուկյանի։

Սեպտեմբերի 6-ին, շաբաթ օրը, կատարվել է եկեղեցու նավակատիքը, իսկ կիրակի օրը՝ օծումը։

Միլանոյի հայոց նոր եկեղեցու օծման հանդիսություններին մասնակցելու համար, այդ ուրախ առիթով Միլանո էին ժամանել Իտալիայի ամբողջ հայ գաղութը, Հապեշըստանից, Եգիպտոսից, Սիրիայից, Լիբանանից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Իսպանիայից և ԱՄՆ-ից և այլ երկրներից բազմաթիվ կրոնասեր և հայրենասեր ուխտավորներ, օտար եկեղեցիների ներկայացուցիչներ և պաշտոնական անձնավորություններ, հյուրեր, հայ ժողովրդի բարեկամներ։

Պատարագել է պատրիարք սրբազանը։ Սուրբ պատարագի արարողությունը երգել է փարիզահայ երգչախումբը, պր. Արա Պետրոսյանի ղեկավարությամբ և ծանոթ երգչուհի օրիորդ Իրիս Թյուբրյուքյանի մասնակցությամբ։

Միլանոյի հայոց նորակերտ եկեղեցին շինվել է սրտաբուխ նվիրատվությամբը Հովհաննես և Սարգիս Տիարպեքիրյան եղբայրների, որոնք թեև այժմ ապրում են Հյուսիսային և Հարավային Ամերիկաներում, բայց երկար տարիներ ապրել և գործել են Միլանոյում։ Եկեղեցու օծման հանդիսություններին ներկա են եղել զույգ բարերարները իրենց ընտանիքի անդամներով և հարազատներով։

Միլանոյի հայոց Ս. Քառասնից Մանկանց եկեղեցին շինվել է հայկական ոճով։ Եկեղեցու ճարտարապետն է ամերիկահայ պր. Զարի Սուրյանը։ Եկեղեցու շինությունը արժել է հարյուր միլիոն իտալական լիրեթ կամ 150000 դոլլար։

«Ճարտարապետության զուտ հայկական ոճով կառուցված եկեղեցին գեղեցիկ է իր նրբաճաշակ քանդակներով, պարզ գիծերու վայելչությամբ և իր երկու կողմերուն որմերուն վրա բացված գունագեղ փայլուն ռուսամուտներով։ Մուտքը հայ մանրանկարչության հրաշալիքներին նվիրված ըլլալու ցայտուն ոգին կներկայացնե, ունենալով իր երկու կողմերուն վրա վարդագույն մարմարե զույգ մը բարակ սյուներ, որոնք կվերջանան սպիտակ մարմարե կերտված զագաթներով։ Կաղնի դռներուն վրա կնըշմարվին, քանդակագործության նուրբ արվեստի մը արդյունք հայկական վեց անվանի հին վանքերը, որոնք կգտնվին Զվարթնոցի հպարտ սրբիվին թևարկության ներքև։

Թավշյա զմրուխտ մարդագետնի մը վրա հաստատված Քառասուն Մանկանց Հայ Եկե-

ղեցին, Իտալիո հրաշափառ սքանչելիքներու կողքին թեև համեստ, բայց մասնահատուկ տեղ մը կգրավէ, իբրև նմուշ հայ ճարտարապետութեան արվեստին։

Ներքինը ևս արտաքինի նման, պարզ է, ներդաշնակ և ներշնչված զուտ հայկական ոճեն։ Չորս մեծ վարդագույն մարմարե քառակուսի սյուներ, որոնք կսլանան ռեպի գմբեթ, վերջանալով նույնպես սպիտակ մարմարե կերաված ներու մեջ։ Խորանին երկու կողմը դրված են անվանի նկարիչ պրոֆ. Թ. Լոնկոնեթիի երկու նկարները, ներշնչված հայկական սրբազան նկարչութենեն։ Գետինը ճերմակ և կապույտ մոխրագույն մոտիվներ, որոնցմե մեկը կներկայացնե աղավնի մը, ձիթենիի ճյուղը իր կոուցին։ Գմբեթին և քովի հինգ պատուհաններու դեռևավոր ապակիներուն վրա նկարված են սրբեր և սրբազան դրվագներ (գլուխ Փարիզիս, 27 սեպտեմբերի 1958 թ.)։

Նկեղեցու օծման արարողությունեց հետո, դերաշնորհ Տ. Սերովբե սրբազանը ի լուր ժողովրդյան կարդացել է վեհափառ Հայրապետի օգոստոս 30 թվակիր հետևյալ սրբազան կոնդակը.

«Ուրախ է Սուրբ էջմիածինը, ուրախ է Հայաստանյայց եկեղեցին, վասնզի անա աղոթքի նոր տուն մը ևս իր դռները կբանա հայ հավատավոր ժողովուրդի առաջ ու հայ եկեղեցի մը ևս իր ոսկի խաչը կբարձ-

ՄԻԼԱՆՈՅԻ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՑ ՔԱՌԱՍՈՒՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՆ

ռացնե դեպի լույս երկինք, իբրև հոգևոր կյանքի ու հայ հավատքի հաղթության նշան: Իտալիո հրաշալիքներու կողքին Միլանոյի նորակառույց ձեր եկեղեցին կուգա իր համեստ սակայն ուրույն տեղը գրավելու իբրև նմուշ հայ հարատարպետության:

Ողջո՛ւյն և օրհնությո՛ւն նորաձև սուրբ եկեղեցիին, համայնքիդ, եկեղեցական խորհուրդիդ և համայն հավատացյալ ժողովուրդին:

Ողջո՛ւյն և օրհնությո՛ւն ասպվածասեր քարեբարեր Հովհաննես և Սարգիս Տիարպեքիրյան եղբայրներուն, որոնք իրենց մեծահոգի պարգևով կառուցին ձեր եկեղեցին ու նվիրեցին Ազգին: Թող Տերը պահե-պահպանե զանոնք քառասուն երկար տարիներ, խաղաղ ու երջանիկ:

Ողջո՛ւյն նաև Մեր հայրապետական պատվիրակ Սեռովբե եպիսկոպոսին, որուն հոգևոր առաջնորդության ներքև կմաղթենք որ շեն ու պայծառ մնան Արևմտյան Եվրոպայի հայ եկեղեցիները և մեր ժողովուրդը սիրով միասնե:

Հարազատներ ու սիրելիներ Մեր, «այսօր է զոր արար Տէր, եկայք ցնծասցուք և ուրախ եղիցուք ի նմա»:

Շնորհք, սեր և խաղաղություն Հիսուսի Քրիստոսի և օրհնություն Մեր եղիցին ընդ ձեզ, ամեն»:

Հայրապետական կոնդակի ընթերցումից հետո, պատրիարք սրբազանը հոգեշունչ քարոզով վեր է հանել Տիարպեքիրյան եղբայրների նվիրատվության արժեքը և Հայ Եկեղեցու դերը մեր ժողովրդի ազգապահպանման սրբազան գործում։

Սեպտեմբերի 9-ին, ի դիմաց Միլանոյի հայ եկեղեցու հոգաբարձության (ատենապետ՝ պր. Երվանդ Հյուսիսյան, ատենադպիր՝ պր Արիս Շալճյան), Մայր Աթոռում ստացվել է հետևյալ շնորհակալական հեռագիրը.

«Սեպտեմբերի 7-ին մեծահանդես կատարվեցավ Սրբոց Քառասնից Մանկանց նորակառույց եկեղեցվո օծումը և կարդացվեցավ Ձերդ Վեհափառության օրհնաբեր և քաջալերական հեռագիրը։ Հոգևոր անպատմելի ուրախությամբ լեցվեցան սրտերը ոչ միայն միլանահայոց, այլ նաև բոլոր ազգաց, որոնք զանազան երկիրներեն ուխտի և խնդակցության էին եկեր։ Էջմիածին, մեր Մայր Աթոռը, շնորհաց շողը կաթեցուց այդ պատվական շնորհավորագրով, տեղով հեռավոր բայց սրտով շատ մոտիկ Ձեր զավակներուն հոգիներուն խորը։ Այս օրհնյալ երկրին մեջ, ուր կվայելենք ամեն բարիք, Աստուծո այս Տունը պիտի ըլլա լուսավոր աղբյուր կրոնական մաքուր ներշնչումներու։ Մենք պիտի ապրինք շողին տակ մեր Լուսավորիչ Հոր մշտավառին, որ կախված պիտի մնա նաև մեր այս գեղակերտ տաճարին խորանի կամարեն։

Ի դիմաց գաղութիս, որդիական քաղցր զգացումներով ու կարոտով կփութանք համբուրել Ձեր Հայրապետական Ս. և Օծյալ Աջը, խնդրելու Ձեր հայրական և հայրապետական օրհնությունները։ Միածինը անսասան պահե Մայր Աթոռը և Վեհիդ պարգևե քաջողջություն և արևշատություն, Ձեր բոլոր շինարար ձեռնարկներուն՝ կատարյալ հաջողություն»։

Միլանոյի հայ գաղութի թիվը մոտավորապես 400 հոգի է։

Գաղութը համերաշխ է ինքն իր մեջ ու լծված՝ խաղաղ, շինարար, ազգաշեն աշխատանքների։ Միլանոյի գաղութը ունի պետությունից վավերացված և ճանաչված իր կանոնադրությունը՝ «Միանոնադիր Իտալիո հայոց միության»։ Այս «Իտալիո հայոց միություն»-ը ներկայացնում է ամբողջ իտալահայ գաղութը։ Միությունը ունի հինգ հոգուց բաղկացած վարչություն (նախագահ՝ դոկտ. Երվանդ Արզումանյան, հոգաբարձության նախագահ՝ պր. Երվանդ Հյուսիսյան)։

Միլանոյի հայ գաղութը ունի նաև «Հայ մշակույթի տուն», իսկական հայկական օջախ, որտեղ հաճախ հավաքվում է ողջ գաղութը դասախոսությունների, բանախոսությունների, ընկերային-ընտանեկան հանդիպման համար, ձեռք-ձեռքի տված միասնական, համերաշխ ապրելու Ազգի սիրով և Հայ Եկեղեցու գաղափարով։

ԱՇՈՏ ՊԱՏՄԱԳՐՅԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ-ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՔԱՌԱՍՆԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԸ ՓԱՐԻԶՈՒՄ

Նոյեմբերի 6-ին, Փարիզի Օթել Լյուտեսիայի սրահում տոնվել է Աշոտ Պատմագրյանի երաժշտական-կրթական գործունեության 40-ամյակը, ֆրանսահայ արվեստագետների և մտավորականների նախաձեռնությամբ։

Հոբելյանական հանդեսին նախագահել է Փարիզի առաջնորդ և Հայրապետական Եվիրակ գերաշնորհ Տ. Սերովբե եպիսկոպոս Մանուկյանը, ընկերակցությամբ Անգլիայի Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Պսակ սրբազանի, Երուսաղեմի Պատրիարքության Իսրայելի ներկայացուցիչ հոգեշնորհ Տ. Բարգեն վարդապետ Ապատյանի և Իսահակ վարդապետ Ղազարյանի, որոնք էջմիածնից դեպի Երուսաղեմ իրենց ճանապարհին հյուրաբար գտնվում էին Փարիզում։

Հոբելյանական հանդիսությանը ներկա են եղել նաև գերապայծառ Կ. Ամատունին, ինչպես նաև Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ հայր Հովհաննես Լեռնյանը և այլ պաշտոնական հայ և օտար անձնավորություններ։

Հոբելյանական հանդեսը բացել է պր. Նուրհան Ֆրենկյանը։ Ապա հոգեշնորհ Տ. Բարգեն վարդապետ Ապատյանը կարդացել է Վեհափառ Հայրապետի օրհնության հեռեալ կոնդակը, որը ունկնդրվել է հոտընկալս և վեհագույն լռության մեջ։

Ֆրանսերեն։ Ս. Էջմիածնի Գևորգյան Ճեմարանի Ձեր ուսանողության տարիներեն սկսյալ, սիրած եք հայ եկեղեցական ու ժողովրդական երգը, ու ապա օտար ափերու վրա, Ս. Էջմիածնի և Մայր Հողի խորհուրդով ոգեշնչված, ավելի քան քառասուն տարիներ անդադար, եվիրումով և իրավ արվեստագետի սրբազան հուրով, ծառայած եք հայ երգի ուսումնասիրության, տարածման և ծաղկման ազնիվ աշխատանքին, գաղութահայ կյանքի անհարազատ ու հանախ ծանր պայմաններու մեջ։

Հարուստ է հայ ժողովուրդի հոգևոր գանձարանը եկեղեցական, ժողովրդական և աշուղական երգերով։ Մեր ժողովուրդը ապրած է ու կապրի երգելով, իր երգին մեջ դրած իր բովանդակ հոգին, իր բոլոր հույզերն ու իր բոլոր երազները, և հայրենի բնաշխարհի գունագեղ լույս պատկերը։

Անոնք ոգեղեն այդ մեծ հարստության անխոնջ մշակներեն եղած եք Դուք, և Ձեր գործունեությամբ հայ Սփյուռքի մեջ ստեղծած եք կյանք, խանդավառություն և ոգևորություն հայ երգի փառքին համար։ Ձեր անունը և վաստակը ընդմիշտ կապված պիտի մնան մեր մեծ երաժիշտներու փառավոր հույլին՝ Եկմալյանի, Կարա-Մուրզայի, անմահ Կոմիտաս վարդապետի և հայ երգի ուրիշ վարպետներու հետ։

Մեծ է նաև Ձեր վաստակը որպես հմուտ երաժշտագետ և մանկավարժ-ուսուցիչ։ Ձեր «Երաժշտարան» դասագրքերով, Ձեր ուսուցման ինքնատիպ արվեստով և օտարներու համար Ձեր կարդացած դասախոսություններով, պատվավոր տեղ մը կգրավեք այսօր Սփյուռքի արվեստագետներու շարքին մեջ, և մեծ ծառայություն կմատուցանեք՝ մեր ազգային երաժշտությունը ուրիշ ժողովուրդներու ծանոթացնելու Ձեր գործունեությամբ։

Սույն Հայրապետական կոնդակով կօրհնեմ զՁեզ և Ձեր երաժշտական, կրթական խառնանպատակ վաստակը հայ կյանքին ներս ու կմաղթեմ Ձեզ, որ եւս այսուհետև երկար տարիներ, քաջառողջությամբ ու խաղաղությամբ ճնշեցնեմ հայ հավատավոր ժողովուրդի «Տէր ողորմեա»-ն ու հայ շինականի «ճորովել»-ը ամեն տեղ, ի պանծացումն հայ երաժշտության և ի մխիթարություն և ի վայելումն մեր սիրելի ժողովուրդի:

Ս. էջմիածինը հպարտ է Ձեզմով և ճույժ մխիթարված:

«Ողջ լեռուք և զօրացեալ Ս. Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ. ամէն»:

Վեհափառ Հայրապետի օրհնության կոնդակի ընթերցումից հետո, գերաշնորհ Տ. Սերովբե սրբազանը ողջույնի ջերմ խոսքով շնորհավորում է Աշոտ Պատմագրյանի հոբելյանը։ Ապա հոբելյար արվեստագետի երաժշտական-կրթական շնորհակալ աշխատանքի մասին բովանդակալից զեկուցումով հանդես է եկել գերաշնորհ Տ. Պսակ սրբազանը։ Նա իր զեկույցում առանձին դրվատանքով խոսել է նաև տիկին Պատմագրյանի մասին, որպես հմուտ երաժշտի, որը 30 տարիներ թև ու թիկունք է եղել իր արվեստագետ ամուսնուն։

Հոբելյար արվեստագետին ողջունել են նաև օրիորդ Գարագաշյանը, պր. Հ. Բալույանը և ուրիշներ։ Հանդեսում կարդացվել են հոբելյանի առիթով ստացված բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և ողջույնի ուղերձներ։

Վերջում շնորհակալության և երախտագիտության ջերմ խոսք է ասել հոբելյար պր. Աշոտ Պատմագրյանը իր հոբելյանի առիթով արտահայտված համազգային հարգանքի և ուշադրության համար։ Նա իր խորին շնորհակալությունն է հայտնել մանավանդ Ամենայն Հայոց Հայրապետին, որը «Բարեհաճեր էր Ս. Էջմիածնի գահույքի բարձունքեն սրբատառ կոնդակով Իր օրհնությունը ուղարկելու, ապա Հայաստանի երաժշտագետների միության, որը «Շատ սրտառուչ և խանդավառ խոսքերով հեռագրած էր Մայր Հայրենիքի իր պաշտոնակիցներուն շնորհավորանքներն ու գնահատականը։

Հանդեսի վերջում տրվում է ճոխ համերգ հոբելյար արվեստագետի ստեղծագործություններից, մասնակցությամբ անվանի դաշնակահարուհի օրիորդ Տ. Զարափյանի, երգչուհի օրիորդ Ն. Տիրատուրյանի, տիկին Շաքե Գալայճյանի և ուրիշների։

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼԱՄԴԱՐՅԱՆ

(Առաջնորդական փոխանորդ
Արտաքսյալ թեմի)

ԷՋԵՐ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ*

1858 թվականի մայիսին Ներսես Ե Աշտարակեցուն հաջորդում է Մատթեոս արքեպիսկոպոս Զուխաճյանը, Կոստանդնուպոլսի նախկին պատրիարքը։

Մատթեոս կաթողիկոսը, որպես զարգացած և ուսումնասեր հոգևորական, ցանկացել է Մայր Աթոռի տպարանը բարեկարգել։ Նրա օրով այնքան էլ բարեկարգ վիճակում չէր տպարանը։ Նույնիսկ Հայրապետի երկասիրությունները տպագրվում էին զանազան քաղաքների տպարաններում, օրինակ «Ներածութիւն աստուածաբանական տեղեաց» աշխատությունը 1863 թվականին Շուշում, «Իմաստութիւն ճշմարտութեան Սուրբ Աւետարանի Յիսուսի Քրիստոսի» 1863 թվականին Տփղիսում, «Ուղեցոյց Քրիստոնէական ուղղափառ վարդապետութեանն» 1861 թվականին Մոսկվայում և այլ աշխատություններ։

Նրա օրով Մայր Աթոռի տպարանից լույս է տեսնում 10 անուն գիրք։

Գրասեր Հայրապետը Մայր Աթոռի տպարանը իր պատշաճ բարձրության վրա դնելու համար 1864 թվականի փետրվար 24 թվակիր կոնդակով Տ. Արիստակես վարդապետին նշանակում է վերատեսուչ. «...եւ քանզի նախկին վերատեսուչք տպարանի մեծի Պատրիարքական Աթոռոյս Կաթողիկէ Սրբոյ Էջմիածնի, զորս և կարգեցաք ի պաշտման յաջմիկ, ակն ունելով օր ըստ օրէ լատութեանցն ոչ երբեք փոյթ կալան զյառաջադիմութենէն և ոչ ինչ բնաւ շահեցաւ օգտեցաւ Մայր Աթոռս յընթացս գործատարութեանց նոցա, բայց միայն վնաս մեծ, զոր կրեն, և օր քան զօր անշքութեամբ տիրէր ի վերայ, և յառաջադիմութեան յոյժ խանգարումն»[35],

«Ուստի առ ի բարւոքել և յառաջնոյն գեղեցիկ և լաւ ի յառաջադիմութեամբ պահպանել կարգի, կոնդակաւս այսու հայրապետական կարգեմք հաստատեմք զհոգեծին սրգիդ իմ վերատեսուչ ի վերայ տպարանի մեծի Գահիս՝ տալով քեզ բացարձակ իրաւունս յամենայն կառավարութիւնս գործոց նորա, և զցուցակ ամենատեսակ իրեղինացն առ ի անկորուստ պահպանութիւն նոցա, ընդսմին և զժապաւինեալն առ գրել ի նմա

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1958 թվականի № № Ե-ից և Թ-ից։

35 Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, Կաթողիկոսական գիվան, թղթապանակ 198, վավերագիր 19։


ՇԱՐԱԿՆ
ՀՈԳԵՒՈՐ ԵՒ ԳՈՒՂՄԱՔԱՒՈՐ
ՍՈՒՐԲ ԵՒ ՈՒՂՂՄԱՔԱՒՈՐ
ԵԿԵՂԵՑՈՒՅՑՈՎ
ՀԱՅՐԱՊԵՏԱՆԱՑՈՎ
ՕՐՈՎՆԵՐՈՎ,
ԴԱՎԱՌՈՒՆՔՈՎ ԵՒ
ՍԱՂՄՈՍԱՅԻՆ ԵՒ ՕՐՀՆԱԿԱՆ
ԵՒ ԱՌԱՒՈՏԱՅԻՆ ՊԱՏԱՐԱՄԱՆ
ՀԱՄԱՐ
ԸՍՊԻՏԱԿ ՏԱՐԵԱԿԱՆՆԵՐՈՎ
ԵՒ ԱՌԱՆՁԻՆ ՅՈՒՇԱՐ

լիսի 1-ից Գևորգ Դ-ի ջանքերով ու կարգադրությամբ լույս է տեսնում «Արարատ» ամսագիրը, որպես Մայր Աթոռի պաշտոնական մամուլ։ «Արարատ»-ի հրատարակությունը Մայր Աթոռում մշակութային կարևոր երևույթ էր հայ ժողովրդի ազգային-եկեղեցական կյանքում։ «Արարատ» ամսագիրը լույս է տեսել 1868 թվականից մինչև 1919 թվականը։

Տպարանը կարգավորելուց հետո, Գևորգ Դ-ը Կոստանդնուպոլսից հրավիրում է Նշան Պերպերյանին և Թիֆլիսից՝ Ղազարոս Ազայանին, որպես տպարանի գործում մասնակիցների։

Ազայանը գալիս է Էջմիածին. «Հասնելուս մյուս օրը Վեհափառը ընդունեց ինձ, օրհնեց և պատվիրեց, որ գրեմ Պետերբուրգ՝ այնտեղից ստանալիք կարևոր պարագաների մասին...»[40]։

Հայ նշանավոր վիպասանը Գևորգ Դ-ի օրով մեծ դեր է կատարել Ս. Էջմիածնի տպարանի բարեկարգման գործում, ինչպես նաև «Արարատ»-ում, որպես երկրորդ խմբագրող։ Արել արքեպիսկոպոս Մխիթարյանից հետո. «Մեկ օր Մանկունին մի թուղթ բերավ Սինոդից և խունջիկ-մունջիկ զայով՝ ասաց. «Իշտե, մարդս (խոսքը Գևորգ Դ-ի մասին է— Վ. Վ.) ձեզի խմբագիր ըրած է, «Արարատ»-ի երկրորդ տարին դուք պիտի սկսիք...»։ Նոր «Արարատ»-ը սկսեցի ես անպատրաստից և ինձ համար անակնկալ կերպով»[41]։

Մայր Աթոռի տպարանի կազմակերպման, ծաղկման և այն հրատարակչական լավագույն տեխնիկայով օժտելու հարցում Գևորգ Դ-ին իրենց բարերարություններով և խորհուրդներով օգնում են Կ. Նալբանդյանը, Մ. Սանասարյանը, Մկրտիչ Տեր-Մկրտչյանը և Հովնանյանը։

Սանասարյանը 1868 թվականին Վիեննայից ապսպրում է Մայր Աթոռի տպարանի համար պղնձյա մայրեր։ Կաթողիկոսը, երբ ստանում է Սանասարյանի ուղարկածները, նրան գրում է հետևյալը. «Հասին ի ձեռս մեր խոստացեալք ի Քէնջ, գեղեցկացեալ մայրք հայկական տառից... բերկրեցայ զմեզ կարի, զի կարօտութիւն մեծ էր վայելչահիւս տառից ի տպարանիս մերում։ Սիրելութիւն Ձեր փութ յանձն կալցի ըստ բնատուր ազգասիրութեան իւրում նաև դխոստացեալ Ձեր պարագայս տպարանի ուղղել առ մեզ կարելին փութով ի յիշատակ պատուական անուան Ձերոյ, որպէսզի մարդասցուք զտպագրութիւն «Արարատ» լրագրիս մերոյ բարւոքել և զհաճոյագոյնս զայն ընծայեցուցանել ազգային ընթերցանելեաց...»[42]։



1882 թվականի ժամակարգության տիտղոսաթերթը

Մ. Սանասարյանը կատարում է Հայոց Հայրապետի կամքը և 1869 թվականին Եվրոպայից ապսպրել է տալիս Ս. Էջմիածնի տպարանին անգլիական «Wood» ընկերության արտադրած արագաշուլլ մեքենան 6×9 մեծությամբ, երկու տեսակ հալոցներով, մեկը հասարակ տառեր և մյուսը գանազան աստիճանի և ձևերի գլխագրեր, ծաղկագրեր և ծաղիկներ ձուլելու համար։

Կազմակերպչական այս և այլ աշխատանքների շնորհիվ Գևորգ Դ-ի օրով Մայր Աթոռի տպարանը հանդիսացավ Անդրկովկասում առաջնակարգ տպարաններից մեկը։ Տպարանի բարվոք և արդյունավետ գործունեությունը ապահովելու համար Գևորգ Դ-ը նշանակում է հինգ հոգուց բաղկացած տպարանի հանձնաժողով և կազմում է 9 կետերից բաղկացած մի ծրագիր կանոնադրություն՝ նրա բարվոք գործունեության համար։

40 Ղազարոս Ազայան, «Իմ կյանքից», Երևան, 1956 թ., էջ 115։

41 Նույն տեղում, էջ 117։

42 Հայկական ՍՍՌ Պետական մատենադարան, Արխիվ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի, էջ 91։



1886 ԹՎԱԿԱՆԻ «ՌՈՒՂՂ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ»-Ի ՏԻՏՂՈՍԱՔԵՐԹԸ

Գևորգ Դ-ը Մայր Աթոռի տպարանի գործը կարգադրելուց հետո, մտածում է հրատարակությունների մասին։

Գևորգ Դ-ի օրով 1870-ական թվականներից Ս. Էջմիածնի Մայր Աթոռի տպարանից լույս են տեսնում, բացի «Արարատ»-ի հրատարակությունից, մոտ 30 անուն գրքեր, որոնց թվում և այնպիսի մեծադիր ու ծավալուն հրատարակություններ, ինչպիսիք են՝ Ճաշոցը (1872 թ.), Զայնագրյալ շարակնը (1875 թ.), Ապա «Ազգաբանութիւն Հայոց», «Ուխտանէաց», «Զայն բաղմաց», «Սիմոն Ապարանցի», «Ցանոսի Ցաղագս պապին» (թարգմ.), «Այրիվանք», «Դաւիթ բէկ» (դրամա), «Հաքստհաուզեն», «Քնար Մշեցոց և Վանեցոց», «Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց Եկեղեցւոյ», «Պատմութիւն խալակրութեանց», «Օդերևութաբանութիւն», «Վաղարշապատ՝ քաղաքամայր Հայաստանի», «Կաթուղիկէ Մայր Եկեղեցին», «Ջամբրոն», «Գեղարքունիք», «Պատմութիւն Սասանեան տէրութեանց», «Նիկոլ եպիսկոպոսն և այլն։ Տպագրվել են նաև հայոց լեզվի և երաժշտության ձեռնարկներ։ 1880 թվականին Մայր Աթոռի տպարանից լույս է տեսնում նաև Մխիթար Գոշի «Դատաստանագիրք»-ը Վահան վարդապետ Բաստամյանի առաջաբանով և խմբագրությամբ[43]։

Այսպիսով Գևորգ Դ կաթողիկոսի օրով Ս. Էջմիածնում սկսվում է լուսավորական-կրթական եռուն գործունեության մի նոր շրջան՝ Մայր Աթոռի Ճեմարանի բացումով, տպարանական գործունեության ընդարձակմամբ և գիտակից, բազմակողմանիորեն զարգացած, պատրաստված Ս. Էջմիածնի նոր միաբանությամբ։

Գևորգ Դ մեծագործ կաթողիկոսի հաջորդ Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի առաջնորդ Մակար կաթողիկոսի օրով տպարանը շարունակում է իր արդյունավետ գործունեությունը։ Նորընտիր կաթողիկոսը մտածում է Ս. Էջմիածնում տպարանի նոր շենք կառուցելու մասին։ Դեռևս Մատթեոս Ա կաթողիկոսի օրից սեղանի վրա էր տպարանի նոր շենքի կառուցման հարցը։

Վաղարշապատի հին շուկայի տեղը (հիմակվա նոր Վեհարանի և Գործադիր կոմիտեի շենքի միջև ընկած տարածությանը վրա), Մատթեոս Ա-ը տպարանի նոր շենքի հիմքն էլ օրհնեց, բայց մահը խանգարեց նրան։

Մակար կաթողիկոսի օրով մանավանդ զգացվում է տպարանի նոր շենքի շինության կարիքը. «Նոր տպարանի հիմնարկեքը ծագում առավ Աստվածաշնչի տպագրության պետքը զգացուելեն, զի Հայ Աթոռի մը հսկողության ներքև հրատարակված ամբողջ Աստվածաշունչ մը չկար Հայ եկեղեցվո պաշտոնեից և զավակաց ձեռք։ Սակայն Էջմիածնի տպարանը հին վարժարանի խարխուլ շենքին մեջ գետեղված էր, և ձեռաց մամուլներով միայն կգործեր, և արագատիպ մամուլի հաստատուն շենք անհրաժեշտ էր։ Այսպես ծագեցավ ի հիմանց հաստատուն տպարան մը շինելու հարցը, որ հիմնվեցավ վանքին բակեն դուրս, շենքն ալ ավարտեցավ 1889 թվականի հոկտեմբերին, և բոլոր տպարանական պետքերու համապատասխանող հաստատություն մը եղավ»[44]։

Տպարանի նոր շենքի կառուցումը վերջանում է 1899 թվականին և տպարանը տրնտեսատնից վերջնականապես տեղափոխվում է նոր շենքը, որի մասին «Արարատ»-ը հետևյալն է հաղորդում. «Մայր Աթոռոյս նոր տպարանը շինվում է Տաճարի արևելյան կողմում, նորա արտաքին և ներքին պարիսպների միջավայրում, Ճեմարանի մոտ. սա արդեն մոտ է վերջանալու. նորա

43 Գարեգին Լևոնյան, հիշված աշխատությունը, էջ 217։

44 Մեղրիա արհիպեսկոպոս Օրմանյան, «Ազգապատում», հատ. Գ, Երուսաղեմ, 1927 թ., էջ 4655։

հիմնական պատերի վրա այժմ ձգվում են նորա կամարները։ Ամբողջ շինությունը քարուկիրյա է, հիմքը մի սաժենից ավելի գետնի խորության մեջ ամրացած. նորա մեծադիր երկու գլխավոր մուտքերը և լուսամուտները զարդարված են գեղեցիկ ծաղկենկար փորվածքներով և դրվագներով։ Շինության երկարությունը հյուսիսից հարավ 51 արշին մի քառորդ է, լայնությունը արևմուտքից արևելք 24 արշին մի քառորդ և բարձրությունը 11 արշին։ Այս շինությունը պարունակում է իր մեջ.

ա) գրաշարանոց, բ) տպարան, գ) ըուղթ թրջելու սենյակ, դ) ձուլարան, ե) սորա ամբարանոցը, զ) տպարանական ժողովը խորհրդարանն ու գրագրանոցը, է) գրադարան, ը) ընդարձակ նախագավիթը, որ արևմտյան մուտքից ձգվում է մինչև արևելյան մուտքը։ Տպարանի մնացյալ շինությունները պետք է կառուցվեն նորա արևելյան բակումը[45]։

Խրիմյանի ժամանակ Մայր Աթոռի տպարանը ավելի է առաջադիմում, հարստանում նոր մեքենաներով։



1875 ԹՎԱԿԱՆԻ ԶԱՅՆԱԳՐՅԱԼ ՇԱՐԱԿԱՆԻ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԸ

45 «Աղտարար». 1889 թ., էջ 336։



Մի էջ 1875 ԹՎԱԿԱՆԻ ԶԱՅՆԱԳՐՅԱԼ ՇԱՐԱԿԱՆԻՑ

Վասպուրականի Արծիվը մտածում է Մայր Աթոռի տպարանից Աստվածաշունչը լույս ընծայելու շնորհակալ, բայց շատ դժվար և պատասխանատու գործի մասին։ Նա այդ ուղղությամբ դիմում է նաև գործնական քայլերի, նախապատրաստական աշխատանքների։

Հայրիկը մտածում է Մայր Աթոռի մատենադարանում գտնվող բազմաթիվ ձեռագրերի համեմատությամբ կատարել Աստվածաշնչի հրատարակությունը։ Ձեռագրերի համեմատությունը հանձնվում է Ճեմարանի դասախոս Կարապետ վարդապետ Տեր-Սիրուշյանին, որը «Ամառվա սկզբից գործի ձեռնարկելով և Ճեմարանի լսարանների աշակերտների օգնությամբ բաղդատությունները կատարելով Մայր Աթոռի 40-ի չափ ձեռագիր օրինակներից, ընտրեց Աստվածաշնչի 8—9 հիմնական ձեռագրերը, որոնք կարող էին արժեքավոր տարբերություններ ընծայել, և օգնական ունենալով Ճեմարանի ուսումնավարտ և պաշտոն ստացած 4—5 հոգու, մինչև ուսումնական տարվա վերջը համեմատեց Աստվածաշնչի համարյա կեսը...»[46]։

46 Նրվանդ Տեր-Միհայլյան. «Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյան». Մոսկվա, 1911 թ., էջ 37։



ՄԵԻԹԱՐ ԳՈՐԾԻ «ԴՈՏՇՈՏՇՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ»-Ի ՏԻՏՂՈՍԱԹԵՐԸ

Ձեռագրերը համեմատելուց հետո, նույնիսկ տպագրության են հանձնվում առաջին մամուլները, բայց դժբախտաբար Աստվածաշնչի տպագրության հարցը դուրս չի բերվում Խրիմյանի օրոք, տպարանի տեխնիկական անկարողության պատճառով։

Խրիմյան Հայրիկը դժվարության առաջ կանգ չի առնում։ Նա մտածում է Գյուտ քահանա Աղանյանին արտասահման ուղարկելու մասին։ Գյուտ քահանային հանձնարարվում է արտասահմանից բերել ա... ա) զմի արագատիպ մեքենայ, բ) զմի ձուլիչ մեքենայ, նորագոյն տեսակաց, գ) զմի գազամոտոռ (շարժիչ մեքենայ), դ) զմի կտրիչ մեքենայ, ե) զմի մամուլ վասն սրբագրութեան նորագոյն տեսակի և զմի ձեռք մայրք 12 աստիճանն տառից և պատշաճ եղանակաւ և անկորուստ հասուցեալ ասա առ մեզ։

Ընդարձակեմք Ձեզ զիրատունս վարձել անդ զմի հմուտ տպարանտգէտ գերմանացի միամեայ ժամանակաւ, ընդ որում և դու եկեալ ի Ս. Աթոռս տայցես մեզ զհամար գործողութեանդ...»[47]։

Գյուտ քահանա Աղանյանը մեկնում է արտասահման, գնում մեքենաները և ապա վերադառնում Ս. Էջմիածին։

Շնորհիվ նոր մեքենաների ստացման, փոխվում է տպարանի կերպարանքը։ Մայր Աթոռի տպարանը հարստանում է «Konig & Bauer»-ի «Kloster obessel bal würzburg № 5170» արագատիպ և մի հատ «Ամերիկանկա» կոչված մեքենաներով։

Մինչև այդ, Մայր Աթոռի տպարանի մեքենաները աշխատում էին ձեռքով։

Խրիմյանի օրով, 1896 թվականին բերվեց „Otlovelz"-ի նավթի շարժիչ մեքենան և տպարանը սկսեց օգտագործել գազամոտորի ուժը։ Պատրաստվեցին նաև ջրամբարներ, որոնցից այդ գազամոտորի ուժով ջուր էր հանվում և դեպի Գայանեի վանք մղվում՝ պարտեզն ու բանջարանոցները ոռոգելու համար։ Գազամոտորը էլեկտրական լույս էր մատակարարում ամբողջ վանքին։

Մայր Աթոռի տպարանը միշտ ունեցել է իր ձուլարանը։

Մատթեոս Ա Կաթողիկոսի օրով տառերը ձուլվում էին 150 տարվա հնություն ունեցող ֆորմաներով։

Տպարանի առաջին ձուլարանի վարպետն եղել է վաղարշապատցի տիրացու Հարու-

1882 ԹՎԱԿԱՆԻՆ «ԶԱՆԳԱՐԵԱԼ ՓԱՂՈՒԱԾՔ»-Ի ՏԻՏՂՈՍԱԹԵՐԸ

[47] Հայկական ՍՍՌ Գիտական մատենադարան, Արխիվ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի, էջ 128։

թյունը, իսկ փորագրիչը՝ Մկրտիչ եպիսկոպոս Շուռթեցին։

Տպարանի ձուլարանի աշխատանքները այդպես շարունակվեցին մինչև Խրիմյան Հայրիկի օրերը, երբ նա Լայպցիգից բերել տվեց „Küstermann" տառեր ձուլող մեծ մեքենան։

Տպարանի կազմատումը Խրիմյան Հայրիկի օրով հարստանում է արտասահմանից ստացված „Karlkausei -ի կտրիչ մեծ մեքենայով։ Զեռք են բերվում ոսկեզօծելու մեծ և փոքր չափի մեքենաներ։ Գրաշարանոցը ևս հարստանում է օտար բոլոր լեզուների տառատեսակներով։

Այսպիսով Մայր Աթոռի տպարանը դառնում է իրապես Անդրկովկասում առաջին տպարաններից մեկը։

Խրիմյան Հայրիկի օրով «...Տպագրության արտադրությունը որակով ավելի լավանում է, բայց քանակով չի կարողանում մրցել 70-ական թվականների հետ։ Այս շրջանի հրատարակություններ մեջ խոշոր թիվ են կազմում դասագրքերը, զանազան ձեռնարկներ, կանոնադրություններ և այլն։ Պատմական, բանասիրական և գրական արժեք ունեցող աշխատություններից հիշենք «Հայաստանեայց Եկեղեցու Պատմութիւն», «Անանիա Նարեկացի», «Ստեփանոս Իմաստասէր», «Վատիկանի հրովարտակների մասին», «Ուղևորութիւն Վեհափառ Հայրիկի», «Պարզ քարոզներ» (յոթ գրքույկ), «Համեմատութիւն Դաւիթ Անյաղթի յոյն բնագրի հետ», «Սամուէլ Անեցի», «Պապիկ և թոռնիկ», «Ցաճախապատում», «Բագրևանդ գաւառ», «Մատթէոս Ուռհայեցի», «Անանիա Շիրակացի», «Ագաթանգեղոսի աղբիւրներից», «Հորենացու պատմութեան ուսումնասիրութիւնը», «Դաւիթ Հարքացի», «Առտկք Քռիլովի», «Ա և Բ Մնացորդաց գրքերի նորագիւտ հայ թարգմանութիւնը», «Նկարագիր Ս. Ստեփանոսի վանուց», «Աստուածաբանական գիտութիւններ», «Պարթևները Պարսկաստանում», «Գրիգոր Խլաթեցի», «Մխիթար Սասնեցի», «Հայերը մարդաբանական և աշխարհագրության տեսակետից...»[48],

1895 թվականին Պետերբուրգում, երբ բացվեց տպագրական գործերի ցուցահանդես, Մայր Աթոռը ևս մասնակցեց ցուցահանդեսին իր տպարանից լույս ընծայված գրքերով։ Մայր Աթոռի տպարանից դուրս եկած գրքերի համար հատկացվեց առանձին դարակ[49]։

Խրիմյան Հայրիկի օրով ընդարձակվում է նաև տպարանի շենքը։ Մայր Աթոռի միաբան Տ. Սուքիաս արքեպիսկոպոս Պատրյանցի նվիրատվությամբ բարձրանում է նոր շենք տպարանի հարավային մասում, երկու ընդարձակ կամարակապ դահլիճներով և միջանցքով, ուր գտնվում են տպագրական բոլոր մամուլները և գրաշարանոցը։ Այդ դահլիճների ներքևի հարկում շինում են ցեմենտապատ ներքնատուն, թղթերի և այլ նյութերի համար։

Խրիմյան Հայրիկի հաջորդների՝ Մատթեոս Բ-ի, Գևորգ Ե Սուրենյանի հայրապետության տարիներում Մայր Աթոռի տպարանը շարունակում է իր արդյունավետ գործերը։ Հայ մշակույթի պատմության մեջ Մայր Աթոռի տպարանը, իր հարյուր հիսուն տարվա գոյության ընթացքում, կատարել է յուսավորական շնորհակալ աշխատանք։

1959 թվականի գարնան, նորին Ս. Օծության Տ. Տ. Վազգեն Ա ուսումնասեր և գրագետ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ազդաշեն գործունեության շնորհիվ և ամերիկահայ մեր պատվական, հավատավոր ժողովրդի նվիրատվությամբ, որպես ամերիկահայության սրտագին նվեր Մայր Աթոռին՝ գնած տպագրական նոր տիպի մեքենաներով, նորից կվերաբացվի Մայր Աթոռի տպարանը, մեր օրերում էլ հայ եկեղեցական և հայ մշակույթի նվիրական գործին ծառայելու ազնիվ ցանկությամբ։

---

48 Գարեգին Լեոնյան, հիշված աշխատությունը, էջ 219։

49 «Արարատ», 1895 թ., էջ 70։



ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Ե. ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ

ԴԱՐՁՅԱԼ ՀԱՌԻՃԱ ՎԱՆՔԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԻՆԱՍ ՔԱՀԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՎԱՀԱՆՅԱՆՑԸ

Պանասեր Հ. Քյուրտյանը «Բազմավեպ» ամսագրի 1957 թվականի № 11—12-ի (նոյեմբեր-դեկտեմբեր) էջ 267—273-ում մի հոդված է տպագրել «Հառիճո վանքի արձանագրությունները» վերնագրով։ Այդ արձանագրությունները (թվով ԻԵ) նա մեջ է բերում 12 թերթից կամ 24 էջից բաղկացած մի տետրակից, որ մի քանի տարի առաջ գտնվել է Կոստանդնուպոլսում, այժմ հանգուցյալ գրավաճառ Պիմեն Զարդարյանի» բազմաթիվ հին ու նոր ձեռագրերի հետ և կրում է «Արձանագրութիւնք վանիցն Հառիճոյ որ ի Շիրակ գաւառի» խորագիրը։

Հ. Քյուրտյանը այդ արձանագրությունները համեմատել է Հ. Ղ. Ալիշանի «Շիրակ»-ի մեջ եղածների հետ և նշել է տարբերությունները։ Տետրակից բերված արձանագրությունները մեծ մասամբ ճիշտ են և վստահելի։ Թերված է, օրինակ, նաև Հառիճայի երկրորդ շինության առաջին առաջնորդի՝ Գրիգոր վարդապետի տապանագիրը, որ տետրակի հեղինակը ճշտորեն վերարտադրել է՝ Գրիգորի մահվան թվականը կարդալով ՌԼԷ, այսինքն մոտավորապես այնպես, ինչպես մենք դրել ենք «Էջմիածին» ամսագրում լույս տեսած մեր նախորդ հոդվածում։ Պետք է նկատի ունենալ, որ, ինչպես ստորև կտեսնենք, տետրակի տերը կամ արձանագրությունները գրի անցնողը այդ գործը կատարել է մեզանից շուրջ 100—120 տարի առաջ, երբ հանգստարանի գերեզմանաքարերը դեռ անաղարտ էին, մինչդեռ վերջին 50—60 տարվա ընթացքում նրանք տաշտշվել են չար երեխաների կողմից և մասամբ անընթեռնելի դարձել։

Ո՞վ է եղել այդ տետրակի տերը կամ արձանագրություններն արտագրողը, ավելի ճիշտ՝ գրի առնողը։

Այդ նույն տետրակում որպես արձանագրություններով հետաքրքրված անձնավորություն է հանդես գալիս մեզ հետաքրքրող անձը, որովհետև նա մեջ է բերում նաև Արթիկի մոտ գտնվող Լմբատա վանքի արձանագրությունները, այլ և Սոփիա տիկնոջ տապանագիրը, որի գերեզմանաքարը գցված է եղել մի քահանայի վրա՝ վերջինիս ցանկության համաձայն։

Ահա այս Սոփիա տիկնոջ տապանագրի առթիվ տետրակում մի հետաքրքրական ծանոթություն կա, որի տակ ստորագրված է՝ Մինաս քահանա Հարություն Վահանյանց Հառիճեցի։ Սրանից Քյուրտյանն իրավամբ եզրակացնում է՝ «Ուրեմն տետրակիս գրողը և հավանաբար արձանագրությանց արտագրողը այս Մինաս քահանա Հարություն Վահանյանց Հառիճեցին է, որուն մասին դժբախտաբար ուրիշ ծանոթություն չունիմ»։

Ինչպես երևում է՝ Քյուրտյանի ձեռքը չի անցել 1910 թվականին Ալեքսանդրոպոլում (այժմ Լենինական) տպված «Հառիճայի վանական ընկերության հիշատակարանն ու հաշիվը 1850—1882» գիրքը, որի մեջ բավական մանրամասն տեղեկություններ կան այդ անձի մասին։

Տանք, ուրեմն, Մինաս քահանա Հարությունի Վահանյանց հառիճեցու մասին այդ գրքում եղած և որպես նրա թոռ մեր անձամբ ունեցած տեղեկությունները։

Տիրացու Մինաս Հարությունի Վահանյանցը ծնվել է շուրջ 1815 թվականին Կարինում։ Նա որպես 14—15-ամյա պատանի 1830 թվականի խոշոր գաղթականության հետ եկել է նախ Ալեքսանդրոպոլ, ապա անցել է Էջմիածին՝ ժառանգավորաց դպրոցում ուսանելու, որտեղ աշակերտակից է եղել հետագայի Մակար Ա Ամենայն Հայոց կաթողիկոսին[1]։

Ժառանգավորաց դպրոցում ուսումն ավարտելուց հետո տիրացու Մինաս Հարությունի Վահանյանցը վերադարձել է Ալեքսանդրոպոլ և այնտեղից ընդմիշտ տեղափոխվել Հառիճ, որտեղ և ամուսնացել ու մեծ դիրդասատանի տեր է դարձել։

Տիրացու Մինաս Հարությունի Վահանյանցը 1851 թվականի փետրվարի 17-ին ձեռնադրվել է քահանա և այնուհետև իր ամբողջ կյանքն անց է կացրել Հառիճում (նախկին անունով Ղիշաղ գյուղում)։

Երբ 1850 թվականին Ալեքսանդրոպոլի մի խումբ երիտասարդներ հիմնում են «Հառիճայի վանական ընկերություն»-ը, այդ ընկերության եռանդուն անդամներից մեկն է դառնում տիրացու (հետո քահանա) Մինաս Հարությունի Վահանյանցը։ Նրա գործունեության մասին վերոհիշյալ գրքի էջ 21-ում կարդում ենք հետևյալը։ «Որովհետև ընկերության անդամները քաղաքում էին բնակում և յուրաքանչյուրն իր անձնական գործով էր զբաղված, Հառիճայի վանքի լուսաբար տիրացու Մինաս Հարությունյանին ընտրում են իրենց երկրորդ նախագահ և նրա վրա պարտավորություն դնում վերահասու լինել վանքի բոլոր պակասություններին, պիտույքներին և մանրամասնաբար տեղեկություն տալ ընկերությանը, որ և նա կատարում է բարեխղճորեն, ինչպես երևում է այդ գրքի հաջորդ բազմաթիվ էջերից։

Լինելով մեծ դպրաբարգետ և եկեղեցական երգեցողության ու այլ կրոնական գիտությունների մասնագետ՝ Մինաս քահանա Հարությունյանը մեծ հարգանք ու պատիվ է վայելել ամբողջ Շիրակի դաշտում։ Նա բազմաթիվ քահանայացուներ է պատրաստել Շիրակի գյուղերի համար, որոնցից ոմանք, ինչպես հոռոմցի Տեր Մինաս Տեր-Պետրոսյանը, թեկոխել են նաև բանասիրության ասպարեզը. այս վերջինը աշխարհաբար է թարգմանել և տպագրել տվել Ղազար Փարպեցու Հայոց պատմությունը (Ալեքսանդրոպոլ, 1895) և Արիստակես Լաստիվերտացու Հայոց պատմությունը (Ալեքսանդրոպոլ, 1893), ծանոթագրություններով։ Այս հոռոմցի Տեր Մինասը և նրա աշակերտակից բայինդուրցի Տեր Մելքիսեդեկ Մանուկյանը հետագայում երկար տարիներ կրոնի և հայոց լեզվի ուսուցիչ են եղել Ալեքսանդրոպոլի և Կարսի եկեղեցական-ծխական դպրոցներում։

Տեր Մինաս Հարության Վահանյանցի աշակերտներից է եղել նաև հետագայի Արիստակես արքեպիսկոպոս Դավթյանը, որը նույնպես զբաղվել է բանասիրությամբ և մի գիրք է հրատարակել եկեղեցական ժողովների մասին։ Մինաս քահանա Հարությունի Վահանյանցի գիտության և հմտության համբավը այնքան մեծ է եղել, որ Էջմիածնի սինոդը շատ տիրացուներ է ուղարկել նրա մոտ՝ տվորելու։ Այս մասին նույն գրքի էջ 28-ում կարդում ենք հետևյալը. «Պատահում էին քահանայացուներ և այլ գյուղական դպիրներ, որ գալիս էին Հառիճայի վանքը Տեր Մինասի մոտ ուսանելու... Վանքի պատերի տակ (խոսքը 1856 թվականի մասին է) այստեղ այնտեղ անկյուններում տասնի չափ տիրացուներ գրքերը ձեռքերին պարապում էին. հարց ու փորձ անելով տեղեկացան [ընկերության անդամները], որ նոցա ուղարկել է Ս. Էջմիածնի Սինոդը, որպեսզի քահանայական գիտելիքներ ուսանին Տեր Մինասի մոտ և պատրաստվեն քահանայանալու։

Այս հանգամանքը պատճառ է դառնում, որ ընկերությունը թուղթ գրի Սինոդ, որպեսզի կարգադրություն արվի վանքից սենյակ հատկացնելու տիրացուների համար։ Այս-

[1] Այս տեղեկության ճշտությունը հաստատում էր նաև ԺԹ դարի երկրորդ կեսի և Ի դարի առաջին տասնամյակի ականավոր եկեղեցական գործիչ Սուքիաս արքեպիսկոպոս Պարզոնը, որը շարունակ շեշտում էր, թե իր և տողերիս գրողի միջև «հոգևոր ազգակցություն» կա, որովհետև նրա «ամենավոր և հոգևոր ծնող երջանկահիշատակ Տ. Տ. Մակար Ամենայն Հայոց կաթողիկոսը» և իմ «լուսահոգի պապ Տ. Մինաս քահանան աշակերտակից ընկերներ են եղել Ս. Էջմիածնի Ժառանգավորաց դպրոցում»։

Այս այն Սուքիաս արքեպիսկոպոսն է, որի ծախքով տպագրվել են «Պատմագիրք Հայոց» ժողովածուի Ղազար Փարպեցին, Ագաթանգեղոսը և Մովսես Խորենացին, իմ և Կարապետ եպիսկոպոսի հրատարակած Տիմոթեոս Կուզի հակաճառությունը, իմ «Հայոց և ասորոց եկեղեցիների հարաբերությունները», Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի «Ազգապատում»-ի սովոր հատորները և այլն։

պիսով հիմք է դրվում Հառիճի վանական դպրոցի, որը բացվում է 1856 թվականի նոյեմբերի 1-ին և Տեր Մինասը դառնում է նրա առաջին ռոճկավոր և միակ ուսուցիչը մինչև մոտ 1860 թվականը։ Նա ավանդում է քերականություն, հասարակ ընթերցանություն, քրիստոնեական վարդապետություն, եկեղեցական երգեցողություն և վայելչագրություն։ Արդեն 1857 թվականի մարտի 3-ին Տեր Մինասը հայտնում է, որ աուսումնարանում 17 հաստատուն աշակերտ կա, որոնցից 11-ը Ղփչաղից, մյուսները հեռավոր գյուղերից, մինչև անգամ Սանահնից։

Այնուհետև Տեր Մինաս Հարությունի Վահանյանցը մինչև իր կյանքի վերջը զբաղվում է ուսուցչությամբ։

Նա վախճանվել է 1876 թվականի մարտի 13-ին և թաղվել է Հառիճի հասարակաց գերեզմանատանը։

Նրա տապանաքարի վրա փորագրված է հետևյալ արձանագրությունը, որի հեղինակը վերոհիշյալ հոռոմցի Տեր Մինաս Տեր-Պետրոսյանն է.

«Ի 13 մարտի 1876 ամի,
Մինաս քահանայ տոնմիւ Վահանեանց,
Մտօք բանիբուն, օրտիւ բարեզգեաց,
Մինչ ճաս ի հասակն վաթսնից ամաց,
Աստ փութաց մարմնով, հոգով կեանս անանց»։

Հառիճայի վանական ընկերությունը շատ բարձր է գնահատել Մինաս քահանա Հարությունի Վահանյանցի ծառայությունը վանքին, նրան համարել է «հավատարիմ ու արտացավ աշխատող և ընկերության ամենաթարիչներից մեկը»։ Հիշված գրքի էջ 121-ում նրա մահվան առթիվ կարդում ենք հետևյալը.

«Հառիճայի ընկերությունը վերջին շրջանիս ընթացքում (1873—1881) զրկվեցավ իր երկու սկզբնական անդամակիցներից։ Առաջինն էր ղչփաղեցի Տեր Մինաս քահանան, որը ընկերության հաստատվելու օրից շարունակ բարոյապես օգնում և առաջնորդում էր նոցա ձեռնարկություններին, իսկ 1856 թվից իբրև ուսուցիչ Հառիճայի դպրոցի ռոճիկ էր ստանում ընկերությունից։ Տեր Մինասը սրտացավ օգնական էր ընկերության բոլոր գործերում, որոնք վանքի մեջ լինում էին, բայց իր ընտանիքի կառավարության հոգսերով շրջապատված, չէր հասնում անմիջապես խառնվելու վարչական գործերին... Տեր Մինասին փոխարինեց նրա որդին Տեր Գալուստը, որ Հառիճայի դպրոցի աշակերտներից է և այժմ վարում է դպրոցի ձայնագրության և կրոնի դասատվությունը։

Մինաս քահանա Հարությունի Վահանյանցը, ինչպես երևում է, հետաքրքրվել է նաև բանասիրական աշխատանքներով, ձեռագրեր է հավաքել կամ անձամբ արտագրել իր սեփական և այլոց գործածության համար։ Այսպես, ներկայումս Հայկական ՍՍՌ Պետական ձեռագրատանը (Մատենադարանում) կա հինգ ձեռագիր, որոնք կրում են 9028, 9029, 9030, 9031 և 9034 համարները և որոնք պատկանելիս են եղել հիշյալ քահանային։

Այդ ձեռագրերից՝ № 9028-ը «Ավետարանի մեկնություն» է, որի սկիզբն ու վերջը թերի է. համարվում է ԺԷ—ԺԸ դարի գրչություն։ № 9031-ի վերնագիրն է՝ «Մեկնութիւն համառօտ Դանիէլի մարգարէի, զոր հոգեպայծառ և իմաստնախոհ վարդապետին Վարդանայ շարադրեալ է ի հոգեկիր մեկնողացն ձայնից Եփրեմի, Հիպոլիտայ, Ստեփաննոսի Սիւնեցւոյ ի խնդրոյ ուսումնասէր մանկանց և ի դիւրահասութիւն ընթերցողացն։ Հիշատակարանում ասված է (74բ և շար.) որ գիրքը գրվել է ՉԺՉ—ՉԺԷ թվականներին (=1267—1268)։

№ 9029 փոքրիկ ձեռագիրը պարունակում է մի շարք խրատներ, ավելի ճիշտ՝ ուղեցույցներ վարաղ անելու, ոսկեջուր պատրաստելու, դրքի կող վարաղելու, քիչ ոսկով շատ ոսկեջուր անելու, արծաթաջուր պատրաստելու, արծաթաջրելու մասին և այլն։ Վերջում խրատներ, թե ինչպես պետք է պատրաստել զանազան ներկեր։ Գրքույկը գրել է երևանցի ծաղկազարդ Իսահակ եպիսկոպոս մահտեսի Տեր-Գրիգորյանը իր հոր տանը Երևանում, 1840 թվականի օգոստոսի 28-ին։ Գրքի մեջտեղում հեղինակը պատմում է իր ժամանակի անցքերի մասին, ինչպես իրեն հանձնարարվել է «Որդան կարմիրը հավաքել, որ նա կատարել է, ինչպես պետությունը նրան տարեկան երկու հարյուր ռուբլի ռոճիկ է նշանակել և այլն։

Մյուս երկու ձեռագիրներն արտագրված են Մինաս քահանա Հարությունի Վահանյանցի ձեռքով։ Դրանցից առաջինը (№ 9030) Միքայել վարդապետ Ջամչյանի «Վահան հաւատոյ ուղղափառութեան հայոց» աշխատությունն է, որ նա արտագրել է 1862 թվականի հունիսին, «ի տուրբ մենաստանս Հառիճոյ», սանահնեցի սարկավագ Հակոբ Դավթյանի (հետագայի Արիստակես արքեպիսկոպոս Դավթյանի) 1860 թվականին Ս. Էջմիածնում գրած օրինակից։

Մինաս քահանա Հարությունի Վահանյանցը, ինչպես երևում է, հետաքրքրվել է նաև բանասիրական աշխատանքներով, ձեռագրեր է հավաքել կամ անձամբ արտագրել իր սեփական և այլոց գործածության համար։ Այսպես, ներկայումս Հայկական ՍՍՌ Պետական ձեռագրատանը (Մատենադարանում) կա հինգ ձեռագիր, որոնք կրում են 9028, 9029, 9030, 9031 և 9034 համարները և որոնք պատկանելիս են եղել հիշյալ քահանային։

Այդ ձեռագրերից՝ № 9028-ը «Ավետարանի մեկնություն» է, որի սկիզբն ու վերջը թերի է. համարվում է ԺԷ—ԺԸ դարի գրչություն։ № 9031-ի վերնագիրն է՝ «Մեկնութիւն համառօտ Դանիէլի մարգարէի, զոր հոգեպայծառ և իմաստնախոհ վարդապետին Վարդանայ շարադրեալ է ի հոգեկիր մեկնողացն ձայնից Եփրեմի, Հիպոլիտայ, Ստեփաննոսի Սիւնեցւոյ ի խնդրոյ ուսումնասէր մանկանց և ի դիւրահասութիւն ընթերցողացն։ Հիշատակարանում ասված է (74բ և շար.) որ գիրքը գրվել է ՉԺՉ—ՉԺԷ թվականներին (=1267—1268)։

№ 9029 փոքրիկ ձեռագիրը պարունակում է մի շարք խրատներ, ավելի ճիշտ՝ ուղեցույցներ վարաղ անելու, ոսկեջուր պատրաստելու, դրքի կող վարաղելու, քիչ ոսկով շատ ոսկեջուր անելու, արծաթաջուր պատրաստելու, արծաթաջրելու մասին և այլն։ Վերջում խրատներ, թե ինչպես պետք է պատրաստել զանազան ներկեր։ Գրքույկը գրել է երևանցի ծաղկազարդ Իսահակ եպիսկոպոս մահտեսի Տեր-Գրիգորյանը իր հոր տանը Երևանում, 1840 թվականի օգոստոսի 28-ին։ Գրքի մեջտեղում հեղինակը պատմում է իր ժամանակի անցքերի մասին, ինչպես իրեն հանձնարարվել է «Որդան կարմիրը հավաքել, որ նա կատարել է, ինչպես պետությունը նրան տարեկան երկու հարյուր ռուբլի ռոճիկ է նշանակել և այլն։

Մյուս երկու ձեռագիրներն արտագրված են Մինաս քահանա Հարությունի Վահանյանցի ձեռքով։ Դրանցից առաջինը (№ 9030) Միքայել վարդապետ Ջամչյանի «Վահան հաւատոյ ուղղափառութեան հայոց» աշխատությունն է, որ նա արտագրել է 1862 թվականի հունիսին, «ի տուրբ մենաստանս Հառիճոյ», սանահնեցի սարկավագ Հակոբ Դավթյանի (հետագայի Արիստակես արքեպիսկոպոս Դավթյանի) 1860 թվականին Ս. Էջմիածնում գրած օրինակից։

Ձեռագրի 165—166 էջերում կա գրչի վերջաբանը՝ Հայոց Եկեղեցին ստուգությամբ հերձվածող և հերետիկոս անվանողների դեմ, որի մեջ ասված է, որ նա Հայաստանյայց Եկեղեցու մասին եղած անասելի անիրավ զրպարտությանց դեմ Զամչյանի հորինած գիրքն արտագրել է «Ցօգուտ հայրենի և հարազատ Սուրբ Եկեղեցւոյս մերոյ, որով թերևս կարկեսցին բերանք նանրախորհուրդ թշնամեաց զինողաց ընդդէմ մերս։ Վերջաբանն ստորագրված է՝ «Մինաս քահանա Հարութիւն Վահանեանց յամի ՌՅԺԱ (=Քրիստական 1862)»։ Էջ 172-ում գրված է՝ «Ի վայելումն գրոյս Մինաս քահանայի Յարութիւն Վահանեանց Ղիլարեցւոյ»։

Վերջին և ամենակարևոր ձեռագիրը № 9034-ն է, որ կրում է «Բառգիրք համառոտ հայկազեան լեզուի» վերնագիրը։ Այս ձեռագիրը բաղկացած է մեծադիր 212 թերթից, գրչի համարակալությամբ 423 երկսյուն գրված էջից (վերջում կան մի քանի չգրված թերթեր) և պարունակում է Ա—ի՝ տառը ներառյալ։

Արդյոք սա արտագրությո՞ւն է նախկին որևէ բառարանից, թե գրիչն ինքն է համառոտել ավելի ընդարձակ բառարաններից, այդ պետք է ցույց տա հետագա մանրամասն քննությունը։ Բառարանի թղթե պահպանակի վրա գրված է՝ «Ի գրեանց Մինաս քահանայի Հարութիւնեանց»։

Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

(Պատմական գիտությունների թեկնածու, ճեմագետ)

ՍԱՆԱՀՆԻ ՎԱՆՔԸ*

Զաքարյան Երկայնաբազուկների տապանատունը.— Գտնվում է Ամենափրկիչ եկեղեցուց քիչ դեպի հարավ-արևելք, համեմատաբար բարձր դիրքով։ Դռան ճակատին եղած արձանագրությունից երևում է, որ կառուցել են Զաքարե և Իվանե եղբայրները իրենց հոր՝ Սարգսի գերեզմանի վրա 1189 թվականին։ Մեծ մատռան ձևով կառուցված շենք է, թաղակապ ծածկով։ Բաղկացած է երկու մասից։ Արևմտյան մասը համեմատաբար բարձր է, ուղղանկյուն հատակագծով։ Արևելյան մասը ցածր է, կողերից՝ պատերին կից ձգվող կարճ որմնասյուները միանում են որմնակամարներով և ծածկի թաղը գոտկող կամարներով։

Այդ մասի տանիքին կառուցված է եղել փոքր մատուռ՝ արևելյան կողմում փոքր սեղանով, որը ավերակ վիճակում է. սրա հարավային և հյուսիսային կողմերում պահպանվել են այլ շենքերի պատերի ստորին մասերը, որոնցից հյուսիսային կողմի շենքի պատի մնացած կտորի վրա նկատելի են բարակ, զուգ գլանաձև որմնասյուների մնացորդներ. այդ շենքերի ինչ լինելը պարզ չէ։

Այդ նույն արևելյան մասի ներսում, արևելյան պատի տակ, իրար կողքի կանգնեցված են եղել երեք խաչքարեր, որոնցից միայն հյուսիսային կողմինն է մնում. մյուսների միայն մեծ պատվանդանները են պահպանվել։ Խաչքարերի առջև կան մեկական հարթ երեսով մեծ տապանաքարեր։ Կանգուն մնացած խաչքարը բավականին մեծ է և շքեղորեն քանդակազարդված։ Խաչքարի վրա եղած արձանագրության համաձայն այն պատկանում է Սարգիս Զաքարյանին՝ Զաքարեի հորը։ Կից գերեզմաններից մեկը պետք է լինի Զաքարե սպասալարինը։

Դամբարանի այդ մասը մի ընդհանուր կամարակապ լայն բացվածքով միանում է արևմտյան մասի հետ, որի հատակը նույնպես պատած է գերեզմաններով։ Այդ գերեզմանների մեծագույն մասը պատկանում է Երկայնաբազուկ Արղությանցներին, որոնք բացի հայերենից, ունեն նաև ռուսերեն և վրացերեն լեզուներով գրված տապանագրություններ։

Դամբարանի լայն մուտքը արևմտյան կողմից է՝ շքեղորեն զարդարված պարակալով։ Դամբարանը գտնվելով թեքության ստորոտում, հողի անընդհատ սողումների հետևանքով այժմ կիսագետնափոր է դարձել։ Հուշարձանների պահպանության կոմիտեն 1955 թվականին որոշ չափով բացել ու մաքրել է հողից։

ՏԱՊԱՆԱՏԱՆ ՄՈՒՏՔԻ ՀԱԿԱՏԻՆ

Ի) «Զամարէ և Իւանէ, որդիք Մեծին Սարգսի, շինեցաք զեանգստարանս. յիշեցէք ի Քրիստոս. թվ. ՈԼԸ» (1189)։

ՍԱՐԳՍԻ ԵԱՅՔԱՐ-ՄԱՀԱՐՁԱՆԻ ԵՐԵՔՎԻ ՄԱՍԻ ՎՐԱ

ԻԱ) «Ի ՈԼԶ (1187 թ.) կատարեցաւ ի Քրիստոս Մեծն Սարգիս, որդի Զամարէի, բոռն աւագ Սարգսի, որդիս Զամարէ և Իւանէ կանգնեցաք զխաչս. յիշեցէք ի Քրիստոս»։

* Շարունակված համարի 1958 թվականի N N Ը-ից և Թ-ից։

ՆՈՒՅՆ ԵԱՅՔԱՐ-ՄԱՇԱՐՋԱՆԻ ՀԱԿԱՑԻ ՄԱՍԻ ՎՐԱ

ԻԲ) «Նշանդ Աստուծոյ բարեխաւս լեր ամիրսպասալար հայոց և վրաց Սարգսի»:

Ս. Հակոբ եկեղեցի.— Գտնվում է Զաքարյանների դամբարանի արևելյան կողմում. Այդ հուշարձանի մասին նույնպես բացակայում են մատենագրական ու վիմագրական վկայություններ. Գմբեթավոր փոքր շենք է, հատակագիծը արտաքուստ ուղղանկյուն է, ներսից՝ անկյունում եղած մեկական փոքր խորանները այն դարձնում են խաչաձև՝ ուղղանկյուն խալթերով. Կառուցման այդ ձևը բնորոշ է Ժ—ԺԳ դարերին:

ուղղանկյուն է, թաղակապ ծածկով. միակ դուռն արևմտյան կողմից է. Բնորոշ է այն, որ արևելյան կողմից ունի դույզ կիսակլոր աբսիդ, որպիսի հանդամանքը վկայում է նրա քաղկեդոնիկ լինելու փաստը, ուստի նրա կառուցումը պետք է վերագրել ԺԳ դարին. Նկատելի են մի շարք վերանորոգումների հետքեր, որոնց մասին տեղեկություններ չկան. Վերջին անգամ վերանորոգված է Հուշարձանների պահպանության կոմիտեի կողմից 1956 թվականին՝ վերականգնելով թափված երեսապատ քարերը և տանիքը պատելով սալաքարերով.

Տուռեորդի Գրիգոր վարդապետի մանարձանը.— Գտնվում է Ս. Հարություն եկեղեցու հյուսիսային կողմում. այդ կողմի պատի

ՍԱՆԱՀՆԻ ՎԱՆՔ. — ԶԱՔԱՐՅԱՆ ԵՐԿԱՅՆԱՐԱՁՈՒԿՆԵՐԻ ԴԱՄԲԱՐԱՆԱՅՈՒՆԸ

Այս եկեղեցին վանքի առաջնորդ Առաքել արքեպիսկոպոսը և Սողոմոն Արղությանը քանդել են տալիս 1815 թվականին և քարն օգտագործում Ամենափրկիչ եկեղեցու վերանորոգման համար. պահպանվել են հյուսիսային և արևելյան պատերի որոշ մասերը միայն:

Ս. Հարություն եկեղեցի.— Գտնվում է Ս. Հակոբ եկեղեցու արևելյան կողմում. Սրա կառուցման ժամանակը, ինչպես և կառուցողները նույնպես հայտնի չեն. Հատակագիծը

արևմտյան ծայրին կից. Թաղկացած է պատվանդանից ու խաչքարից. Պատվանդանը քառակող է, բարձրադիր, արևմտյան երեսի եզրերը զարդարված են դույզ դլանաձև որմնասյուներով, որոնք ունեն խարիսխներ ու խոյակներ և միացած են որմնակամարներով, ինչպես և երկրաչափական ձևի այլ քանդակներով. Կենտրոնի մասն աստիճանավոր է. Խաչքարը նույնպես բարձրադիր է ու մեծ, պատած բուսական և երկրաչափական զանազան ձևերի նուրբ մշակված զարդա-



ՍԱՆԱՀՆԻ ՎԱՆՔ.— ՏՈՒՏԵՈՐԴՈՒ ՄԱՀԱՐՁԱՆԸ

բանքներով։ Առանձնապես շատ գեղեցիկ է մշակված խաչքարի հիմքի մասը, մանավանդ նրա կարնիզաքարերը (քիվերը)։

Խաչքարի հետևի ամբողջ երեսով մեկ փորագրված է տապանագրությունը՝ 1184 թվականով, որից երևում է, որ մահարձանը կառուցել է տվել ինքը Տուտեորդին իր կենդանության ժամանակ, որը հետևյալն է.

ԻԳ) «Յամի յոռում եղև կատարումն արքային վրաց Գիորգի, ես Գրիգոր վարդապետ, որդի Տուտէ Խաչենացւոյ, բնակեալ ընդ Հովանեաւ սուրբ Աստուածածնիս, կանգնեցի՝ գլխաչս ի վերա հանգստարանի իմոյ ակն ունելով ելից ի կենցաղոյս։ Եւ արդ, անկեալ դնեմ առ ոտս քո նշանդ Աստուծոյ և աղաչեմ անդարձաւ շրթամբք, զի ի մեծի երկման քո լիցիս բարեխաւս անարժան ծառայիս Քրիստոսի։ Եւ որք երկրպագէք յիշեցէք ի Քրիստոս Յիսուս։ Կանգնեցաւ ի հայրութիանս Յովհաննիսի, յոռում ամի նորոգեցաւ կարուտիկէս սուրբ։ Ի թուականութեանս ՈԼԳ (1184)։ Զմխիթար կազմիչ յիշեսջիք ի Քրիստոս»։*

Հովհաննես Բահանայի մահարձանը.— Գտնվում է Տուտեորդու մահարձանի արևելյան կողմում. պատվանդանը հարթ կողքով է, նույն ձևով է և խաչքարի հիմքը, որը մի ամբողջական քարից է և համեմատաբար փոքր է։ Խաչքարը նույնպես համեմատաբար փոքր է և պատած է բուսական ու երկրաչափական ձևերի գեղեցիկ մշակված զարդաքանդակներով։ Խաչքարի հետևի մասում փորագրված է տապանագրությունը՝ 1227 թվականով, որը հետևյալն է.

ԻԴ) «Ի թվի ՈԼԶ. ես՝ Տէր Յոհաննէս առաջնորդ սուրբ ուխտին Հաղբատա կանգնեցի գլխաչս ի հանգստարանի սնուցողի իմոյ Յովանէս բահանայի։ Որք երկրպագէք յիշեցէք ի Տէր»։

Հյուրատուն.— Հյուրատան շենքն այժմ գոյություն չունի, բայց վիմագրական վկայություններից պարզ երևում է, որ վանքն ունեցել է նաև հյուրատուն։ Վանքի արևմտյան կողմում, պարսպից դուրս մի տան պարտեզում գտնվող «Միրանավոր» խաչքարի վրա եղած արձանագրությունը խոսում է հյուրատան կառուցման, իսկ պատվանդանի վրայի արձանագրությունը՝ հյուրատանը նվերներ տալու մասին։ Բացի Միրանավոր խաչարձանի վրա եղած այդ արձանագրություններից, դրատան սրահի վրա եղած մի այլ արձանագրության մեջ նույնպես խոսվում է հյուրատանը նվերներ տալու մասին։ Ահա՝ այդ արձանագրությունները.

ԻԵ) «Ի թվականիս հայոց ՈՄԴ (1205)։ Ի թագաւորութեան վրաց Թամարին, լամիրսպասալարութեան Զաքարէի և Իւանէի՝ եղբարց հարազատաց, որդեաց մեծին Սարգսի. ես հայր Յոհաննէս գաւառաւ խաչենեցի, և-կեալ բնակեցա ընդ հովանեաւ սրբոյ Աստուածածնիս և շինեցի գեհիւրատունս վասն փրկութեան հոգոյ իմոյ և արեղատութեան տէրանց մերոց Զաքարէի և Իւանէի, և էտու ի հիւրատունս գկոշայորին այգին, զՈռնագոմուց կէսն և կանգնեցի գլխաչս։ Արդ, որ զմեր ղոսրդածն խափանէ դատի ի Տեառնէ, և կատարիչքն աւրհնեսցին ի Քրիստոսէ. ամէն»։

ԻԶ) «Թվ. ՈԼԱ։ Ես Տէր Յոհաննէս առաջնորդ Սանահնիս էտու գԱստուածածնի ձորին այգին և գաներն և զայն հողն, որ ի վերի դեհին է՝ ի հիւրատունս։ Որ խափանէ և հանէ՝ յերիս սուրբ ժողովոյն նզովեալ լիցի. ամէն»։

ԻԷ) «Մեծ յուսով ես Վարդան բահանա զնեցի գԱտոմին էգին մինչ ի գրատանն Հն (75) սպիտակի իմ հալալ ընչիւք և տվի հիւրատանն առաջնորդութեան հաւր Կիրակոսի և համակցութեամբ եղբարց։ Վարդիվարի յայլ գիրէն տան ի լրեն։ Ով զէգին հիւրատանէն հանէ կամ գիրին խափանէ, ՅԺԸ հայրապետաց նզովեալ է։ Թվին ՉԻԴ (1275)։*

Տեղում կատարված հնագիտական հետազոտությունները ցույց են տալիս, որ հյուրա-

տան շենքը պետք է եղած լիներ վերը նշված Սիրանավոր խաչքարի մոտ և, որ վերջինս պետք է կանգնեցված լիներ հյուսիսային արևմտյան պատի տակ, հյուսիսային մուտքի կողքին։ Որ հյուսիսները գտնվել են վանքի պարսպապատերից դուրս, այդ մասին կան ուրիշ օրինակներ էլ, ինչպես օրինակ Ամազու Ներսավանքի հյուսիսումը և այլն։

Խորիշանի մանուածանը.— Գտնվում է մեծ գավթի արևմտյան կողմում, այդ կողմի պատի ամենահյուսիսային կամարաձև բացվածքի առջև։ Չնայած մատենագրության մեջ հայտնի է Խորիշահի խաչքար անունով, բայց խաչքարի արձանագրությունից երևում է, որ նա պատկանում է թե՛ Խորիշահին և թե՛ իր ամուսին Քուրդ իշխանին, որոնք ապրել են ԺԳ դարի առաջին կեսում։

Խաչարձանը բաղկացած է պատվանդանից, խաչքարից և հիմքից։ Պատվանդանը կապտավուն բազալտից է, բարձրադիր, արևմտյան, հարավային և հյուսիսային կողերը զարդարված են զույգ գլանաձև որմնասյուներով, որոնք ունեն խարիսխներ ու խոյակներ և միանում են որմնակամարներով։ Խաչքարը սովորականի պես կարմիր քարից է, բարձր և պատած է բուսական ու երկրաչափական ձևերի, շատ նուրբ ձևով մշակված զարդաքանդակներով։ Խաչքարի հիմքը մի ամբողջական քարից է. հետաքրքիր են սրա բիվերի ստալակտիկ զարդաքանդակները։

ԻԸ) «Նշանդ Աստուծոյ ալգնեա Քրդի, Խորիշանի և զաւակաց նոցա։»

Սարգսի խաչարձանը.— Գտնվում է մեծ գավթի արևմտյան կողմում, այդ կողմի պատի ամենահարավային կամարաձև բացվածքի առջև։ Բաղկացած է պատվանդանից, խաչքարից և հիմքից։ Պատվանդանը համեմատաբար ավելի բարձրադիր է, հարթ, մաքուր մշակված կողերով։ Խաչքարը պատվանդանի համապատասխան բարձրությամբ է, շքեղորեն քանդակազարդված, որոնց մեջ առանձնապես ուշագրավ են շղթայաձև և ծաղկեհյուս քանդակները։ Խաչքարի հիմքը ամբողջական քարից է, առջևի կողմից թեք տաշված։ Խաչարձանը պատկանում է Համազասպյան Սմբատի որդի Սարգսին, որի վերաբերյալ արձանագրությունը փորագրված է խաչքարի հետևի ամբողջ երեսի վրա՝ 1245 թվականով, որը հետևյալն է.

ԻԹ) «Ի ՈՂԴ թվիս կանգնեցաւ խաչս յիշատակ Սարգսի, որդոյ Սմբատայ, թոռն Համազասպեանց, որ մեռաւ ի պատերազմի և թաղեցաւ ի դուռն Աստուածածնիս և որդի նորա Սմբատ և ամուսին Աղդաս եռուն ի Մղարդն զԱրլասադանց նայրենիքն ամենայն շան ու գենով յԱստուածածինս և ի. աւրավար նոր։ Ով զայն հանէ յԱստուածածնէս Գ. սուրբ ժողովոյն նզովեսցի յԱստուածոյ։ Ես հայր Վարդան, վարդապետ Գրիգոր և ամէն միաբանքս տուաք զամէն հիսուսանիս հաւասանից տաւնին զերկու եկեղեցին Սմբատայ և զայլն Սարգսի։ Ով խափանէ զվերագրեալ նզովսն առցե։»

Գրիգոր իշխանի խաչարձանը.— Գտնվում է մեծ գավթի ներսում, Աստվածածին եկեղեցու արևմտյան պատին կից՝ մուտքի հարավային կողմում։ Բարձրադիր պատվանդանը զարդարված է գլանաձև բներ ունեցող որմնասյուներով, որոնց որմնակամարների ծայրերը հենվում են խոյակների վրա։ Խաչքարը համապատասխանորեն բարձր է և պատած է բուսական ու երկրաչափական զանազան ձևերի, վերին աստիճանի նուրբ մշակված շքեղ զարդաքանդակներով։

Խաչքարի առջևում գտնվում է Գրիգորի վերեզմանը՝ հարթ երես ունեցող մեծ տապանաքարով, վրան «Գրիգոր» մակագրությամբ։ Խաչարձանի կանգնեցման վերաբերյալ արձանագրությունը գտնվում է խաչքարի ճակատին, առանց տարեթվի, հետևյալ ձևով.

Լ) «Ես Դաւիր իշխանաց իշխան կանգնեցի զսուրբ նշանս ի վերայ գերեզմանի հաւր իմոյ Գրիգորի։ Որ երկրպագէ յաղաւթս յիշեցէք։»

Խաչարձան Ավետեցի, Զենանի և Լուսերի.— Գտնվում է Ս. Գրիգոր եկեղեցու և գրատան սրահի միացման անկյունում, արևմտյան կողմից։ Բարձր կարնիզավոր պատվանդանը զարդարված է գլանաձև որմնասյունավոր քանդակներով. իսկ խաչքարը, որը պատվանդանի համեմատությամբ փոքր է, ունի յուրօրինակ մշակում, պատած է գրեթե բուսական ձևի զարդաքանդակներով և վերցված է շրջանակի մեջ։ Առանձնապես հետաքրքիր են խաչքարի ճակատեզրի ծաղկենկար հիմք ունեցող ստալակտիտ քանդակները։

Խաչարձանի կառուցման վերաբերյալ արձանագրությունը գտնվում է պատվանդանի վրա, մի ուրիշ կարճ արձանագրություն էլ՝ բարեմաղթական բովանդակությամբ, գտնվում է խաչքարի ճակատին, որոնք մեջ են բերվում ստորև։ Խաչարձանը կանգնեցնողների գերեզմանները՝ հարթ երես տապանաքարերով, գտնվում են խաչարձանի առջևում՝ համապատասխան տապանագրություններով։

ԼԱ) «Կամաւն Աստուծոյ ես Լուսեր վարաշկերտեցի և Զէնան՝ ամուսին եղբաւր իմոյ Աւետեցն, կանգնեցաք զխաչս ի վերա ճանգրստարանի սոցա. որ երկրպագէ յիշեցէք ի Քրիստոս։»

ԼԲ) «Նշանդ Աստուծոյ լեր բարեխաւս զաւոն Աւետեցն, Լուսերին, Զէնանին և զաւակաց նոցա։»

Խաչարձան.— Գտնվում է գրատան արևմտյան կողմում, պատի հարավային ծայրին կից։ Պատվանդանը ամբողջական մեծ քար է, բարձրադիր, կողերը հարթ և լերկ մշակված, երեք հատ քիվաքարերով։ Խաչքարը նույնպես բարձր է, պարզ ձևով քանդակազարդված՝ գլխավորապես բուսական ձևերով և հիմնված է համեմատաբար փոքր քարի վրա։

Կանգնեցված է ոմն Ցավուրմանի հիշատակին 1262 թվականին, որի վերաբերյալ կարճ արձանագրությունը գտնվում է խաչքարի ճակատին։

Վանքի բակի աղբյուրը.— Գտնվում է հուշարձանների խմբի հյուսիսային կողմում, վանքին որպես պարիսպ հանդիսացող թմբի կենտրոնական մասում։ Խորը խորշաձև փոքրիկ կառուցվածք է, թաղակապ տանիքով, ուր ամրացված է ջրի ծորակը։ Ներսում փորագրված արձանագրության համաձայն կառուցել է վանքի առաջնորդ Հարությունը արքեպիսկոպոսը 1831 թվականին։

(Դ) «Ցառութիւն արհեպիսկոպոս շինեաց զաղբիւս այս յորդանոս։ Ով վայելողք այսմ ջրոյս յիշեցէք զսա առ տէր Յիսուս։ Սա էր ոռնմէն տէր Բարսեղեանց և սանմանէն անտի Տաւուշաց. Սանահին յառաջնորդեաց, արդեամբ իւրով զաւս յօրինեաց։ Թվ. 1831։»

Երկայնաքազուկ Արղությանների դամբարանը.— Գտնվում է Ամենափրկիչ եկեղեցու հարավ-արևելյան կողմում, հավասար հարթության վրա, մոտիկ։ Հյուսիսից հարավ ձգվող ոչ այնքան մեծ մի շենք է, որի հատակագիծն ուղղանկյուն է, ծածկը թաղակապ՝ երկթեք, սուր վեղարաձև տանիքով։ Ներսում գտնվում են Արղությանների տոհմին պատկանող մի շարք բարձրաստիճան անձնավորությունների գերեզմանները, որոնց գերեզմանաքարերի երեսները պատած են մարմարյա սալերով և ունեն ԺԹ դարի տարբեր ժամանակներին պատկանող տապանագրություններ։ Դամբարանի շենքը նույնպես պատկանում է ԺԹ դարին։ Մուտքը հյուսիսային կողմից է։

Գերեզմանատունը տարածվում է վանքի բակում, ամենուրեք, ինչպես և գավիթների, սրահների և Մագիստրոսի ճեմարանի՝ ներսում։ Տապանաքարերը հարթ երեսով են, ոմանք շատ մեծ և սովորական ձևով մշակված։ Կան բազմաթիվ խաչարձաններ, որոնց մի մասի խաչքարերը վայր են ընկած ու անհայտացած։ Թվորոշ են մի կարգ խաչարձաններ, որոնց հիմքերն ու խաչքարերը մի ամբողջական քարից են։ Խաչարձաններից բացի կան նաև այլ ձևերի մահարձաններ, որոնք վերաբերում են ավելի ուշ ժամանակներին։ Դրանցից են Երկայնաքազուկ Արղությանների տոհմին պատկանող մի քանի անձանց մահարձանները, որոնք գտնվում են Ամենափրկիչ եկեղեցու արևելյան և Ս. Գրիգոր եկեղեցու հարավային կողմերում։

Գերեզմանաքարերի և մահարձանների մեծագույն մասն ունեն թվակիր տապանագրություններ, որից պարզ է դառնում, որ գերեզմանոցը ընդհանրապես պատկանում է ԺԵ—ԺԹ դարերին։

Աղբյուրը, չնայած գտնվում է գյուղի հարավ-արևմտյան եզրին, վանքից հեռու, բայց որովհետև այն կառուցված է գլխավորապես վանքի համար, ապա նրան նույնպես պետք է դասել վանքի հուշարձանների շարքը։ Դա սրահաձև մի շենք է, երեք կողմերից պատերով, իսկ չորրորդ՝ հյուսիսային կողմից ունի երկու կամարակապ մեծ բացվածքներ, որոնք իրարից անջատվում են կիսամիջնորմով։ Վերջինս արտաքին ծայրին ունի մեծ գլանաձև բոռ և դրան համաչափ խարիսխ ու խոյակ ունեցող կարճ սյուն։ Այդ միջնորմով շենքը բաժանվում է երկու հավասար նավերի, որոնք ունեն թաղակապ ծածկ՝ մի ընդհանուր, երկթեք տանիքով։

Ներսում, պատերին կից շարված են ջրի ավազաններ, որոնց մեջ թափվում է ջուրը. վերջինս կավե թրծած խողովակներով բերված է Զաթինգաղ լեռների աղբյուրներից։

Աղբյուրի կառուցման ժամանակը որոշ չէ, ներսում, հարավային պատի վրա փորագրված է 1255 թվականը կրող արձանագրությունը, որը մեջ ենք բերում ստորև և որը ամենից ճիշտ ընթերցել և առաջին անգամ հրատարակել է դոկտոր-պրոֆեսոր Կ. Դաֆթարյանը[11], նվիրատվական է։ Սակայն պրոֆ. Դաֆթարյանը գտնում է, որ այդ նվիրատվությունը կատարված է աղբյուրի կառուցման կապակցությամբ. դա շատ հավանական է, որովհետև Հաղբատի վանքի աղբյուրի շենքն էլ կառուցված է նույն ժամանակներում՝ 1258 թվականին։

(Դ) «Քրիստոս Աստուած ողորմի Սխիթար քահանայի ՃՌ (100) սպիտակ եռ յաւազանս. ՉԴ թվիս ՀՍ (1255)։»

Այս աղբյուրի շենքը նույնպես գտնվում էր խիստ քայքայված և անմխիթար վիճակում, ըստ որի ամբողջապես քանդված էր տանիքը, թափված էին քիվերն ու պատերի վերին քարերը, ինչպես և երեսապատ որոշ քարեր, սարալանջից սղած հողն ամբողջապես ծածկել էր պատերը։

Պատմական հուշարձանների պահպանության կոմիտեն Սանահնի վանքի՝ 1952—1957 թվականների ընդհանուր վերանորոգումների ընթացքում հիմնովին վերականգ-

11 Կ. Դաֆթարյան, «Սանահնի վանքը և նրա արձանագրությունները», Երևան, 1957 թ., էջ 185։

նել, մաքրել ու բարեկարգել է նաև այս հուշարձանը։ Մաքրման ու վերանորոգման աշխատանքների ընթացքում հայտնաբերվել է մի խաչքար հետևյալ արձանագրությամբ.

(Ե) «Ի թվիս ՉԽԱ (1292) կոչեցաւ խաչս և շինեցաւ լիճս կառողութեամբ Ց(....) ՆԻՍԻ և աշխատութեամբ Խոցադեղ միակեցի. յիշեցէք ի Քրիստոս»[12],

Աղբյուրի շենքին կից պահպանվել է մեծ ավազանի քարաշար պատերի ստորին մասերը, որը ենթադրել է տալիս, թե արձանագրության մեջ հիշված լճի կառուցումը պետք է վերաբերի հենց այդ ավազանին։

Կամուրջի կառուցման վերաբերյալ արձանագրությունը փորագրված է մի խաչքարի վրա, որը ներկայումս կանգնեցված է կամուրջի՝ գետի ձախակողմյան ծայրին (սկզբնական շրջանում որտեղ է կանգնեցված ելել պարզ չէ)։

Այդ արձանագրության համաձայն, որը մեջ է բերվում ստորև, կամուրջը կառուցել է Աբաս Բագրատունու կին, Զաքարեի և Իվանեի քույր Վանենին, իր վաղամեռիկ ամուսնու հիշատակին։ Բայց որովհետև խաչքարի վերևի մասը կտրված լինելու հետևանքով արձանագրության սկիզբը չկա, որտեղ սովորաբար լինում է տարեթիվը, ուստի հայտնի չէ արձանագրությունը տարեթիվ ունեցե՞լ է թե ոչ (բոլոր ընդօրինակողներն էլ այդ վիճակում են դրի առել)։

*Քանի որ կամուրջը կառուցվել է Աբասի հիշատակին, որի մահը տեղի է ունեցել 1192 թվականին, ապա հասկանալի է, որ նրա կառուցումը կարող էր տեղի ունենալ 1192 թվականից հետո։ Իսկ այնպիսի մի խոշոր և լուրջ կառուցվածքի շինարարությունը, ինչպիսին Սանահնի կամուրջն է, կարող էր ավարտվել մի շարք տարիների ընթացքում, ապա ամենից հավանականը



ՍԱՆԱՀՆԻ ԿԱՄՈՒՐՋԸ

Սանահնի կամուրջը.— Այս հուշարձանը ընկած գտնվում է Ալավերդի քաղաքում, Սանահնից բավականին հեռու, բայց որովհետև կառուցված է եղել հատկապես Սանահնի վանքի համար, որի հետևանքով էլ, համարյա, բոլոր ժամանակներում կոչվել է «Սանահնի կամուրջ», ապա դա նույնպես պետք է վերագրել Սանահնի վանքի հուշարձանների խմբին։

[12] Այդ արձանագրությունը, որը հայտնաբերվում է առաջին անգամ, տեղում ընթերցել է նույն Կոմիտեի գիտական աշխատակից Աբրահամ Ներսիսյանը, որից և օգտվում ենք մենք։

ուն է, որ նրա շինարարությունը ավարտված պետք է լինի ԺԳ դարի սկզբներին, համենայն դեպս ոչ ուշ քան մինչև Վանենիի մահվան տարին՝ 1234 թվականը։

Ջ «... ազգին Բագրատունեաց, ես՝ Վանենի, որուստր իշխանաց իշխանին Սարգսի, որդոյ Զամարէի. կին Աբասա բագաւորի, որ կիսաւրե վախճաեցեալ խաւարեցոյց մեզ, շինեցի զկամուրջս և կանգնեցի զիսաչս յիշատակ ճամ և մխիթար ինձ և ի կեանս ծնողաց և եղբարց իմոց յիշեցէք ի Քրիստոս Յիսուս։»

Սանահնի կամուրջը հայկական ճարտարապետության ամենահոյակապ կոթողներից է, նա հայ վարպետի ստեղծագործմտքի խիզախումն ու արդասիքն է։ Կառուցված է Դեբեդ գետի վրա, միաթռիչք լայն ու բարձր կամարով, որի մի ծայրը հենված է գետի աջ ափի ժայռերին, իսկ մյուսը՝ ձախ ափին կառուցված հատուկ պատվանդանի վրա, որի հետևանքով դեպի ձախ ափը կամուրջը խիստ զառիթափ է։ Դրան համապատասխան այդ մասի կողապատերն աստիճանաձև են. կամուրջի կողապատերի կենտրոնի մասը մեկ աստիճանով բարձր է, որի ծայրերի քարերը պատած են առյուծների բարձրաքանդակներով։

Սանահնի կամուրջը ենթարկվել է վերանորոգումների, որոնց թվորի մասին, սակայն, հիշատակություններ չկան։ Ամենահին վերանորոգման վերաբերյալ արձանագրությունը գտնվում է գետի ձախակողմյան թևի արևելյան երեսի վրա՝ առանց տարեթվի։ Վերջին վերանորոգումները կատարվել են Հուշարձանների պահպանության կոմիտեի կողմից 1928, 1931 և 1940 թվականներին, որի ընթացքում ամրացվել է կամարի՝ գետի ձախակողմյան ծայրի պատվանդանը, վերականգնվել են թափված երեսապատ քարերը, հանվել և ամրացվել են կրաշաղախ միջուկից անբաժված երեսապատ քարերը, լրացվել են կողապատերից թափված կամարդարտված քարերը, վերականգնվել է երեսի նալահատակը, վերադրված է վայր ընկած խաչքարը և այլն։

Սանահնի վանքի հուշարձանների խմբին պատկանող վերը նկարագրված բոլոր շենքերն էլ կառուցված են կապտագույն բազալտի հանքքարի տեսակին պատկանող ամուր, մաքուր տաշած մեծ քարերով, կրաշաղախով։ Այդ նույն քարերից են պատրաստված նաև խաչարձանների պատվանդանները և գերեզմանաքարերը։ Խաչքարերը, ինչպես և տանիքների սալաքարերը պատրաստված են կարմրագույն ամուր քարից, որն իր տեսակով ավելի մոտ է անտեզիտին։

ՄԱՑՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՄԱՑՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

ԹԲԻԼԻՍԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 1500-ԱՄՅԱԿԸ.— Հոկտեմբերի 18-ին լրացավ եղբայրական Վրաստանի գեղեցիկ մայրաքաղաք Թբիլիսիի հիմնադրման 1500-ամյակը։

Այդ նշանակալից օրը վրաց ժողովրդի հետ միասին նշեց նաև հայ ժողովուրդը։ Հայ և վրաց ժողովուրդների բարեկամությունը դալիս է դարերի խորքից։ Թբիլիսի (Թիֆլիս) քաղաքը մեր ազգային մշակույթի, գրականության ու արվեստի կարևոր օջախներից մեկն է եղել։ Այս քաղաքում է, որ իր քյամանչան է հնչեցրել անմահ Սայաթ-Նովան։ Այստեղ են ապրել և ստեղծագործել Սունդուկյանն ու Բաֆֆին, Թումանյանն ու Բաշինջաղյանը, Նար-Դոսն ու Հակոբ Հակոբյանը և ուրիշներ։

Հայ և վրաց ժողովուրդները ուս-ուսի միշտ միասին են մաքառել, իրենց երկրի ազատագրության համար։

Նշանակալից այդ տարեդարձի առթիվ, ի նշան Հայ և վրաց ժողովուրդների դարավոր ու անխախտ բարեկամության, Երևան քաղաքի գլխավոր պողոտաներից մեկը կոչվել է Թբիլիսիի խճուղի։ Այն սկսվում է «Հաղթանակ» զբոսայգու մուտքի մոտ հրապարակից և ձգվում մինչև Ռեյնների գործարանը։

Ալ. ՇԻՐՎԱՆԶԱԴԵԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԸ.— Նոյեմբեր ամսին Մայր Հայրենիքում արժանավոր հանդիսությամբ նշվեց հայ մեծ գրող Ալ. Շիրվանզադեի (Ալեքսանդր Մովսիսյան) ծննդյան 100-ամյակը։

Բացառիկ մեծ նշանակություն ունի նրա գրական ստեղծագործությունը հայ գրականության համար։ Ավելի քան կես դար տևող նրա ստեղծագործությունը ապրեց հարաճուն վերելք։ Շիրվանզադեն շարունակեց և զարգացրեց հայ կլասիկ գրականության լավագույն ավանդությունները։

Նա «Քաոս», «Նամուս», «Պատվի նամակ», «Զարգի», «Առոիստը» և այլ նշանավոր գործերով հարստացրեց մեր գրականությունը։

Հեղինակը այն մեծատաղանդ հայ արվեստագետներից է, որոնց բազմազգակել են հայ հնագույն ժողովրդի փառքը, աշխարհին ծանոթացրել փոքր ժողովրդի մեծ մշակույթի գանձերը։

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԳՐՈՂ ՎԱՀԵ-ՎԱՀ. ՅԱՆԻ ՀԵՏ.— Նոյեմբերի 11-ին Հայաստանի Գրողների տան գալիճում տեղի ունեցավ հանդիպում սփյուռքահայ գրող Վահե-Վահյանի հետ։

Գրողի կյանքի և ստեղծագործության մասին զեկուցեց բանասիրական գիտությունների թեկնածու Հր. Գրիգորյանը։

Լայն են Վահե-Վահյանի (Սարգիս Ապտալյան) գրական-հասարակական գործունեության շրջանակները։ Նա բանաստեղծ է, արձակագիր, գրաքննադատ, լրագրող, հրապարակախոս և խմբագիր։

Վահե-Վահյանի «Ոսկե կամուրջ» ժողովածուի մասին խոսեցին բանաստեղծներ Վ. Նորենցը, Ս. Կապուտիկյանը և Մ. Մարգարյանը։

Վերջում հեղինակությունի խոսք ասաց Վահե-Վահյանը։

Վահե-Վահյանի հետ հանդիպում կազմակերպվեց նաև Ե. Աբովյանի անվան Հայկական Մանկավարժական ինստիտուտում, որտեղ ի հիշատակ երիտասարդի, բանաստեղծին նվիրվեց մեծ լուսավորիչ Ե. Աբովյանի տունը պատկերող կտավը։

ՆՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.— Հայկական ՍՍՌ Առողջապահության մինիստրության նախաձեռնությամբ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը լույս է ընծայել պրոֆ. Բ. Հովհաննիսյանի «Պատկերազարդում հայ բժշկության պատմության» աշխատությունը, որը շարադրված է երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն։

Աշխատության մեջ մեծ տեղ են տրված հայ բժշկության կլասիկներ Գրիգոր Մագիստրոսին, Մխիթար Հերացուն և Ամիրդովլաթ Ամասիացուն վերաբերող նյութերին։

Հայ բժշկության պատմության անխոնջ ուսումնասիրող և խոշորագույն մասնագետ է պրոֆ. Կոռն Հովհաննիսյանը։ Սույն աշխատության լույս ընծայումը խոշոր և շնորհակալ գործ է։ Նրանք լեզուներով շարադրված այդ աշխատությունը աշխարհին ծանոթացնում է հայագիտության մի հարուստ և կարևոր ճյուղի փառավոր պատմությունը։

«ԵՐԵՎԱՆ» ՈՒՂԵՑՈՒՅՑԸ.— Հայաստան այցելող բազմաթիվ ճանապարհորդներին, տուրիստներին և այցելուներին մեր արևավառ մայրաքաղաքը լավագույնս ծանոթացնելու ազնիվ մտահոգությամբ, վերջերս 15 հազար օրինակ տիրաժով լույս է տեսել «Երևան ուղեցույցը՝ հայերեն-ռուսերեն, հայերեն-անգլերեն, հայերեն-ֆրանսերեն լեզուներով և բացատրություններով։

Ուղեցույցի մեջ տրված են Երևանի մշակութային օջախների, հուշարձանների, առանձին պողոտաների, հրապարակների ու շենքերի լուսանկարները։

Ուղեցույցը լայն տեղեկություններ է հաղորդում Երևան քաղաքի հիմնադրման, զարգացման առանձնահատկությունների, նրա մի շարք ճարտարապետական կառուցումների մասին։ Երևանը աշխարհի հնագույն քաղաքներից է։ Նա հիմնադրվել է 2 740 տարի առաջ՝ Արին-բերդի շրջակայքում, ուրարտական թագավոր Արգիշտիի՝ Մենուայի որդու կողմից։

Այդ բլրում հայտնաբերվել են մոնումենտալ կառույցվածքների մնացորդներ՝ պալատ, տաճարներ և այլն, նաև Արգիշտի Ա-ի սեպագիր արձանագրությունը Երեբունիի (Երևանի) հիմնադրման մասին։

ՀԻՆ ԲՆԱԿԱՏԵՂԻ.— Սևանի լճի ջրերից ստացված հողերում հնագետները այս տարի պեղել են ավելի քան 3 000 տարվա հնություն ունեցող մի մեծ բնակատեղի։ Բացվել են ուղիղ, լայն փողոցներ և ուղղանկյուն ու բոլորաձև տների թաղամասեր։ Գիտնականները գտել են լավ պահպանված քարե պատեր ունեցող մի կացարան։ Այնտեղ գտնվել են խոշոր եղջերավոր կենդանիների մշակված եղջյուրներ, զանազան գործիքներ՝ պատրաստված բազալտից և օբսիդիանից և այլն։

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՐ ՍՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ.— Եգիպտոսից Հայրենիք վերադարձած Շաքե Սերունյանը հասավ իր 25 տարվա անխոնջ աշխատանքի արդյունքին։ 10 տարի առաջ երբ նա Հայրենիք վերադարձավ իր հետ բերեց «Հայկական ինքնուրույն սղագրություն» անավարտ աշխատության ձեռագիրը։ Մայր Հայրենիքում լայն հնարավորություններ ստեղծվեցին Սերունյանի համար և նա կարճ ժամանակամիջոցում ավարտեց իր աշխատանքը։

Հայկական ՍՍՌ Լուսավորության մինիստրությունը Ուսուցիչների կատարելագործման ինստիտուտում բացեց սղագիրների ուսմամբ դասընթաց։ Սերունյանի սղագրության մեթոդը հիանալի արդյունք է տվել։ Այդ մեթոդով կարելի է մեկ էջի վրա գրել 1 500—1 800 բառ։

«ՄԱՐՏԻՐՈՍ ՂՐԻՄԵՑԻ».— Հայաստանի Գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ լույս է տեսել Արտաշես Մարտիրոսյանի «Մարտիրոս Ղրիմեցի» մենագրությունը։

Ղրիմեցու գերը մեծ է հայ ժողովրդի մշակույթի պատմության մեջ։ Նա ապրել է ԺԷ դարում և եղել է տաղանդաշատ-երգիծաբան, գրիչ, մատենագիր և բանաստեղծ։

ԽԱՉԱՏՈՒՐ ԿԵՉԱՌԵՑԻ.— Հայ մատենագրության համար նշանակալի ներդրում է Ե. Ավդալբեկյանի «Խաչատուր Կեչառեցի» մենագրությունը, որը այդ հեղինակի մասին ցարդ հրատարակված առաջին ամբողջական աշխատությունն է։

Գրքում առանձին բաժիններով տրված են Խ. Կեչառեցու կյանքն ու գործունեությունը, բնագրերի համեմատական հրատարակությունը և ծանոթություններ։

Հեղինակը, ելնելով փաստացի տվյալներից, ճշտում է Խաչատուր Կեչառեցու անձնավորությունը, կյանքն ու գործունեությունը, այդ առթիվ կատարելով մինչ այժմ այդ մասին եղած դրականության վերլուծումը, ճշտումն ու դատումը։

Բնագրերը տրված են Հայաստանի Գիտական մատենադարանում և արդեն այլուր հրատարակված նյութերի մանրազնին համեմատությամբ, նշելով տարբերությունները, այլ ընթերցումները և այն գրությունները, որոնք անհարազատ են բուն Խաչատուր Կեչառեցուն։

ԼՎՈՎԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԷՋԵՐԻՑ.— Լվովը Ուկրաինայի խոշոր ու պատմական քաղաքներից է, որ սերտորեն կապված է հայ գաղթականության պատմության հետ։

Մոտ 700 տարվա ճանապարհ անցած այդ քաղաքը ունի 700 փողոց, որոնցից մեկը կոչվում է «Հայկական» (Վիրմենսկա)։ Այստեղ էր գտնվում հայկական գաղութը իր եկեղեցիով և վաճառատներով։ Առաջին եկեղեցին փայտաշեն է եղել և կառուցվել 1183 թվականին, հետագայում, 1363—1370 թվականներին քարաշեն, որն ունեցել է իր դպրոցը։

Փաստերը ցույց են տալիս, որ Լվովում եղել է նաև հայկական տպարան։ Գրավոր տեղեկությունները պահվում են պետական արխիվում, եկեղեցին պահպանվում է և հանդիսանում ճարտարապետական յուրահատուկ հուշարձան, խորհրդանիշ ուկրաինական-հայկական բարեկամության։

ԿՈՄՊՈԶԻՏՈՐ ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔՅԱՆ.— Հոկտեմբերի 1-ին լրացավ Ռ. Մելիքյանի ծննդյան 75-ամյակը։ Մամուլը, երաժշտասեր հասարակությունը սիրով նշեցին այդ սիրելի տարեթիվը։

Ռ. Մելիքյանի ստեղծագործության երգային շրջանակը, հատկապես՝ «Զմրուխտ»-ն, «Զառ-վառ»-ը ամենատարածված և սիրված մասն է տաղանդավոր կոմպոզիտորի աշխատանքներում, որտեղ հանդես են գալիս տիպիկ, թարմ և ազգային կոլորիտով կերպարներ։ Լիրիկական խոր ապրումներ, արտահայտության բազմազանություն, անմիջական ու առինքնող զգայականություն, անկեղծություն, հիմնական տարրերն են այդ երգերի։

Ռ. Մելիքյանը գրել է բազմաթիվ երգեր, կազմել է երգային ժողովածուներ և հայ երաժշտական ֆոլկլորի մշակությամբ է զբաղվել։ Հասցրել է երաժշտագետների սերունդներ։ Նա երևանի Պետական օպերայի հիմնադիրներից մեկն է եղել և առաջին գեղարվեստական ղեկավարը։

Թեև Ռոմանոս Մելիքյանը վախճանվեց իր ուժերի ծաղկման շրջանում, 1935 թվականին, բայց նրա ստեղծագործությունը շարունակում է մնալ թարմ և սիրելի ամեն մի հայի համար։

Ս. Ս.

ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԵՄԱՎՈՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԿԱՐԱՔԵՀՅԱՆԻ
(1887—1958)

Օգոստոսի 10-ին, երկարատև և ծանր հիվանդությունից հետո, Տուապսե քաղաքում ի Տեր հանգչավ արժանապատիվ Տ. Եմավոն ավագ քահանա Կարաքեհյանը։

Հանգուցյալը ծնվել էր Կուբանի (Կրասնոդարի երկրամաս) Խոյթա գյուղում 1887 թվականին, Թուրքիայից գաղթած գյուղացու ընտանիքում։ Սկզբնական կրթությունն ստացել էր տեղի ծխական դպրոցում և ապա վերջացրել Տուապսեի քաղաքային դպրոցը։ Որոշ ժամանակ իրենց գյուղի ծխական դրպրոցում ուսուցչություն անելուց հետո, 1913 թվականին Գարտիզակում (Նիկոմիդիա) հանրածանոթ Տ. Ստեփանոս արքեպիսկոպոս Հովակիմյանից ձեռնադրվում է քահանա։

Այդ օրվանից սկսած անխոնջ հովվի առաջ գործունեության լայն ասպարեզ է բացվում։ Սկզբում նա քահանայագործում է Տուապսեի և Աբխազիայի հայաբնակ շրջաններում, ապա Գագրի, Պելինկովո, Կավալեսկայա և Շաֆրոնովո գյուղերում։ 1936 թվականին նա տեղափոխվում է Սուխումի և սկսում հովվել տեղի հայությունը մինչև իր մահը։

Այս տարի լրացավ նրա քահանայության 45 տարին։ Նա միշտ էլ սիրված է եղել իր սիրելի հավատացյալ հոտից և գնահատվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կողմից։

Ի տրիտուր իր երկարամյա բարվոք ու նվիրված աշխատանքի, նա արժանացել է ծաղկյա փիլոնի և քահանայական լանջախաչի՝ երջանկահիշատակ Տ. Խորեն Ա Մուրադբեկյան կաթողիկոսի կողմից, իսկ 1948 թվականին երջանկահիշատակ Տ. Տ. Գևորգ Ջ կաթողիկոսի կողմից ստացել է ավագ քահանայության պատիվ։

Հանգուցյալը մինչև իր մահը անխոնջ կերպով աշխատում էր և օգտակար էր հանդիսանում իր հոտին և Հայ եկեղեցուն՝ Սուխումի շրջանի ամենահեռավոր գյուղերն անգամ հասցնելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ձայնը և «Էջմիածին» ամսագիրը։ Նա սիրված էր իր հոտից ըստ ամենայնի և իր մահկանացուն կնքեց իր պարտքը կատարած իր ժողովրդի և Մայրենի եկեղեցու հանդեպ։

Անձնվեր հովվի օծման և թաղման արարողությունները ըստ արժանվույն կատարելու համար, վրահայոց թեմի առաջնորդ դերապշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանի կարգադրությամբ, Տուապսե էին մեկնել թեմի քահանաներից Տ. Միքայել ավագ քահանա Սամվելյանը և Զարեհ քահանա Բասմաջյանը։

Հանգուցյալը թաղվեց Կրասնոդարի մարզի Խոյթա գյուղում, իր իսկ ծննդավայրում, իր պապերի կողքին։

Հավիտենական հանգի՛ստ իր հոգուն։

«Ցիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»։

ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՀՈՒՍԻԿ ՔԱՀԱՆԱ ՄԻՐԶՈՅԱՆԻ
(1876—1958)

Սեպտեմբերի 8-ին Ախալցիխեում վախճանվեց արժանապատիվ Տ. Հուսիկ քահանա Միրզոյանը, երկարատև և ծանր հիվանդությունից հետո։

Հանգուցյալը ծնվել է 1876 թվականին Վանի շրջանի Կենդանյաց գյուղում և իր կրթությունն ստացել նախ իր ծննդավայրում և ապա Վարագա Ս. Նշան վանքում։

1902 թվականին Վանի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցում քահանա է ձեռնադրվել իր գյուղի վրա և պաշտոնավարել է մինչև 1917 թվականը։

1920—1922 թվականներին քահանայագործել է Լենինականում և ապա Ախալցիխեում՝ մինչև իր մահը։

Հանգուցյալը իր հոտից սիրված և հարգված հովիվ է եղել և նվիրումով ծառայել իր ժողովրդին և եկեղեցուն։

Հավիտենական հանգի՛ստ իր հոգուն։

«Ցիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»։

ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՎԱՀԱՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՄԿՐՏՉՅԱՆԻ
(1873—1958)

Ուքսունհինգամյա հասակում, 1958 թվականի հուլիսի 22-ին, երկարատև հիվանդությունից հետո, ի Տեր հանգյավ Կրասնոդար քաղաքի ծխատեր արժանահիշատակ Տ. Վահան ավագ քահանա Մկրտչյանը։

Հանգուցյալը ծնվել էր 1873 թվականին, Վանի շրջանի Մխելներ գյուղում, աբհեստավորի ընտանիքում և սկզբնական կրթություն ստացել՝ նախ ծննդավայրի ծխական և ապա Վանի Խրիմյան Հայրիկի անվան Վարագա վանքի դպրոցում 1889—1896 թվականներին։ Երկար տարիներ պարապել է ուսուցչությամբ։ 1909 թվականին քահանա է ձեռնադրվել Աղթամարի վանքում իր գյուղի վրա և քահանայագործել է մինչև 1914 թվականը։

Վանի գաղթից հետո հաստատվում է Թիֆլիս և ապա Կրասնոդար, որտեղ քահանայագործում է մինչև իր մահը։

Հանգուցյալը համեստ, պատվավոր և պարտաճանաչ հոգևորական էր, նվիրված իր գործին և իր ժողովրդին։

Հանգուցյալը իր բազմամյա պաշտոնավարության ընթացքում պարգևատրվել և դնահատվել է իր բարվոք ծառայության համար։ Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, վերջին տարիներին հանգուցյալ Տ. Վահան քահանան իր ծերության պատճառով հանգստյան թոշակ էր ստանում։

Հավիտենական հանգիստ իր հոգուն։

«Ցիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»։

ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԳԱՐԵԳԻՆ ՔԱՀԱՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ
(1901—1958)

Հոկտեմբերի 13-ին Կրասնոդար քաղաքում վաճխանվեց Տ. Գարեգին քահանա Խաչատրյանը։

Հանգուցյալը ծնվել էր 1901 թվականին Կիրովաբադում (Գանձակում)։ Ստացել էր միջնակարգ և բարձրագույն կրթություն և երկար տարիներ զբաղվել էր ուսուցչությամբ, միշտ հաճախելով Բաքվի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին։

1958 թվականին գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսի ձեռամբ քահանա է ձեռնադրվում, և մի որոշ ժամանակ պաշտոնավարում է Կիրովաբադում և ապա Կրասնոդարում, մինչև իր հանկարծամահ լինելը։

Հանգուցյալը զարգացած, գործունյա և հավատավոր եկեղեցական էր, պարգևատրված ծաղկյա փիլոնով և քահանայական լանջախաչով, իր բարվոք ծառայության համար։

Հավիտենական հանգիստ իր հոգուն։

«Ցիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»։

ՑԱՆԿ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐՈՒՄ 1958 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԻ

Ա. ԳԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Բշեի Սուրբ Աստվածածին եկեղեցու վերաշինության առթիվ, է 3:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Կոստանդնուպոլսի Սուրբ Խաչ դպրեվանքց ուսանողության, Ա 8:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ճեռագիրը Սպրինգֆիլդի ճայոց նորակառույց եկեղեցու օծման առթիվ, է 8:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ շնորհավորական ճեռագիրը Իրանի Շահինշահ Նորին Վսեմություն Մուհամեդ Ռիզա Փեհլևիին Նավրուզի (պարսկական նոր տարվա) առթիվ և Վեհափառ Հայրապետի առնչով ստացված շնորհակալական պատասխանը, Դ 7:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ շնորհավորական ճեռագիրը Միացյալ Արաբական Հանրապետության Նախագահ Նորին Գերազանցություն Գամալ Աբդել Նասերին և Վեհափառ Հայրապետի առնչով ստացված պատասխանը, Դ 6:

ՎԱՉԳԵՆ Ա ՇԱՐԱԳՈՒՆՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ— Կոչ Լիբանանի ճայ ժողովուրդին, ԺԲ 10:

Ամանորի առթիվ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի և պետական ազնվավարությունների միջև փոխանակված ողջույնի ճեռագրերը, Ա 9:

Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի և Եվրոպական Արքունիքների ու առաջնորդարանների միջև փոխանակված ողջույնի ճեռագրերն ու գրությունները, Ա 17:

Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ի և ֆույր եկեղեցիների ճոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի ճեռագրերն ու գրությունները, Ա 12:

Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի ծննդյան ճիսնամյակի և Գանձակայության երրորդ տարեդարձի առթիվ ստացված շնորհավորական ճեռագրեր, Ժ—ԺԱ 8:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և Անթիասի ու Համայն Արևելքի ճորքեպիսկոպոսի միջև փոխանակված ճեռագրերը, ԺԲ 9:

Գերագույն Հոգևոր Խորհրդի ճամակը Թեհրանի ճայոց թեմական խորհրդին և թեմական պատգամավորական ժողովին, Զ 9:

Գերագույն Հոգևոր Խորհրդի պատասխանը Ատրպատականի ճայոց թեմական խորհրդի ճամակին, Թ 7:

Թեհրանի ճայոց թեմական խորհրդի ճամակը Վեհափառ Հայրապետին և Նորին Սուրբ Օծության պատասխան ճեռագիրը, Զ 7:

Հայաստանում սովետական կարգերի ճաստատման 38-րդ տարեդարձի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ճղած շնորհավորական ճեռագրերը և ստացված պատասխանները, ԺԲ 7:

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի Հառասունմեկերորդ տարեդարձի առթիվ Վեհափառ Հայրապետի ճղած շնորհավորական ճեռագրերը և ստացված պատասխանները, Ժ—ԺԱ 8:

Պաշտոնական ճաղորդագրություն, Զ 17:

Սան-Ֆրանցիսկոյի ճայոց Սուրբ Հովճաննես եկեղեցու օծման և Վիեննայի ճայկական մատուռի ճիմնարկության 45-ամյակի կապակցությամբ փոխանակված ճեռագրերը, Ա 19:

Փրկչի ճրաշափառ և Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի առնչով ստացված շնորհավորական ճեռագրեր և գրություններ, Ե 8:

Փրկչի ճրաշափառ և Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի շնորհավորական գրությունը Եվրոպական Արքունիքների գլխակալներին և բոլոր առաջնորդներին, Դ 9:

Փրկչի ճրաշափառ և Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի շնորհավորական գրությունը ֆույր եկեղեցիների ճոգևոր պետերին, Դ 8:

Բ. ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

«Ցերկիր խաղաղութիւն, ի մարդիկ ճաճոյութիւն», Ա 6:

Խորնուրդ Վարդանանց, Բ—Գ 8:

Հարության տեսիլքը, Դ 8:

Հունճաղ բեմը, Ե 8:

Ռուս Գրիգորյով եկեղեցու Պատրիարքության վերանաստատման Բառասնամյակը, Զ 8:

Հայ եկեղեցու երկու օրացույցը, է 6:

Մասնավոր և ծայրագույն վարդապետական գավազանի իշխանության ավչության կարգը, Ը 8:

Սուրբ էջմիածնի Հոգևոր Ճեմարանը, Թ 8:

Գանձ ու Գանձակալը, Ժ—ԺԱ 8:

Հայաստանյայց Առաքելական եկեղեցու Սանմանագրության նախագիծը, ԺԲ 8:

Գ. ԿՐՈՆԱ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԱԲՐՍՀԱՄՅԱՆ ՀԱՅԿԱԶՈՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ— Առավածային խոստացությունը, Բ—Գ 11:— Լուսավորչի տեսիլքը, Զ 50:
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ողջույնի խոսքը Ռուս Պրավոսլավ եկեղեցու Պատրիարքությանը վերանոր հառատնավյակի առթիվ, Զ 31:
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ քարոզը Փրկչի ճրագալույցի և Սուրբ Հարության տոնի առթիվ, Դ 10:
ԱՆԹԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ— Նորին Սուրբ Ծննդյան Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի ուղերձը Մոսկվա՝ Ռուս Պրավոսլավ եկեղեցու Պատրիարքությանը վերանորոգման հառատնավյակի ճանդիսություններին մասնակցելու համար, Զ 22:— Ռումինիայի Տ. Հուստինիան և Բուլգարիայի Տ. Կիրիլ Պատրիարքները Մայր Աթոռ Ս. միածնում, Զ 23:
Ա. Վ.— Դաստիարակիչ կինը, Ը 16:
Գ. Գ.— Ճշմարտասիրություններ, Բ—Դ 6:
ԳՈՒՇԱԿՅԱՆ ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ— «Մայր օրհնությամբ բերկրեալ», Ը 14:
ԴՈՒՐՅԱՆ ԵՂԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏ— Սուրբ Սահակ և Սուրբ Մեսրոպ, է 11:
Հ. Ա.— Ճշմարտության Հոգին, ե 12:
ՂԱԶԱՐՅԱՆ ԻՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ— Խոշոր կամ փոքրիկ բարոյական տժիքը, Թ 9:
ՆՈՏԱՐ— Վերափոխման տոնին առթիվ քանի մը նկատողություններ, Ը 17:
ՍԱՆԹՈՒՐՅԱՆ ՀՈՒՍԻԿ ԱՐԵՂԱ— Դավիթ մարգարե, Ժ 12:
Մեկ ի Հայաստանյայց եկեղեցիին թե՛ դավանաբանով, թե՛ նվիրապետությամբ, Ա 21:
«Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս», Ա 29:

Դ. ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ, ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

Գովեա, Երուսաղէմ, զՏէր...., Դ 16:
Հոգեգալուստ (Գործք Առաքելոց Բ 1—21), ե 18:
Շարականք Հոգեգալստեան, ե 17:
Շարական Սրբոց Թարգմանչաց, է 9:
Շարականք Սուրբ Ասատուածածնի, Ը 12:
Շարական՝ Սուրբ Զատկի, Դ 15:
«Վասն զատուգան տալոյ», «Վասն վարդապետաց կոչմանց» (Գրիգոր Տաթևացի, «Քարոզգիրք», Ամիրան հատոր), Ը 6:
«Վասն յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (Յովհ. Ի 1—18), Դ 14:

Ե. ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴՈՒՄ

Քաղվածքներ Գերագույն Հոգևոր խորհրդի նիստերի արձանագրություններից, ե 18, Ը 22, ԺԲ 28:

Զ. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ հոգևոր գործունեության գեղույցը, Ժ—ԺԱ 11:
ԱՆԹԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ— Վեհափառ Հայրապետի ծննդյան հիսնամյակին և գահակալության երրորդ տարեդարձին նվիրված հոբելյանական ճանդիսություններ Մայր Աթոռում, Ժ—ԺԱ 31:
Եպիսկոպոսական ժողով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ժ—ԺԱ 39:
Եպիսկոպոսական ճանդիսավոր սուրբ պատարագ Մայր Տաճարում և շնորհավորություններ Վեհարանի Մաղկյա դահլիճում, Ժ—ԺԱ 39:
Հայաստանի հնագրական գործակալության բդեշի տեսակցությունը Վեհափառ Հայրապետի հետ, ե 1:
Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Սահմանադրության նախագիծ, ԺԲ 16:
Հայրապետական բարձր գնահատություն, ԺԲ 39:
Հայրապետական ճանդիսավոր պատարագ Մայր Տաճարում Սուրբ Էջմիածնի տոնին, է 15:
Հայրապետական ճանդիսավոր պատարագ և քարոզ Մայր Տաճարում Սուրբ Հարության տոնի առթիվ և ընդունելություն Վեհարանում, ե 20:
Հայրապետական ճանդիսավոր պատարագ և քարոզ Մայր Տաճարում և Լուսավորչի ջրհորի տվչություն Մաղկյա դահլիճում, Ժ—ԺԱ 31:
Հայրապետական ճանդիսավոր պատարագ և քարոզ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում Քրիստոսի հրաշափառ և Սուրբ Մեսրոպյան տոնի առթիվ, Ա 25:
Հայրապետական ճանդիսավոր սուրբ պատարագ Մայր Տաճարում Հոգեգալստյան տոնի օրը, Զ 48:
Հոբելյանական հաշվեկշիռ, Ժ—ԺԱ 51:
Մայր Աթոռի բարեբար Գալուստ Կյուլպենկյանի կտակի գործադրությունը, է 19:
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 1957 թվականի տարեկան հաշվեկշիռը, Դ 18:
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի 1958 թվականի եկամուտների ու ծախսերի նախահաշիվը, Դ 22:
Մասնավոր վարդապետական գավազանի իշխանության տվչություն, Ժ—ԺԱ 69:
Նպաստի բաշխումը և բաշխումներ Մայր Աթոռում, է 22:
Պաշտոնական հայտարարություն, Թ 6:
Վարդանանց տոնը և Վեհափառ Հայրապետի տեվանակոչության հանդեսը Մայր Աթոռում, Բ—Գ 14:
ՄԱՏՈՒՅՑ ԱԹՈՌՈՒՄ (լուրեր Մայր Աթոռից), Ա 31, Բ—Գ 21, Դ 16, ե 22, Զ 48, է 19, Ը 25, Թ 19, ԺԲ 30:

Է. ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՆԱՑԻԿ— Հայ ժողովրդական երգը. է 32:
ԱՆԹԱԲՅԱՆ ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ— Ուսանողական զրուցարան դեպի ճայրենի գավառներն ու լեռնային Ղարաբաղ. է 35:
ՄԵՏԵԱՆԱՆՑՅԱՆ ԽՈՐԻՆ— Զոն Վենափտան Հայրապետին. ԺԱ—ԺԱ 90:
ՊԱԼՅԱՆ ՆՈՒՊԱՐ— Զոն Վենափտան Հայրապետին. ԺԱ—ԺԱ 90:
ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ— Պապ. է 34:
ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ ՍԱՐԿԱՎԱԳ— Հայաստանեայց Եկեղեցին և նրա գերը հայ ժողովրդի հոգևոր և մշակութային կյանքում, է 29:
Ամավերջի հանդիսությունները Հոգևոր Ճեմարանում. Ա 83:
Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը հայտարարում է ուսանողների ընդունելություն 1958—1959 ուսումնական տարեշրջանի համար, Ե 83, Զ 83, Ը 83:
Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի վերաբացումը. Թ 16:

Ը. ՀԱՅՐԵՆԻ ԹԵՄԵՐՈՒՄ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՀԱՅԿԱԶՈՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ— Զատկի տոնի առթիվ մեր այցելությունը Բաքվի հայ հավատացյալներուն. Ե 25:
ԱՆԹԱԲՅԱՆ ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ— Նարեկ Սուրբ Օծությունն Ց. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի այցելությունը Մուրնու Սուրբ Գևորգ վանքին, Բ—Գ 17:
ՊԱԼՅԱՆ ԽՈՐԻՆ ՍԱՐԿԱՎԱԳ— Ստեփանավանի հայոց նորաբաց Սուրբ Սարգիս եկեղեցում, Ե 30:
ՊՈՂՈՍՅԱՆ ՀԱԿՈԲ ՍԱՐԿԱՎԱԳ— Բասարգեչարի Սուրբ Աստվածածին եկեղեցու վերաբացումը. ԺԲ 34:
Ներքին թեմերի. հավատացյալ ժողովրդի բողոքը Աերքիլասի ոճանգությունների դեմ. Զ 18:

Թ. ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐԱՀԱՄՅԱՆ Ա. Գ. (ՊՐՈՖ. ԴՈԿՏ.)— Հերմեսի փիլիսոփայական աշխատության Եին հայերեն թարգմանությունը, Ա 46:
ԱՎԳԱԼԵԲԳՅԱՆ Թ.— Զվարթնոցի ցուցը. Ա 54, Բ—Գ 46, Դ 31:
ԱՎԵՏԻՍՅԱՆ Ա— Գլաձորի դպրոցի մեծ մանրանկարիչ Թորոս Տարոնացին. Դ 58, Ե 45, է 58:
ԲԱԼԲԻԿՅԱՆ Մ. Հ.— Հայկական մատաղ Թռակիությունը, Ե 57:
ԲԵՀԲՈՒԴՅԱՆ ՍԱՆԴՐՈ ՍԱՐԿԱՎԱԳ— Գեղանկարիչ Մարգարիտ Ալիխանյանց. Թ 39:
ԳԱԼԱՄԴԱՐՅԱՆ ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ— Մեսրոպ արհիպիսկոպոս Սմբատյան. Բ—Գ 30:— Էջեր Սուրբ Էջմիածնի տպարանի պատմությունից, է 46. Թ 30, ԺԲ 45:
ԳԱՍՊԱՐՅԱՆ Մ.— Հայրենասիր մանկավարժուհի Գայանե Հովհաննիսյան-Մատակյան, Ը 50:
ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Հ.— Սառանեի վանքը, Ը 41, Թ 47, ԺԲ 56:
ԵՐԵՄՅԱՆ Ա.— Միջնադարի հայ երաժշտության անհայտ դրոշակակիրները, Բ—Գ 59:— Մանրանկարիչ Աստվածատուր արեղա, Ը 56:
ԹԱՀՄԻԶՅԱՆ Ն.— Մակար եկմալյան, Բ—Գ 52, Դ 59, Ե 50:
ՀԱԿՈԲՅԱՆ Գ.— Ներսես Շնորհալին և իր ժամանակաշրջանը, Ա 59, Բ—Գ 32, Դ 39:— Ներսես Շնորհալու «Աղեղայ»-ի շարականները, «Ասատուտ լուսոյ» և «Աշխարհ ամենայն» երգերը, Ե 40:— Ներսես Շնորհալու Հոգեգալստյան, Վարդավառի և Վերափոխման շարականները, Զ 58:
ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ Լ. (ՊՐՈՖ.-ԴՈԿՏ.)— Էջմիածնի Մայր Տաճարը Շարդենի օրոք 1673 թվականին, Ե 36:— Հակոբ Շահան-Ջրպետյան և նրա նորատեսյան ֆրանսերեն անտիպ երկասիրությունը, Թ 39:
ՄԵՆԹԱՐՅԱՆ Հ.— Առողջություն, Թ 54:
ՄԱՐԳԱՐՅԱՆ Գ.— Վարդանեց Ցիշատակին. Բ—Գ 41:— Մայրավանք, Դ 45:
ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ Ե. (ՊՐՈՖ.-ԴՈԿՏ.)— Հառիճա վանքի արձանագրությունների առթիվ, Ա 41:— Դարձյալ Հառիճա վանքի արձանագրությունները և Մինաս Բաճանա Հարությունի Վանանդեցը, ԺԲ 52:
ՑԻՐԱՑՅԱՆ Ա.— Հայկական գաղթականություններ և եկեղեցիներ Իտալիայում ԺԳ—ԺԴ դարերում, է 59, Ը 38:

Ժ. ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ, ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊՈՅՈՒՐՅԱՆ Հ. ՄԿՐՏԻՉ Վ.— Դանիել Վարուժան. Ը 35:
ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ Գ.— Հիշողություններ Կոմիտաս վարդապետի մասին, Ը 47:
Գերաջնորդ Ց. Գրիգոր եպիսկոպոս Ճերեճյան, ԺԱ—ԺԱ 102:
Գերաջնորդ Ց. Զգոն եպիսկոպոս Տեր-Հակոբյան, ԺԱ—ԺԱ 100:
Գերապատիվ Ց. Վարդան եպիսկոպոս Տեր-Սահակյան, Բ—Գ 28:

ԺԱ. ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

ՍԱՆԴՐՈ ՍԱՐԿԱՎԱԳ— Համառոտ լուրեր Մայր Հայրենիքից, է 38, Ը 27, Թ 62, ԺԲ 83:

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի այցելությունը Հայկական ՍՍՌ Միջիապետության Սովետի Նախագահ Պարոն Անաստաս Միկոյանին, Ժ—ԺԱ 93:

Պաշտոնական ընդունելություն ի պատիվ Ցորելյան Վեհափառ Հայրապետին՝ Հայկական ՍՍՌ Միջիապետության Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի կողմից, Ժ— ԺԱ 92:

Պաշտոնական ընդունելություն նոր տարվա առթիվ ի պատիվ Վեհափառ Հայրապետին, Ա 90:

ԺԲ. ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ— Սուրբ Խաչ դպրեվանքի սահմանում՝ ընդհանրապես և լիսեկանենեանց՝ մասնավորապես, Զ 52:

Դ. Պ.— Սուրբ Էջմիածին և Ամենայն Հայոց Հայրապետ, Զ 51:

Գ. Ե. Տ.—Սև մոմը, է 43:

ԴՅՈՒՋԵԼՅԱՆ Ա.— Կալկաթայի հայոց Ս. Նազարեթ եկեղեցու 250-ամյակի տոնակատարությունը, Ա 30:

ԹՈՒՄԱՅԱՆ ՊԱՍԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ— Լամբերի ժողովը, ԺԲ 86:

ՄԱՐՏԻԿՅԱՆ ԺՈՐԱՅՐ ՎԱՐԴԱՊԵՏ.— Հովվական այցելություն ռումինահայ և բուլղարահայ բեմերին, Ը 80, Թ 19:

ՇԻՐՎԱՆՅԱՆ ԱՐԻՍ ԱԲԵՂԱ— Երուսաղեմի Սուրբ Հարության տաճարին՝ Բրիտանության մեծ սրբավայրին նորոգությունը կսկսի օրերս, Զ 53:

ՊՈՅՈՒՐՅԱՆ Հ. Մ.— Վեհափառ Վազգեն Ա Կարողիկոսի այցը Սուրբ Ղազար, է 46:

Աչոռ պատմագրյանի հոբելյանական-կրթական գործունեության հառասնամյա նոր բեկումը Փարիզում, ԺԲ 43:

Երևանյան գաղութը, Ա 39:

Թուրքիայի հայոց Պատրիարքության Սուրբ Խաչ դպրեվանքի նորակերտ ուսումնարանի բացումը, Բ—Գ 27:

Լոս-Անջելսի հայոց Սուրբ Հակոբ եկեղեցու օծումը և հանդեսը, Դ 28:

Հայոց Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում վասն խաղաղության ամենայն աշխարհի, Ը 11:

ԺԳ. ՄԱՀԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Հանգիստ արժանապատիվ Տ. Աբրահամ քահանա Տեր-Աբրահամյանի, ե 62:

Հանգիստ արժանապատիվ Տ. Գարեգին քահանա Խաչատրյանի, ԺԲ 67:

Հանգիստ արժանապատիվ Տ. Հուսիկ քահանա Միրզոյանի, ԺԲ 66:

Հանգիստ արժանապատիվ Տ. Շմավոն սարկավագ քահանա Կարամենյանի, ԺՈ 86:

Հանգիստ արժանապատիվ Տ. Վանան սարկավագ քահանա Մկրտչյանի, ԺԲ 67:

Հանգիստ նոգեշնորհ Տ. Նդիշ ծայրագույն վարդապետ Ուրուեյանի, Ը 82:

ԺԵ. ԳՐԱԽՈՍԱԿԱՆՆԵՐ

Ա. Խ.— Առաքել Սյունեցի. «Դերախտագիրք», է 82:— Վանո Խոջաթեգյան, Ը 80: